ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
Բ

ՀՐԱՄԱՆԱՒ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

VAHÉ KATCHA

SE RÉVEILLER DEMON

Roman

Traduit du français et preface par

PARKEV CHAHBAZIAN

EDITTIONS DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
St. ETCHMIADZINE – 2008

ՎԱՀԵ ՔԱՉԱ

ԴԵՎԸ ԱՐԹՆԱՑԱՎ

Վեպ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2008

ՀՏԴ
ԳՄԴ
Ք –

Ֆրանսերենից թարգմանեց Պարգև Շահբազյանը

ՎԱՀԵ ՔԱՉԱ
Ք – Դևը արթնացավ: – Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007.– 148 էջ:

ԳՄԴ

Տպագրվում է մեկենասությամբ՝

.....

ISBN

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008 թ.

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայազգի ֆրանսագիր գրող Վահե Քաչան (Խաչատուրյան) ժամանակակից ֆրանսիական գրականության գնահատված և սիրված դեմքերից է: Գրական ասպարեզում իր առաջին քայլերից իսկ նա իր կենդանի ու աշխույժ լեզվով և մանավանդ կնճռոտ, սուր իրավիճակներով հարուստ բովանդակություն ունեցող իր վեպերով կարողացավ գրավել ոչ միայն ֆրանսիացի ընթերցողների մի լայն շրջանակի, այլև հեղինակավոր քննադատների և գրականագետների ուշադրությունը, որոնք դրվատալից ջերմ հոդվածներով ու գրախոսականներով ողջունեցին նրա մուտքը ֆրանսիական գրականություն: Վահե Քաչան պատկանում է գրողների այն տեսակին, որոնք սրատես աչքերով խուզարկում, մի տեսակ «լրտեսում» են իրենց շուրջը եռացող ամենօրյա կյանքը, մտնում այդ կյանքի խորքերը, իրենց երևակայության ուժով այնտեղից դուրս են բերում անսովոր դեպքեր, ցնցող իրավիճակներ՝ երբեմն ընկնելով նաև անհեթեթության մեջ, որը, սակայն, երբեք զուրկ չէ հետաքրքրությունից: Նրա վեպերը մեծ մասամբ արդյունք են ապրած փորձառությունների, սուր դիտողականության, նաև մարդկային հոգու լայն ճանաչման:

Անվանի գրողը ծնվել է 1928 թվականին Դամասկոսում՝ Ադանայից (Կիլիկիա) գաղթած ձեռներեց հայ գործարարի ընտանիքում: Նախնական կրթությունն ստանում է իր ծննդավայրի հայկական վարժարաններից մեկում: Մինչև 15 տարեկան հասակը Դամասկոսում և ապա Հոմս քաղաքում մնալուց հետո ընտանյոք փոխադրվում է Բեյրութ և ուսումը շարունակում «Ֆրեր– Մարիստների» ֆրանսիական քոլեջում: Համաշխարհային երկրորդ պատերազմից անմիջապես հետո մեկնում է Ֆրանսիա, Էքս– Լե– Բեն քաղաքում բնակվող իր ազգականների մոտ և ուսումը շարունակում մինչև բակալավրի աստիճան: Այնուհետև գնում է Փարիզ՝ հետևելու Կինեմատոգրաֆիայի բարձրագույն դպրոցի դասընթացներին: Այդ շրջանում նա սիրահարվում է մի աղջկա: Այդ սիրահարությունից ծնվում է նրա «Կիրակնօրյա ծխուկներ» վեպը, որ նա համարձակորեն ուղարկում է Ֆրանսիայի մեծագույն հրատարակչություններից մեկին՝ «Գալիմար»–ին, հրատարակության առաջարկով: Երեք ամիս անհամբերությամբ սպասե-

լուց հետո ստանում է դրական պատասխան: «Զարմանքս մեծ եղավ, – ասում է նա իր տված հարցազրույցներից մեկի ժամանակ, – երբ ստացա այդ պատասխանը: Կյանքիս մեծագույն և կարևորագույն օրն է դա: Գնացի և ստորագրեցի պայմանագիրը: Ի՞նչ նշանակություն ուներ, թե գիրքս տպագրվելու էր 5000 օրինակ տպաքանակով, որի համար ինձ վճարվելու էր միայն 1000 ֆրանկ: Կարևորն ինձ համար տպագրվելն էր, այն էլ «Գալիմար»–ի նման մի հրատարակչության կողմից: Երջանիկ էի ու հպարտ»:

Այնուհետև Քաչան վերադառնում է Բեյրութ և որոշ ժամանակ զբաղվում հրապարակագրությամբ՝ իր ապրուստն ապահովելու համար: Որպես լրագրող աշխատակցում է ֆրանսերեն լեզվով հրատարակվող տեղի «Լը Սուար» օրաթերթին: Այս թերթում լույս է տեսնում նրա խնամված մեկ հոդվածը ամերիկահայ աշխարհահռչակ կինոբեմադրիչ Ռուբեն Մամուլյանի մասին:

Բեյրութում երկու տարի մնալուց հետո Քաչան կրկին մեկնում է Փարիզ՝ իր հետ տանելով «Ակն ընդ ական» վերնագրով իր երկրորդ գրքի ձեռագիրը, որը շուտով հանձնում է հրատարակության: Այս գիրքը նույնպես մեծ ընդունելություն է գտնում, բարձրանում է կինոէկրան և 1957 թվականին արժանանում Ռիվարոլի մրցանակին: Հիշատակված այս երկու գործերից հետո տասնյակ ու տասնյակ տարիներ նա գրում և հրատարակում է ավելի քան 30 անուն վեպ (որոնցից շատերը վերածվել են կինոժապավենի իր պատրաստած սցենարների հիման վրա)՝ միշտ հետևելով առօրյային և անընդհատ սովորելով դիտել, խորանալ, վերլուծել: Այս մասին մի տեղ նա ասում է. «Հիմնականում գրական այս ժանրն է, որ ես մշակել եմ ու զարգացրել: Ստեղծելով տարբեր բովանդակությամբ գործեր՝ իրականում միշտ կյանքի նույն վեպն է, որ գրում ենք՝ փոխելով նյութը, հերոսներին, գործողության միջավայրը: Իմ գրած բոլոր վեպերի մեջ մի քիչ ես կամ, որովհետև ինձ համար դա դատարկվելու միակ միջոցն է: Ես ինձ միշտ զգացել եմ իմ ասպարեզի մեջ, ունեմ իմ սահմանները, նաև՝ սահմանափակումները, գրում եմ, ինչպես որ մտածում եմ, գրում եմ ըստ իմ կարողությունների»:

Գեղարվեստական գրականությանը զուգընթաց Վահե Քաչան զբաղվել է նույնպես հրապարակագրությամբ՝ իր տաղանդը դրսևորելով նաև որպես լրագրող: Նրա հրապարակագրական հոդվածները գրական յուրահատուկ ստեղծագործություններ են՝ հիմնված կյանքի

ճշմարտացի փաստերի վրա: Դրանց մեջ իրենց սրտահույզ բովանդակությամբ աչքի են ընկնում հատկապես նրա երկու ընդարձակ ռեպորտաժները՝ «Չկա կարեկցանք կույրերի համար» և «Քաղցկեղով հիվանդները», որոնց համար 1962 թ. նրան շնորհվեց «Պելման» մամլո մրցանակը:

Կարդալով Քաչայի գործերը՝ ոմանք առաջին տպավորությամբ դրանք դասում են ոստիկանական և արկածային թեթև ժանրի վեպերի շարքին, որ ընթերցողը կարդում է լարված հետաքրքրությամբ և մեկ շնչով՝ մի շաբաթ հետո մոռանալու համար: Դա մակերեսային և սխալ մոտեցում է: Անշուշտ Վահե Քաչայի վեպերում կան արկածային որոշ տարրեր, ցնցող, դաժան և քստմնելի իրավիճակներ, բայց հեղինակը դրանք ինքնանպատակ չի օգտագործել՝ ընթերցողների մեջ էժան հետաքրքրություն առաջացնելու միտումով: Ընդհակառակը, դրանք մարդկային բարդ և կնճռոտ հոգու դրսևորումներն են, որ հեղինակը մատուցում է մեզ իր խռովահույզ մտքի և երևակայության ուժով ստեղծված յուրօրինակ պատկերներով: Քաչայի վեպերի մթնոլորտը սովորաբար մռայլ է, գործողությունները երբեմն զարգանում և հասնում են այնպիսի ծայրահեղության, որ թվում է, թե դուրս է սովորական տրամաբանությունից: Ըստ նրա՝ կյանքի բնական պայմաններում մարդու բուն էությունը մնում է քողարկված, անճանաչելի: Բայց բավական է, որ նա դեմ հանդիման գա անսպասելի իրավիճակների կամ գտնվի կյանքի և մահվան սահմանագծին՝ մեծ անծանոթի առաջ, և ահա նրա հոգին, նրա թաքնված ներքին աշխարհը ի հայտ է գալիս իր ամբողջ մերկությամբ: Հեղինակի այս համոզման վրա են կառուցված նրա մի շարք վեպերը, որոնցից ամենաբնորոշն է «Գիշատիչների խնջույքը»: Վեպում գործողությունը տեղի է ունենում Փարիզում Համաշխարհային երկրորդ պատերազմի ժամանակ, երբ Ֆրանսիան գրավված էր գերմանացիների կողմից, և քաղաքի բնակչությունն ապրում էր ահ ու սարսափի մեջ: Ահա այս մթնոլորտում է, որ հինգ–վեց ընկերներ մի գիշեր հավաքվում են իրենցից մեկի բնակարանում՝ ճաշի սեղանի շուրջ նշելու նրա ծննդյան տարեդարձը: Սրանք տարբեր տարիքի, տարբեր զբաղումների և դիրքի տեր մարդիկ են, որոնք երկար տարիներից ի վեր հարաբերություն են մշակել միմյանց հետ, մտերմացել, և թվում է, թե իրար նկատմամբ բարի կամեցողությամբ և անկեղծ սիրո զգացումներով տոգորված բարեկամներ են: Ճաշկերույթն անցնում է խաղաղ, զվարթ մթնոլորտում: Տեղի են ունենում բա-

ժակաճառեր, փոխադարձ հաճոյախոսություններ ու սիրազեղ մաղթանքներ: Այս խաղաղությունը հանկարծ վրդովվում է, երբ փողոցում, ուղիղ իրենց շենքի տակ լսվում են ատրճանակի կրակոցներ, ապա փախչող մարդկանց ոտնաձայներ: Ահաբեկված՝ նրանք լռում են մի պահ: Մի քանի րոպե անց նրանց բնակարանի դուռը ուժգին բախվում է, ներս է մտնում գերմանացի մի սպա և հայտնում, որ երկու գերմանացի զինվորներ են սպանվել անհայտ ահաբեկիչների կողմից և, ըստ հայտարարված օրենքի, սպանված զինվորների դիմաց, որպես պատանդ նրանցից պահանջում է երկու հոգի և սահմանում ժամկետ՝ պատանդների ընտրությունը թողնելով նրանց: Այս հայտարարության վրա նրանք մի պահ սահմռկում են, ապա ընտրություն կատարելու հարկադրանքի տակ սարսափի և անասնական խուճապի մատնված՝ ստույգ մահվան սպառնալիքի առջև փոխակերպվում են թշնամիների և դառնում միմյանց նկատմամբ գազանային բնազդով լցված գիշատիչներ:

Հոգեբանական նման մի բարդ իրավիճակ իր աքցանի մեջ է առնում նաև Քաչայի «Դավազանը» վեպի գլխավոր հերոսներին, որոնք, ամեն րոպե գտնվելով փոշիանալու վտանգի առջև, այլափոխվում են այն աստիճան, որ չեն ճանաչում նույնիսկ իրենք իրենց:

Համանման բարդ մի իրավիճակ է պատկերում նույնպես Քաչայի «Դևը արթնացավ» վեպը, որը ներկա թարգմանությամբ մատուցվում է հայ ընթերցողներին:Վեպի գլխավոր գործող անձերից մեկը՝ լուսանկարիչ Վանիեն, թվում է, թե անհատականությամբ թույլ, ինքն իր մեջ քաշված, ոչխարային հեզությամբ ապրող մի մարդ է, որի հոգում, սակայն, կյանքի իրարահաջորդ խորհրդավոր հանգամանքների բերումով մի օր անսպասելիորեն արթնանում է նիրհած անհայտ հրեշը:

Ընդունված է, որ թշնամու հանդեպ մարդկանց մեջ ատելությունը բնական մի զգացում է: Սակայն, ըստ Քաչայի, ատելությունը մարդկանց մեջ հարատևել չի կարող, երբ թշնամուն, զինաթափ արված, հանձնում են նրան՝ ստիպելով դաժան դատաստան տեսնել և վերացնել նրա կյանքը: Այս համոզման վրա է կառուցված նրա սկզբնական գործերից մեկը՝ «Կարթը» վիպակը, որի համառոտ բովանդակությունը հետևյալն է.

Պատերազմի ժամանակ բաց ծովում վառելանյութով բեռնավորված մի փոխադրանավի պաշտպանությունը վստահված է երեք զինված ենթասպաների: Թշնամու մի ինքնաթիռ վերևից անընդհատ ռումբեր է տեղացնում՝ աշխատելով ծովամույն անել նավը, որպեսզի ռազմական բեռը նավահանգիստ չհասնի: Ենթասպաներից մեկին ի վերջո հաջողվում է ներքևից կրակի շեշտակի հարվածով խփել և հրդեհել ինքնաթիռը, որի օդաչուներից երկուսը մահանում են, իսկ մեկը անկարգելով իրեն գցում է ծովը: Ենթասպաները փոխադրանավի նավաստիների միջոցով կալանավորում են օդաչուին, գերի են վերցնում, հեռախոսով իսկույն կապվում են հրամանատարի հետ, զեկուցում եղելության մասին և սպասում հրամանի: Հրամանատարը կարգադրում է անհապաղ գնդակահարել գարեվարված զինվորին, ինչպես իրենք՝ թշնամիներն են վարվում գերի ընկած իրենց զինվորների հետ: Սակայն պարզվում է, որ հրամանատարի այդ կտրուկ հրամանի գործադրությունը այնքան էլ հեշտ բան չէ: Հեշտ չէ նրա համար, որ երեք ենթասպաները իրենց դիմաց կանգնած անզեն և անպաշտպան այդ օդաչուի մեջ, որն այլևս ոչնչով չի սպառնում իրենց կյանքին, տեսնում են ոչ այնքան թշնամուն, որքան իրենց նման ապրող ու շնչող, կենդանի մի մարդու, որ իրենց չի ճանաչում և անձնապես իրենց դեմ գիտակցված որևէ չարիք չի գործել, և որի կյանքը իրենք հարկադրված են վերացնել: Եվ ահա հոգեբանական բարդույթը, որ սկիզբ է առնում նրանց մեջ՝ ջլատելով թշնամական ամեն զգացում: Տվյալ կացության մեջ «թշնամի» հասկացությունը նրանց համար դառնում է վերացական, անառարկա մի բան, որ անզոր է ատելություն առաջացնելու իրենց մեջ: Եվ բնականաբար նրանցից ոչ մեկը հանձն չի առնում գործադրել հրամանը՝ այն համարելով ոճրային արարք, մարդասպանություն: Չկարողանալով վճռական քայլի դիմել՝ երեք ընկերները հրամանի գործադրությունը հետաձգում են հաջորդ օրվան՝ հույս ունենալով, որ հետևյալ օրը իրենք միգուցե ավելի համարձակ և վճռական կլինեն: Մինչև փոխադրանավի նավահանգիստ հասնելը իրենց տրամադրության տակ դեռ ունեին մի ամբողջ շաբաթ: Սակայն հետևյալ օրը և դրան հաջորդող մյուս օրերին օդաչուի նկատմամբ իրենց մեջ հակակրանք և ատելություն առաջացնելու նպատակով իրենց ի գործ դրած բոլոր հնարքներն անցնում են ապարդյուն: Ճարահատ՝ արձակում են կալանավորված զինվորի ձեռնակապերը, ատրճանակ են տալիս նրա ձեռքը՝ ստիպելով, որ ինքնասպանություն գործի: Անօգուտ: Վիճակ են զցում իրենց միջև, որպեսզի վիճակն ում որ ընկնի, նա՛ լինի հրամանը գործադրողը: Դա ևս հաջողություն չի ունենում: Նրանցից ոչ մեկը ոչ մի կերպ չի համաձայնում ի կատար ածել

հրամանը՝ քաջ գիտակցելով հանդերձ, որ դրա համար իրենց սպասում է խստագույն պատիժ: Եվ այսպես անցնող վեց օրերի ընթացքում, համատեղ կյանքի և ամենօրյա շփումների հետևանքով, գերեվարված օդաչուի հանդեպ երեք ենթասպաների հոգում հետզհետե առաջանում են ավելի մարդկային զգացումներ՝ սկզբնական թշնամանքը վերածելով կարեկցանքի և ապա՝ խղճահարության: Վիպակն ավարտվում է դրամատիկ պահերով հարուստ անսպասելի մի վերջաբանով:

Համանման բովանդակություն ունեցող, բայց գործողությունների տարբեր հյուսվածքով հորինված ուշագրավ մի գործ է նաև նրա «Հրեայի մահը» վեպը:

Վահե Քաչայի գործերի մեջ իր բովանդակությամբ և նպատակադրումով առանձնանում է նրա «Մի դաշույն այս պարտեզում» ծավալուն վեպը, որը վիպական շարադրանքով գրված պատմական գեղեցիկ մի ստեղծագործություն է: Վեպը լույս է տեսել 1981 թվականին, բայց մտահղացվել է 1950–ական թվականներին՝ ավելի քան երկու տասնամյակ շարունակ հասունանալով, կազմավորվելով և իր վերջնական ձևավորումն ստանալով հեղինակի ուղեղում:

Պատմությունն ընդգրկում է 1915 թվականի հայոց ցեղասպանության շրջանը՝ դրան նախորդող և հաջորդող տարիների իրադարձություններով հանդերձ: Սա փառավոր մի որմնաքանդակ է, ուր պատկերված է կոստանդնուպոլսեցի մի հայ ընտանիքի սրտաճմլիկ պատմությունը, որը խտացած վկայությունն է իր բնօրրանում խաղաղ ապրող մի ամբողջ ժողովրդի նահատակության: Այս վեպը այժմեական է հնչում մանավանդ մեր օրերին, երբ այնքան շատ է խոսվում հայերի ցեղասպանության մասին, ցեղասպանություն, որ երկար տարիներ մնացել էր անտեսված:

Անդրադառնալով այս վեպի ստեղծման հանգամանքներին՝ Վահե Քաչան իր հարցազրույցներից մեկում նշում է. «Ծնվել եմ Դամասկոսում և ծնողներիս հետ ամբողջ մանկությունս և պատանեկությունս անցկացրել եմ նույն քաղաքում: Շուրջս հաճախ էր խոսվում հայկական ջարդերի մասին, բայց այդ ժամանակ լավ չէի հասկանում: Գիտեի, որ հայերի մի կոտորած է եղել: Այդքան: Հետագայում, սակայն, գնալով դեպի անցյալը, նայելով հին օրերիս, մտաբերելով մեր գաղթական վիճակը, ծնողներիս զոհաբերումները, հորս պատմությունները, այն մթնոլորտը, որի մեջ ապրում էինք, և այն պատճառները, որոնք մեզ բերել հասցրել էին հիշյալ երկիրը, սովորեցի շատ բան: Կարդացի բազմաթիվ գրքեր և տեղեկանալով մեր ժողովրդի կրած անիրավություններին՝ ուժեղ ցնցում ունեցա: Ազգիս հանդեպ կապս հանկարծ զորացավ: Ուզեցի մի ընդարձակ գործի մեջ պատկերել մեր երկիրը և նրա մարտիրոս ժողովրդին... Այս վեպս գրելու ծրագիրս շատ հին է: Դրա իրականացումն ինձնից պահանջեց երկու տարվա լարված աշխատանք և սպառեց ինձ: Սակայն արդյունքը, կարծում եմ, գոհացուցիչ է: Քննադատներիս կարծիքը դրական է»:

* * *

Ֆրանսիացի ժամանակակից գրողների շարքում Վահե Քաչան աչքի է ընկնում նաև իր ուրույն գրելաձևով, որը հատկանշվում է նրա առանձնահատուկ լեզվով ու ոճով: Քաչայի լեզուն դասական ժամանակակից ֆրանսերենն է՝ բարեխառնված ժողովրդական–խոսակցական լեզվի հյութեղ արտահայտություններով: Այդ լեզուն ուշագրավ է ամենից առաջ իր սահունությամբ, պարզությամբ ու թեթևությամբ՝ մատչելի լեզվական միջին գիտելիքներ ունեցող ֆրանսիացի ամեն ընթերցողի: Ոճը աշխույժ է, սեղմ, կտրուկ, կարճաբան՝ ընդունակ քիչ բառերով շատ բան ասելու: Այդ ոճն այնքան անմիջական է, որ բնավ կարիք չկա դրան ընտելանալու: Քաչայի մտածողությունը պատկերավոր է, և հենց դա էլ առանձին հմայք և աշխուժություն է հաղորդում նրա ոճին: Նրա մոտ գրեթե բնավ չենք հանդիպում երկարաշունչ նախադասությունների կամ պարբերությունների: Հաճախ իրար ետևից շարված և վերջակետերով իրարից բաժանված առանձին բառեր չասված ամբողջական մի միտք, չարտահայտված մի զգացում կամ տրամադրություն թելադրելու ուժ ունեն: Զգացվում է, որ հեղինակը հատուկ ուշադրություն չի դարձրել իր ոճը խնամելու, հարդարելու, գեղեցկացնելու վրա: Ամեն ինչ կարծես հորդում է բնականորեն: Այն տպավորությունն ես ունենում, որ նա իր գործերը գրելիս չի տանջվել բնավ, գրել է արագ ու թեթև: Հատկանշական է այս մասին Քաչայի հետևյալ խոստովանությունը. «Երբ անցնում եմ գրամեքենայիս առջև, գրելիքս ամբողջությամբ պատրաստ է գլխիս մեջ: Անշուշտ նախապես ունեմ պլանս: Ձեռագիրս ջնջելու, վերանայելու, վերաշարադրելու սովորություն չունեմ բնավ: Գրելու գործողությունը կատարվում է մեկ ժայթքով»:

Վահե Քաչան, անդրադառնալով իր արմատներին և այդ կապակցությամբ տարիներ առաջ պատասխանելով իրեն ուղղված մի հարցի, ասել է.

«Անշուշտ թե հայ բարեկամներ ունեմ և կարող եմ ասել, որ հարաբերություններս ընդհանրապես նրանց հետ են եղել: Հայ եմ բոլոր հայերի նման: Ինքս ինձ միշտ էլ զգացել եմ որպես հայ և մի քիչ տարբեր իմ մյուս բոլոր բարեկամներից: Իսկ այն մասին, թե ինձ ֆրանսիացի՞ գրող եմ համարում թե՞ հայ, նման հարց բնավ չեմ ուղղել ինքս ինձ: Բայց նկատի ունենալով, որ ֆրանսերենով եմ գրում, ֆրանսիացի հեղինակ եմ համարվում հայկական ծագումով: Այսինքն՝ մի հայ, որ գրում է ֆրանսերենով»:

Վերջացնելուց առաջ մեր այս համառոտ առաջաբանը՝ նպատակահարմար ենք համարում մեջ բերել այստեղ մի հատված սփյուռքահայ գրող Մ. Պչաքճյանի այն հարցազրույցից, որ նա ունեցել է 1981 թ. Փարիզում անվանի վիպասանի հետ, և որը լավագույնս բնորոշում է իր ազգային ինքնության վրա ամուր խարսխված հայ մարդու կերպարը:

«Երբ առաջին անգամ անոր ձայնը հնչած էր ականջիս, զգացած էի, թե գործ ունիմ չափազանց հաղորդական անհատի մը հետ: Մեր հանդիպումը ամրապնդեց առաջին տպավորությունս: Անմիջականություն, ինքնեկություն, պարզություն հիմնական հատկանիշներն են հիսուն տարեկան, միշտ երիտասարդ Քաչա– տուրյանին: Իր խոսած հայերենը, անոր ընկերացող բացականչություններն ու հարազատ շեշտը զիս փոխադրեցին Միջին Արևելք: Ավելի քան երեսուն տարի քալելե ետք Փարիզի լպրծուն մայթերուն վրա, կթվի, թե նոր եկած է Պուրճ Համուտեն[1]: Նույնիսկ երեկ: Կողքին կարելի է տեսնել ճամփորդության պայուսակն ու ձեռքին՝ օդանավի գործածված տոմսը: Անգլերենի, սպաներենի, ռուսերենի և վերջապես հայերենի թարգմանված վիպասանը շարունակ կուզե հասկցնել, թե ապրիլ գրել կնշանակե իրեն համար և՝ հակառակը: Պատկառելի գործով «անառակ որդին» չէ, որ կվերադառնա հորենական տունը, որովհետև ան հեռացած չէ բնավ: Չի ալ կրնար հեռանալ: Սպի մըն ալ ի՛ր ափին մեջ»:

[1] Պուրճ Համուտ–Հայաբնակ թաղամաս Բեյրութում:

* * *

Վահե Քաչան իր պատվավոր և արժանի տեղն ունի ֆրանսիական արդի գրականության մեջ Էրվե Բազենի, Կլոդ Սիմոնի, Միշել Բյուտորի և ֆրանսիացի մյուս անվանի գրողների կողքին: Նրա գործերը բազմահազար օրինակ տպաքանակով լույս են տեսել Գալիմարի, Պլոնի, Ժյուլյարի նման խստապահանջ հրատարակչությունների կողմից և թարգմանվել արևմտաեվրոպական և արևելյան բազմաթիվ լեզուներով: Դրանք բնականաբար կազմում են ֆրանսիացի ժողովրդի ազգային և մշակութային սեփականությունը: Նրա երեք տասնյակից ավելի վեպերից և վիպակներից մինչև օրս հայերեն են թարգմանվել միայն մի քանիսը: Դրանց մեծ մասը, դժբախտաբար, անծանոթ են մնում հայ ընթերցողների մեծամասնությանը: Որպեսզի մենք իրավունք ունենանք հայազգի ականավոր գրողի գրական ժառանգությունը համարելու նաև մե՛ր ազգային և մշակութային սեփականությունը, անհրաժեշտ է, որ այն վերածվի մայրենի լեզվի: Ուստի մեր ծանոթ թարգմանիչների և հատկապես ֆրանսերեն լեզվին քաջատեղյակ երիտասարդ շնորհալի թարգմանիչների անհետաձգելի և նվիրական պարտականությունն է հայերեն թարգմանել նրա գրական ամբողջ ժառանգությունը: Դա կլինի ազգային երախտիքի լավագույն արտահայտություն և փառավոր մի հուշարձան՝ ընծայաբերված «ֆրանսերենով արտահայտվող և հայերեն մտածող» մեր տաղանդավոր հայրենակցի պայծառ հիշատակին:

Թարգմանիչ

Դատապաշտպանս վեր կացավ: Առանց շտապելու առաջացավ դեպի երդվյալ ատենակալները: Նա նիհար էր և չոր: Կարելի չէր որոշ մի տարիք տալ նրան: Քթի վրայից հանեց ակնոցը, դանդաղորեն ու երկար մաքրեց ապակիները շապիկի թևքով, ապա տեղավորեց իր սրաթափանց աչքերի վրա. կարծես ուզում էր այն տպավորությունը թողնել ատենակալների վրա, թե առաջին անգամ է տեսնում նրանց: Հետո սկսեց խոսել մեղմ ձայնով, խորհրդապահորեն՝ կանգ առնելով յուրաքանչյուր ատենակալի դիմաց: Նրանք ութ հոգի էին՝ վեց տղամարդ և երկու կին, որոնք ուշադիր լսում էին նրան՝ աշխատելով անտարբեր մնալ: Իմ ճակատագիրը կախված էր այն բառերից, որոնք դուրս էին գալիս դատապաշտպանիս շրթներից, նրա շարժումներից, լռությունից: Մեղավո՞ր էին ճանաչելու ինձ, անմե՞ղ: Մեղավոր հայտարարելու դեպքում ինձ սպասում էր մահ կամ բանտարկություն, անմեղ ճանաչելու դեպքում՝ ազատություն: Այն տպավորությունն ունեի, թե ներկա եմ լինում ծաղրալից մի դրամայի: Փորձում էի մտովին հեռանալ, կտրվել իրադարձություններից և այն մարդկանցից, որոնք շրջապատել էին ինձ: Զորս ամսվա կալանքը ինձ սաստիկ թուլացրել էր: Այն անդորրը, որին տենչում էի հոգևին, պատրանք էր սոսկ: Վախը չչմեցրել էր ինձ: Քրտնում էի: Ուշադիր զննում էի այն վեց տղամարդկանց և երկու կանանց, որոնք նստած էին ճիշտ իմ դիմաց: Տղամարդկանցից երկուսը բժիշկ էին, մեկը՝ մերսող, որ աշխատում էր մի ջրաբուժարանում, և որին հանդիպել էի երկու կամ երեք անգամ, մեկը՝ լուսանկարիչ, մեկը՝ ուսուցիչ, մեկը՝ մշակ: Իսկ երկու կանայք ոչ մի

մասնագիտություն չունեին: Աշխատում էի հանգիստ մնալ:

Քիչ առաջ, լսելով գլխավոր դատախազին, համոզված էի, որ ոճրագործ եմ: Իսկ լսելով դատապաշտպանիս՝ վստահ էի, որ անմեղ եմ: Մեղավո՞ր, անմե՞ղ: Չէի կարողանում գլուխս հանել: Կասկածը արմատավորվել էր իմ գլխում:

Երկու հոգի միաժամանակ հազացին բերնեբերան լցված դահլիճում: Մեկ ուրիշը խնչեց: Սրված նյարդերս որսում էին ամենափոքր աղմուկը: Գիտեի, որ տասնյակ ու տասնյակ անձինք ուշադիր դիտում են ինձ: Վախն ու շշմածությունը ինձ օժտել էին հիվանդագին մի պայծառամտությամբ: Ամեն ինչ տեսնում էի, ամեն ինչ՝ լսում: Դատապաշտպանս խոսում էր: Նրա փաստարկումները խառնիխուռն իրար էին հրմշտում շրթներիս վրա: Նրա եզրահանգումները կրակի նման բորբոքվում էին իմ սրտում: Ուզում էի բառ առ բառ գոռալ, ինչ նա ասում էր: Հանկարծ լռություն տիրեց: Ի՞նչ, արդե՞ն: Ես շատ բան ունեի դեռ ասելու, իսկ դատապաշտպանս լռել էր: Ատենակալները վեր կացան ու գնացին: Այն տպավորությունն ունեի, թե չեմ բավարարված: Տարօրինակ բան, ատենակալների ներկայությունը ինձ ուժ էր տալիս: Այժմ ես բոլորովին մենակ էի հարյուրավոր ուրվականների մեջ, որոնք մտովի պիտի հաշվարկեին իմ հնարավորությունները: Բացարձակապես մենակ: Նույնիսկ իմ դատապաշտպանը ոչ մի բանի պիտանի չէր այլևս: Նա սկսեց հավաքել իր թղթերը, ապա շրջվեց դեպի ինձ: Գիտեի, որ նա մոտիկից ճանաչում էր ատենակալներից մեկին՝ բժիշկ Լորժին: Վերջինս բավականաչափ կշիռ ունե՞ր արդյոք՝ համոզելու համար մյուսներին իմ անմեղության մասին:

– Ի՜նչ հեղձուցիչ շոգ է:

Դատապաշտպանս թաշկինակով սրբեց ճակատի քրտինքը: Ես չէի համարձակվում որևէ հարց ուղղել նրան: Նա շարունակեց հանդարտ ձայնով.

– Այս սրահներում մարդ ձմռանը սրթսրթում է, ամռանը՝ խեղդվում ...

Նա նորից հանեց ակնոցը և մաքրեց ապակիները:

–Պարո՛ն դատապաշտպան ...

Կանչողը մի կին էր: Նա սիրուն էր, մի քիչ՝ գռեհիկ: Որտե՞ղ էի տեսել նրան:

– Ահա թե ի՜նչ ...

Տարօրինակ մի փայլ շողաց դատապաշտպանիս աչքերում, մի փայլ, որ չէի հավանում բնավ: Այս կնոջը ես տեսել էի մի կաբարեում: Նա պարուհի էր: Արդյոք դատապաշտպա՞նս էր հրավիրել նրան, որ գա, ներկա գտնվի դատավարությանը: Մարմինս ողողվեց քրտինքով: Ուրեմն կյանքս հանձնել էի վատ փայլով շողացող այս մարդու աչքերի՞ն: Ո՛չ, ո՛չ, ծիծաղելի էր այդպես մտածել: Վերջին հաշվով դատապաշտպանս էլ մարդ էր բոլոր մարդկանց նման: Հաճախում էր կաբարեներ, վիսկի խմում, սիրահետում կանանց:

– Ճանաչո՞ւ մ եք նրան:

Կռահե՞լ էր արդյոք, թե ինչ եմ մտածում: Իսկույն ավելացրեց.

– Տարօրինակ կին է: Միշտ խնդիրներ է ունենում ոստիկանության հետ ...

Չէի ուզում մտածել ատենակալների մասին, որոնք խորհրդակցում էին ներսում: Ոչ մի բանի մասին չէի ուզում մտածել: Ամենափոքր հարցը, որ ուղղում էի ինքս ինձ, գլխապտույտ էր պատճառում և ինձ քշում տանում մի խորխորատ, որից դուրս չէի գալիս այլևս:

– Չե՞ք ուզում ինձ փոխանցել թերթը:

Զորս ամիս է, որ թերթ չէի կարդացել, և հաճելի էր ինձ բաց անել այն: Խոսվում էր այնտեղ իմ դատավարության մասին: Շուռ տվեցի էջերը և կանգ առա ներկայացումների վրա: Դրսում կյանքն ընթանում էր բնական հունով: Ինչպես ամեն տարի՝ արձակուրդի շրջանում, ուրախ հանդիսություններ իրար էին հաջորդում խաղասրահներում: Հայտնի դերասաններ, երգիչներ, քաղաքական դեմքեր լցվում էին ջրաբուժարան: Անգլիացիները գոլֆ էին խաղում լճի մոտակայքում: Ամբողջ երկու ամիս մեր ջերմուկ–բուժարանն աշխուժանում էր: Ապա շուտով վրա էր հասնում ձմեռը: Վաճառականները մեկնում էին դեպի Մի-ջերկրական ծով: Տեղական մի նվագախումբ շաբաթ երեկոյան և կիրակի օրերին իր տեղն էր գրավում խաղասրահում: Խաղասրահների հայտնի դիմագետը վերստանձնում էր լողուսույցի իր պաշտոնը ծածկած լողավազանում, որը ծծումբ էր հոտում:

– Ահա՛ նրանք:

Խոսակցություններն ընդհատվեցին: Տեղակալները մտան ներս: Դատապաշտպանս ակնոցը կրկին հարմարեցրեց իր քթին: Նախագահն սկսեց խոսել: Նրա խոսքերից բան չէի հասկանում: Գերագրգռված ուղեղս ամիսների ընթացքում վարժվել էր արձանագրել միայն երկու բառ՝ մեղավոր ... անմեղ:

– Լա՛վ է, լա՛վ է, – ասաց դատապաշտպանս:

Անպարտ էի արձակվել, անմեղ էի ...

Նայեցի շուրջս: Նախագահը շատախոսում էր երկու ատենակալների հետ: Գլխավոր դատախազը, որ խորտակել էր ինձ իր հարցերի տարափի տակ, անփութորեն հովհարում էր իր դեմքը ծալված մի լրագրով:

Ամբոխի հոսանքը շարժվում էր դուրս: Առանձին մարդիկ դեմքի բարեմիտ նշաններ էին ուղղում ինձ, մարդիկ, որոնց չէի ճանաչում:

– Կարո՞ղ ենք վաղը տեսնվել իմ գրասենյակում, – հարցրեց դատապաշտպանս:

– Այո՛, վաղը, ձեզ մոտ:

Իր մոտ: Այդ նշանակում էր, որ կարող էի դուրս գալ փողոց, նստել տաքսի, հնչեցնել մի դռան զանգ: Այժմ հարկավոր է մեկնել, վերցնել բանտի վարչության մոտ ի պահ դրված իմ իրերը, ինչ–որ թղթեր ստորագրել և, վերջին անգամ լինելով, երկարորեն նայել բանտին:

– Ձե՞ք գալիս...

Բանտապահներս էին, որոնք անհամբերության նշաններ էին ցույց տալիս: Նախքան դահլիճը թողնելը, մինչ թաղվել էի մի տեսակ քաոսային վիճակի մեջ, ինձ թվաց, որ մեկը մոտեցավ ինձ և երեսիս շպրտեց մի բառ կամ մի խոսք:

* * *

– Խնդրեմ, մի ստորագրություն էլ...

Ստորագրեցի:

– Ժամը քանի՞սն է, – հարցրի:

– Ութն անց կես:

Տակավին լույս էր:

– Կարո՞ղ եմ գիշերն այստեղ անցկացնել:

Բանտի վարչության պետը զարմացած գլուխը բարձրացրեց, ապա ասաց.

– Քանի որ ցանկանում եք...

Ամբողջ գիշերը մտածում էի Ֆյուրկովի և Նիկոլի մասին: Ֆյուրկովը մահացել էր: Նրա կինը՝ Նիկոլը, ինձ էր սպասում: Դիտավորյալ խնդրել էի գիշերն այս խցում անցկացնել, որպեսզի մտքիցս ջնջեմ Ֆյուրկովի հիշատակը: Ուզում էի Նիկոլի հետ ամեն ինչ սկզբից սկսել: Հիմա մենք

այլևս կկարողանանք հանգիստ ապրել միասին: Երբ Ֆյուրկովը ողջ էր, ես հազար ու մի նախազգուշություններ էի ձեռք առնում, որպեսզի ոչ մի կասկած չհարուցեմ նրա մտքում: Նա հանգիստ մահացավ՝ ժպիտը դեմքին:

Լուսաբացի մոտ քունս տարել էր: Երբ աչքերս բացեցի, ինձ զգում էի արդեն ուրիշ մարդ: Զորս ամսից ի վեր ապրում էի ջերմության մեջ՝ կիսով չափ անհանգիստ: Այսօրվանից սկսած պիտի վերահաստատվեմ այն ուղու վրա, որից բաժանվել էի: Վեր կացա: Իսկ եթե հանկարծ նա դուռը չբանա՞ իմ առաջ: Մի թեթև շշմածություն ստիպեց ինձ նստել անկողնիս մեջ: Մտածեցի ինձ տրված վճռի մասին: Անմեղ էի: Անպարտ արձակված: Ատենակալները ... Նախորդ օրվա տեսարանը հստակորեն պատկերվեց աչքերիս առջև: Ատենակալներից մեկը մոտեցել էր ինձ և շշնջացել՝ «Մարդասպա՛ն»: Լուսանկարիչն էր:

* * *

Դուրս գալով բանտից՝ զարմացա տեսնելով փողոցներում իշխող եռուզեռը: Իսկական մի օպերետ: Լողազգեստով կանայք, գույնզգույն վերնաշապիկներով տղամարդիկ, մարզական ավտոմեքենաներ, որոնք անվերջ պտույտներ էին կատարում: Մտա մի հեռախոսախցիկ և սկսեցի հավաքել Նիկոլի հեռախոսի համարը: Ձեռքս դողում էր: Երբ լսեցի նրա ձայնը, ոչ մի ծպտուն դուրս չելավ իմ կոկորդից:

– Որտե՞ղ ես:

Նա սպասում էր հեռախոսազանգիս, ինչպես նախապես պայմանավորվել էինք:

– Նիկո՛լ, եթե իմանայիր ...

– Սպասում եմ քեզ, արի՛ շուտով:

– Ո՛չ, ո՛չ: Կհանդիպենք երեկոյան:

– Պիեռ ...

Լսափողը տեղը դրեցի: Մտածելու կարիք էի զգում: Գնացի դատապաշտպանիս մոտ: Նա խորասուզված էր դիմումնագրերի ու թղթերի ընթերցման մեջ: Ստացել էր Նիկոլի չեկը:

– Դատարանը միաձայնությամբ ձեզ անպարտ արձակեց:

Դատապաշտպանս գոհ էր: Բժիշկը՝ նրա բարեկամը, հավանաբար նրան պատմել էր ատենակալների միջև տեղի ունեցած մտքերի փոխանակության մասին:

– Միաձայնությամբ՝ բացի մեկ ձայնից, – ասացի ես:

Նա զարմացած ինձ նայեց:

– Ճիշտ է: Սկզբում մի հոգի վերապահ էր եղել ... Բայց ինչպե՞ս իմացաք:

– Լուսանկարիչն է, որը կարծում է, թե մեղավոր եմ:

Դատապաշտպանս նորից նայեց ինձ, հետո շարժեց ուսերը և ասաց.

– Ի՞նչ կարևոր է: Դուք ազատ արձակվեցիք, էականը դա է:

* * *

Դոնապանուհիս, հեռվից տեսնելով գալուստս, սկսեց արցունք թափել, ասես պատերազմից էի վերադառնում: Նա ինձ համար պատրաստել էր մի փոքրիկ ծանրոց՝ շոկոլատ և սիգարետներ: Եթե բանտում մնացած լինեի, նա ծանրոցը ինձ պիտի ուղարկեր: Համենայն դեպս նա մտածել էր իմ մասին:

Մեծ հաճույքով վերադարձա լուսանկարչատունս: Ամեն ինչ կարգին էր: Ջուրը վազում էր լվացարանից, ռադիոընդունիչն աշխատում էր, վերնաշապիկներս, լվացված ու արդուկված, դասավորված էին հանդերձապահարանում: Լոգանք ընդունեցի և երկարեցի մահճակալիս վրա: Լուսա-

մուտի փեղկերը փակված լինելով՝ սենյակս մնացել էր կիսախավարի մեջ: Ուզում էի վերստին հանձնվել իմ սովորություններին՝ առանց շտապելու, հակառակ իմ անհամբերությանը, թողնելով, որ օրորվեմ ինձ խռովող զգացումների մեջ, որպեսզի կարողանամ որոշել, թե ինչ պետք է անեմ:

Դրսում մի ավտոմեքենայի աղմուկից ընդոստ վեր ցատկեցի: Մոտեցա պատուհանին և վանդակափեղկերի արանքից դուրս նայեցի: Նիկոլն էր: Մի քանի րոպե անց նա արդեն գրկիս մեջ էր: Ամիսներից ի վեր սպասում էի այս վայրկյանին: Նրա երիտասարդությունը, նրա գեղեցկությունը, ազատությունը ինձ էին պատկանում: Լուռ էի, անկարող նույնիսկ մի բառ արտասանելու: Ինքն էլ ոչինչ չէր ասում: Ինչ–որ մեկը քայլում էր միջանցքում: Հետո ոտնաձայները լռեցին: Նույն բույրն էին արձակում Նիկոլի վարսերը: Մեծ հուզումով կրկին զգացի նրա մաշկի փափկությունը, շոյանքներիս հանձնվող նրա մարմնի ջերմությունը: Մենք դարձել էինք մեկ մարմին, մեկ էություն: Մեր շարժումներն ու մտածումները չփոթվում էին:

– Ինչպիսի՜ մղձավանջ ապրեցի,– շշնջաց նա:

– Հիմա մենք այլևս ազատ կլինենք: Մի՛ մտածիր անցյալի մասին: Ես ամեն ինչ մոռացել եմ:

– Ես էլ:

Եվ հանկարծ ավելացրեց.

– Դու այստեղ չես մնալու: Հենց այսօրվանից պիտի դաս տեղավորվես իմ տանը:

– Մարդիկ կսկսեն չարախոսել:

– Ուրիշներն ինձ համար գոյություն չունեն: Նախ դատարանը քեզ արդարացրել է: Դու անմեղ ես: Ամեն մարդ այդ գիտե: Լավ է, որ դաս հենց այսօր:

Նա իրավացի էր:

– Հիմա քեզ համար մի ճամպրուկ կպատրաստեմ:

Նա օգնեց ինձ ճամպրուկի մեջ տեղավորելու զգեստներիցս մի քանիսը: Նիկոլի առանձնատունը գտնվում էր լճի մյուս կողմը՝ կծկված մի լեռան լանջին: Ես տեղ գրավեցի նրա կողքին շարժական ծածկով մի ավտոմեքենայի մեջ: Նա ավտոմեքենան վարում էր դանդաղ. կարծես ուզում էր մեր սերը սփռել բաց օդին՝ ի ցույց մարդկանց: Մարդիկ համակրանքով մեզ էին նայում: Մենք քաղաքի շրջանը կատարեցինք՝ առանց հանդիպելու թշնամական որևէ հայացքի, թեև իմ դատավարությունը դրսում մեծ աղմուկ էր հարուցել: Նույնիսկ մեր փոքրիկ քաղաքի բնակիչներն էին արդարացնում մեզ: Առաջին անգամ լինելով՝ երջանիկ էի զգում, որ ապրում եմ:

Առանձնատանը խոր լռություն էր տիրում: Դա ժամանակակից, պերճաշուք մի շինություն էր, որը Ֆյուրկովը կառուցել էր տվել երեք տարի առաջ: Ամեն սենյակ տարբեր կահավորում ուներ: Մի մեծ բացօթյա պատշգամբ նայում էր լճին:

– Մեր սպասավորներին մի քանի օրով իրենց տներն եմ ուղարկել:

Նա ամեն ինչ կանխատեսել էր: Սառնարանը բերնեբերան լցված էր ուտելիքներով: Առաջին անգամ է, որ այս առանձնատանը նրա հետ միայնակ նստում էի դեմառդեմ: Ֆյուրկովից ոչ մի հետք չէր մնացել: Նրա ծխամորճներն ու ծխախոտը մեջտեղից վերացել էին: Նիկոլը փոխել էր ննջասենյակի կարասիները:

– Քաղցա՞ծ ես:

Մենք նախաճաշեցինք բաց պատշգամբում: Մեր շուրջն ամեն ինչ համակ ներդաշնակություն էր: Լիճը պսպղում էր արևի տակ: Մեր գլխավերևում ցցված անտառածածկ լեռնից փչող մեղմ օդը շոյում էր մեր դեմքը, և մենք ան-

հագորեն վայելում էինք սկիզբ առնող մեր նոր կյանքի հեշտանքը:

* * *

Գոլորշին մառախուղի նման նստած էր ջրաբուժարանի լողավազանի վերևում: Լողավազանի ջրից բարձրացող անտանելի տաքությունը սեղմում էր կոկորդս և կտրում շնչառությունս: Երկար ժամանակից ի վեր որոշել էի ջղերս հանձնել այս կիզիչ ջրին: Առաջանում էի մեծ զգուշությամբ. նախ՝ մեկ ոտքս, ապա՝ մյուսը: Ինձ թվում էր, թե քայլում եմ բոցերի վրա: Երբ ջուրը հասավ կրծքիս, հանգիստ շունչ առա: Անշարժ կանգնած՝ նայեցի շուրջս: Ջրավազանի մյուս ծայրին տարտամորեն աչքիս երևացին մարդկային երկու ուրվագծեր: Հավանաբար ամենօրյա հաճախորդներ էին, որոնք եկել էին շարունակելու իրենց բուժումը: Դեռ քիչ առաջ ծծմբի հոտը շնչահեղձ էր արել ինձ: Հիմա այլևս ոչինչ չէի զգում: Քրտինքի կաթիլները գլորվում էին այտերիցս ցած: Ինձ թվում էր, թե իմ ամբողջ մարմնի աղի համը, վերջին ամիսների ընթացքում ինձ հետ պատահած բոլոր եղելությունների դառնությունը թափանցել մտել էին բերանիս մեջ: Դուրս տալով այդ վատ քրտինքը՝ մաշկս մաքրվում էր: Դուրս ելա լողավազանից և ամբողջ մարմնով փռվեցի մերսման սեղանի վրա: Մերսող բժշկի ձեռքերի մեջ դարձել էի մսի, մկանների, ջղերի և քրտինքի կույտ: Այն տպավորությունն ունեի, որ նա կարող է նոր ձև տալ դեմքիս, տեղաշարժել մկաններս, երկարացնել մարմինս: Ուղեղս աշխատում էր ընդհատումներով, կանգ առնում այս կամ այն պատկերի վրա, ապա ամփոփվում ինքն իր մեջ՝ ծուլորեն վերլուծելու համար այն: Մերսումից հետո վեր կացա և երկարեցի մի բազմոցի վրա մութ

սենյակում: Երկու կամ երեք հոգի այնտեղ հանգստանում էին ինձ նման: Ժամանակ առ ժամանակ մարդկային մի ստվեր մտնում էր սենյակ, բարձրանում կշեռքի վրա, ապա՝ անհետանում: Խոշոր ծավալի կազմված մի տետր էր դրված մի փոքրիկ սեղանի վրա, կողքին՝ մատիտ: Ջրաբուժարանի մշտական հաճախորդները, ժամանելիս և մեկնելիս, դրա մեջ նշում էին իրենց քաշը: Սպիտակամաշկ մի ծերունի հառաչեց իմ կողքին, ապա վեր կացավ, աչքերը շփեց և հորանջելով հեռացավ: Երբ ուզում էի դուրս գալ այս սենյակից, ինչ–որ մեկը, որ ինձ ծանոթ թվաց, բարձրացավ կշեռքի վրա: Նա հիսունի մոտ մի մարդ էր: Որտե՞ղ էի հանդիպել նրան: Մարդը կշռվեց, թերթեց կազմած տետրը, մի պահ մտածեց և դրա մեջ նշեց ինչ–որ բան: Հետո անհետացավ: Անակնկալ մի հարվածի ազդեցության տակ ընդարմացած ուղեղս իսկույն ուրվագծեց նրա պատկերը: Այս մերկ մարդը, որ հենց նոր կշռվեց, այն լուսանկարիչն էր, որը դատարանում ինձ մարդասպան էր համարել: Ի՞նչ էր անում նա այստեղ: Արդյոք, պատահաբար ... ո՛չ, ծիծաղելի էր: Նրա ներկայությունը կարող էր միայն պարզ զուգադիպություն լինել: Վեր կացա թեթևակի անհանգստացած: Մոտեցա սեղանին, որի վրա դրված էր կազմած տետրը: Ի՞նչ էր նշել դրա մեջ: Սպառնալի՞ք: Սկսեցի թերթել էջերը: Հաճախորդների անունները դասավորված էին այբբենական կարգով. «Ամոն Պոլ. ժամանում՝ 90 կիլոգրամ, մեկնում՝ 88.400 կգ.: Բելտոշ Գասպար. ժամանում՝ 95 կիլոգրամ, մեկնում՝ 94 կիլոգրամ»: Լուսանկարչի անունը չգիտեի: Քանի՞ կիլոգրամ կգար արդյոք: Շատ գեր չէր: Թիկունքից Ֆյուրկովին էր նման: Նրա քաշը 78 կիլոգրամից ավելի չպետք է լիներ: Տետրում ոչ ոք 85 կիլոգրամից պակաս չէր: Նույնիսկ մեկնելու ժամանակ: Ես չէի համարձակվում նշել իմ քաշը: 68 կիլոգրամից ավելի չէի: Եվ հե-

տո վերադառնալու մտադրություն չունեի բնավ: Ջրաբուժարանից հեռացա թեթևակի մտահոգված:

* * *

– Ծարա՞վ ես:

Նիկոլը կանգնած էր մոտս՝ վիսկիի շիշը ձեռքին: Նայում էր ինձ զվարթ դեմքով: Բաժակս դատարկ էր, բայց ես անգիտակցաբար այն տարա շուրթերիս:

– Ինչի՞ մասին ես մտածում:

Ոչ մի բանի մասին չէի մտածում: Նա պնդեց.

– Ասա՛, ինչի՞ մասին ես մտածում:

Պատասխանած լինելու համար հնարեցի ինչ–որ բան.

– Մտածում եմ վաղվա մեր շրջապտույտի մասին:

Մենք ծրագրել էինք առավոտյան շուտ վեր կենալ և մոլորվել անտառում: Նիկոլը բաժակս լցրեց և տեղավորվեց կողքիս: Սև–թուխ ամպերը մթագնել էին երկինքը: Պատշգամբից մենք ուղղակի իշխում էինք ամայացած լճի վրա: Թեթև մի քամի հարթ ջրի վրայից քշում տանում էր ամպերի ճգած ստվերը, և ինձ այնպես էր թվում, թե լիճը տեղափոխվում է: Նիկոլը թեթև հոգոց հանեց և գլուխը հանգչեցրեց ծնկներիս վրա:

– Վաղն առավոտյան ինձ շուտ կարթնացնես:

– Հենց որ արևը ծագի:

Նրա թևերը օղակեցին վիզս: Համեմունքի մի հաճելի բույր էր դուրս գալիս արևից թխացած նրա մարմնից: Եթե արևը բույր ունենար, ապա դա Նիկոլի բույրը կլիներ:

– Ի՞նչ:

Բաց արեցի աչքերս:

– Զհասկացա, – ասացի:

– Ես էլ: Դու խոսում էիր արևի բուրմունքի մասին:

Երևի առանց անդրադառնալու բարձրաձայն էի մտածել:

– Կարծեմ քունս տանում է:

– Դեռ հազիվ ժամը տասն է: Նայի՛ր ...

Լճի վրա փոքրիկ լուսավոր կետեր շարժվում էին տեղից տեղ:

– Ձկնորսներ են:

Նավակները դանդաղորեն առաջանում էին: Կլինեին մոտավորապես մի տասնյակ: Մի պահ հանկարծ անշարժացան: Լճի մեջտեղում դրանք նման էին լուսավոր բծերի: Փակեցի աչքերս և Նիկոլին սեղմեցի մարմնիս: Ինչքա՜ն կենդանի էր նա, ինչքա՜ն շոշափելի: Նա ինձ էր պատկանում: Որքա՞ն ժամանակ տևեց մեր գրկախառնումը՝ հի՞նգ րոպե, թե՞ երկու ժամ, թե՞ ամբողջ գիշեր: Լիճը, անտառը, ջրի ափին սեպացած քարաժայռը, ամպերը շփոթվում, խառնվում էին իրար: Մաշկիս տակ անտառն այրվում էր, քարաժայռը վրաս էր խուժում, և ես հոսում էի Նիկոլի ելակների մեջ: Ծարավ էի սիրո և քնքշանքի: Ծարավ էի բարեկամության: Ծարավ էի մարդկային հարաբերության:

– Մրսում եմ:

Նա վեր կացավ:

– Ձկնորսները մեկնեցին: Քունդ չի՞ տանում:

Չպատասխանեցի: Նայեցի լճին և հեռվում նշմարեցի մի լույս:

– Դեռ մի ձկնորս է մնացել:

– Ես ոչինչ չեմ տեսնում, – ասաց Նիկոլը և կկոցեց աչքերը:

– Դու իրավացի ես, երևի անբախտ մի ձկնորս է:

Առավոտյան ժամը չորսի մոտ վեր կացա ջուր խմելու: Մակույկը միշտ այնտեղ էր: Ժամը ութին այնտեղ էր տակավին: Անձնատուր եղած մի տարտամ երկյուղի՝ գնացի

հեռադիտակս բերելու: Նայեցի: Տեսա միայն մի թիկունք և ջրի մեջ թաթախված մի գիծ: Թիկունքը նման էր լուսանկարչի թիկունքին:

* * *

– Իսկ մեր շրջապտո՞ւյտը, – ասաց Նիկոլը:

– Պետք է գնամ տեսնեմ դատապաշտպանիս: Մոռացել էի մի մանրամասնություն: Համենայն դեպս երկինքը ամպամած է:

– Ուզո՞ւմ ես՝ ուղեկցեմ քեզ:

– Կվերադառնամ մի ժամից:

Զայրացած վազեցի դեպի դատապաշտպանիս գրասենյակը: Պետք է անպայման տեսնեի նրան: Տվեցի դռան զանգը: Ոչ ոք: Համառեցի: Ոտնաձայներ: Հազ: Դուռը բացվեց: Մի դեռատի կին զարմացած նայեց ինձ:

– Պարոնը արձակուրդի մեկնեց:

– Ունե՞ք նրա հեռախոսի համարը:

Նա թղթի մի կտորի վրա գրեց համարը և տվեց ինձ: Ուզում էի զանգահարել փոստից, բայց փոստը դեռ բաց չէր: Սպասեցի քառորդ ժամ: Ապա առանձնացա հեռախոսի խցիկներից մեկում: Ո՛չ մեկ ձայն: Դատապաշտպանս հավանաբար դեռ անկողնում էր: Սատանան տանի: Վերջապես լսեցի նրա ձայնը:

– Ես եմ՝ Պիեռ Տալյանը:

Ի՞նչ էի ուզում ասել նրան: Մտքերս գլխիցս թռել ցնդել էին:

– Լսում եմ ձեզ:

– Ահա՛: Բանտից դուրս գալուց ի վեր ... այսինքն ... իմ արդարացումից ի վեր մի մարդ հետապնդում է ինձ:

Ես այս նախադասությունը նրան ուղղեցի այնպիսի շեշտով՝ կարծես պատասխանատու էի համարում նրան: Հեռախոսի մյուս ծայրից լսվեց հազի ձայն:

– Ո՞վ է ձեզ հետապնդում: Ինչո՞ւ:

– Լուսանկարիչը: Օձիքս բաց չի թողնում:

– Վանիե՞ն:

– Անունը չգիտեմ: Ստվերի նման հետապնդում է ինձ: Անցած օրը ջրաբուժարանում էի, այնտե՛ղ էր: Այսօր էլ նավակով եկել էր թափառելու լճի վրա, մեր առանձնատան շուրջը ...

– Անկարելի է: Ես ճանաչում եմ Վանիեին: Նա բարեհամբույր, անվնաս մարդ է: Իզուր եք ջղայնանում, սիրելիս:

– Ձեզ ասում եմ, որ ինձ հետապնդում է: Թե ի՞նչ պատճառով, չգիտեմ:

Հեռախոսի միջից ծիծաղի ձայն: Ապա՝

– Ուզո՞ւմ եք, որ զանգահարեմ նրան: Նրա լուսանկարչատունը գտնվում է ջրաբուժարանի հետևում: Դա պարզ զուգադիպություն է:

– Ամբողջ գիշերը նավակի մեջ է անցկացրել: Գիտե, որ ես այդ առանձնատանն եմ բնակվում:

– Գուցե զանազան տեսարաններ էր լուսանկարում:

Զգում էի, որ դատապաշտպանս սկսում էր անհամբերության նշաններ ցույց տալ: Նա շարունակեց.

– Պարզ զուգադիպություն: Դուք կարիք ունեք արձակուրդի գնալու:

Գուցե իրավացի էր:

* * *

Շուկայի օրը թափառում էի փողոցներում: Սիրում էի այնտեղ տիրող մթնոլորտը: Այդ չորեքշաբթի որոշել էի գնալ և մի շրջան կատարել քաղաքում: Նիկոլը պիտի գնար տեսնելու իր փաստաբանին, որն ստանձնել էր իր հանգուցյալ ամուսնու դրամական գործառնությունների տնօրինումը: Ես նախընտրում էի չհանդիպել նրան:

– Երեք գույդը արժե հազար ֆրանկ:

Նայում էի վաճառողին: Փոքրամարմին և պնդակազմ մի մարդ էր՝ ցուլի նման հաստավիզ: Գուլպաներ էր վաճառում:

– Ընտրեցե՛ք, խնդրեմ, ընտրեցե՛ք:

Նրա ձայնը այնքան նուրբ էր ու բարակ, որ կարծես խոսողը նա չլիներ: Շուկան վխտում էր մարդկանցով: Գույնզգույն գլխարկներ, լանջաբաց շրջազգեստներ, լողազգեստով դուրս ելած կանայք: Արևի շոգը խեղդում էր քաղաքը:

Դա այնպիսի օրերից մեկն էր, որ մարդ չէր կարող լուրջ օրվա տեղ դնել: Մարդիկ անցնում էին՝ առանց մի բան գնելու: Վաճառողներն էլ չէին ստիպում գնել և շատախոսում էին իրար հետ՝ նայելով քաղաքապետարանի մեծ ժամացույցին, որ ամեն կողմից երևում էր: Դա այնպիսի մի օր էր, որ չես կարող դասել արձակուրդային օրերի շարքին, երբ թվում է, թե փողը որևէ արժեք չունի:

Հանկարծ նշմարեցի լուսանկարչին, որը մի քանի օրից ի վեր հետապնդում էր ինձ: Կանգնել էր ինձանից հիսուն մետր հեռու՝ թևերը ծալած: Ոչինչ չէր գնում: Երկու պտղավաճառների միջև անշարժ կանգնած՝ մտածում էր: Միջահասակ էր: Դեմքը կնճռոտված էր Ֆյուրկովի դեմքի նման: Ի՞նչ էր անում այստեղ: Արդյոք ի՞նձ էր փնտրում: Ուզեցի հայտնապես իմանալ ճշմարտությունը: Մի քանի քայլ առաջացա: Տեղից չշարժվեց: Բայց վստահ էի, որ ինձ տեսել էր: Կանգ առա մի բանջարավաճառի առջև:

– Ի՞նչ եք ցանկանում գնել:

Վաճառողը մի պատանի էր: Հայրը վստահաբար դիմացի խորտկարանում էր գտնվում:

– Կշռեցե՛ք ... մեկ կիլոգրամ ... լոլիկ:

Լուսանկարիչս տեղից չէր շարժվում: Վերցրի փաթեթը և առաջացա: Հայացքս հանդիպեց մի պանրավաճառի հայացքին:

– Կամամբե՞ր եք ցանկանում:

Հարկ եղավ մի քանի բոպե սպասել, որպեսզի նա մանրադրամը վերադարձնի ինձ: Լուսանկարիչը շարժվել էր: Վստահ էի: Հետևում էր ինձ՝ թևերը ծալած: Ի՞նչ էր ուզում ինձանից: Ինչո՞ւ էր այդպես համառորեն փնտրում ինձ: Գիտեր հասցես: Եթե ուզում էր ինձ տեսնել, կարող էր գրել: Չէի հասկանում, թե ինչ էր կատարվում ինձ հետ: Մի պառավ կին ցանցի մեջ լցրած կարտոֆիլ երկարեց ինձ: Հարկավոր էր վճարել ...

– Այսօր մեկ անգամ են վճարում:

Ներողություն խնդրեցի և ծրարս գետին շպրտելով՝ առաջացա: Երբ ես կանգ էի առնում մի վաճառորդի առջև, լուսանկարիչն էլ էր կանգ առնում: Միշտ նույն հեռավորությունն էր մեզ բաժանում իրարից: Նա քայլերը հարմարեցնում էր իմ քայլերին: Ստիպված էի որոշ գնումներ կատարել, որպեսզի կարողանամ լավ հետևել իր շարժումներին:

– Տասը հատ պնա՛կ, խնդրեմ:

– Ուշադրությու՛ն, դյուրաբեկ են:

Պնակները ձեռքերիս մեջ՝ առաջացա: Հիմա ավելի արագ էի քայլում: Շտապում էի մեկընդմիշտ վերջ տալ այս բոլորին: Հասնելով փողոցի ծայրին՝ միանգամից շրջվեցի:

Անհետացել էր: Գնումներս տեղավորեցի ավտոմեքենայի մեջ և սլացա դեպի քաղաք: Քրտինքի կաթիլներ էին հոսում թիկունքիս երկայնքով: Ավտոմեքենայի ղեկը սահում էր խոնավացած ձեռքերիս միջև: Հետո սկսեցի մտածել կատարած գնումներիս մասին: Լոլիկները, կարտոֆիլները, պնակները չէի կարող տանել Նիկոլի տունը: Ի՞նչ կմտածեր նա: Ծիծաղելի էր: Կանգնեցրի ավտոմեքենան և ծրարները նետեցի լիճը, ասես ուզում էի ազատվել մի զենքից, որով մարդ ոճիր է կատարում: Կամամբերի ծրարը մի բոպե լողաց ջրի երեսին, ապա սուզվեց:

* * *

– Ալլո՛, 21037 համա՞րն է:

Ճաշից հետո Նիկոլը հանգստանում էր բացօթյա պատշգամբում՝ աչքերը փակած: Ի վերջո գտել էի լուսանկարիչ Վանիեի հեռախոսի համարը: Նվաղկոտ, միապաղաղ մի ձայն պատասխանեց ինձ.

– Դիմապատկերի համա՞ր է:

– Ուզում եմ խոսել Վանիեի ... պարոն Վանիեի հետ:

– Ու՞մ կողմից եք զանգահարում:

Հուզումը խեղդում էր ինձ:

– Մի բարեկամի կողմից:

Մի պահ լռություն տիրեց: Ապա լսափողի միջից հազի ձայներ լսեցի: Երդվում եմ, որ դա Վանիեն էր:

– Պարոն Վանիեն այստեղ չէ: Կեսգիշերից առաջ չի վերադառնա:

– Բայց շտապ պետք է:

Դարձյալ լռություն: Ի դեպ ինչո՞ւ էր շտապ պետք: Ավելացրի.

– Զանգահարում եմ փաստաբան Ֆանանի կողմից:

– Պարոն Վանիեն բացակայում է: Կարո՞ղ եք մի լուր թողնել:

Անդրադարձա հանկարծ, որ ասելու բան չունեմ: Նիկոլը գլխով նշան էր անում: Կարծում էի, որ քնած է: Պատշգամբը ողողվել էր արևով: Ծաղիկներով զարդարված մի սեղանի վրա շարված էին խմիչքի շշեր: Կիսաբաց վարագույրի արանքից փչում էր անուշաբույր մի մեղմ քամի: Նիկոլը համարյա մերկ էր: Լսափողը կամաց դրեցի տեղը և ինձ համարեցի պակասամիտ մարդ:

* * *

– Ի՞նչ եք ցանկանում:

Տախտակամածը փայլեցված էր: Փոշու հատիկ իսկ չկար Վանիեի խանութում: Միջին տարիքի մի կին ինձ էր նայում: Աշխատում էր սիրալիր երևալ: Ծամածռության նման մի ժպիտ որպես սպի մեկընդմիշտ սառել մնացել էր նրա շրթների վրա: Առատ և կպչուն մազերով մի երիտասարդ, նստած մի սեղանի ետևում, մաքրում էր իր եղունգները:

– Վեց լուսանկար եմ ուզում փոստային բացիկի չափով:

– Ծանո՞թ եք մեր գներին:

Եվ ստվարաթղթի մի կտոր երկարեց ինձ:

– Համաձայն եմ:

– Խնդրեմ, բարձրացե՛ք վերևի հարկը:

Նա զանգ տվեց: Ես բարձրացա վերև ներքին մի քանի աստիճաններով: Ներքնապես խաղաղված էի: Քանի որ Վանիեն ինձ էր փնտրում, ահա ես ինքս էի ուղիղ գնում դեպի իրեն:

– Այս կողմում է:

Երեսուն տարեկանին մոտ մի տղամարդ ցույց տվեց արվեստանոցը:

– Դո՞ւք եք պատրաստում լուսանկարները:

Զարմացած թվաց:

– Այո՛, ես եմ պատրաստում:

– Իսկ պարոն Վանիե՞ն:

Երիտասարդը ուղղեց իր ակնոցը:

– Պարոն Վանիեն հանգստանում է: Նա արվեստանոց է գալիս առավոտյան կողմը: Ծանո՞թ եք նրան:

Ամբողջ տասնհինգ րոպե ստիպված եղա հարմարվել նրա պահանջներին: Նա անընդհատ պտտվում էր շուրջս, լուսարձակը շրջում էր այս ու այն կողմ, կուչ էր գալիս լուսանկարչական գործիքի հետևում և վերսկսում իր սովորական աշխատանքը: Համբերությունս սպառվել էր: Տարօրինա՜կ բան, ինձ թվում էր, թե ինչ–որ մեկը դիտում է ինձ: Բայց որտեղի՞ց: Պատին ամրացված հայելին խաբուսի՞կ էր արդյոք:

– Կարո՞ղ եք ձեր ծնոտը մի քիչ վեր բարձրացնել: Մի քիչ ավելի ... շնորհակալ եմ:

Գոհ չէր տակավին: Քրտնել էի:

– Թո՛ւյլ պահեք ձեզ:

Լուսարձակները կուրացնում էին ինձ: Աչքերս արցունքոտվել էին:

–Ժպտացե՛ք:

Կատաղել էի: Ի՜նչ հիմար գաղափար ստիպեց ինձ գալ այստեղ լուսանկարվելու: Ի՞նչ կարիք ունեի Վանիեին փնտրելու: Ի՞նչ ասելու համար նրան: Իսկ այս գործողությունը, որ վերջ չուներ ... վստահ էի, որ նա դիտմամբ է տանջում ինձ: Վերջապես մի գոհունակություն ունեի. լուսանկարները պատռելու գոհունակությունը, հենց որ դրանք պատրաստ լինեին:

– Վերջացավ: Շնորհակալություն:

Եվ հանգցրեց լուսարձակները: Շունչս կտրվել էր:

– Վաղն առավոտյան պատրաստ կլինեն:

Միջին տարիքով կինը, ձեռքին մի տետրակ և մի մատիտ, ինձ էր սպասում: Ասացի նրան, որ շուտով կփակեմ հաշիվը:

– Ինչպես որ ցանկանաք: Նկարները պատրաստ կլինեն վաղն առավոտյան:

– Կանցնեմ դրանք վերցնելու:

Քաղաքապետարանի այգու նստարաններից մեկի վրա նստած՝ Նիկոլն սպասում էր ինձ:

* * *

– Ինչի՞ մասին ես երազում:

Անկողնում կուչ էի եկել և աչքերս հառած՝ նայում էի առաստաղին: Մոտավորապես առավոտյան ժամը տասը կլիներ: Նիկոլը մի ծրար շարժեց աչքերիս առջև:

– Նամակ ունես:

Մեկնեցի ձեռքս: Նիկոլը ծռմռեց շրթները:

– Սիրո՞ւ մ ես ինձ:

– Սիրում եմ:

– Այդքա՞ն միայն:

– Սիրում եմ, սիրում եմ, տու՛ր նամակը:

– Դեռ ո՛չ: Նախ ...

Քաշեցի նրան և սեղմեցի կրծքիս: Թա՛րմ էր, անուշաբո՛ւյր: Մոռացա նամակի մասին:

– Տեղիցդ չշարժվես: Գնամ նախաճաշդ բերեմ:

Վերադարձավ՝ մի ափսե ձեռքին, մահճակալի վրա նստեց կողքիս և սկսեց թոստեր* պատրաստել:

– Նամակդ չե՞ս կարդում:

* Թոստ – Կարմրեցրած հացի շերտ:

Նայեցի ծրարին և ցնցվեցի: Ծրարի վրա, վերևի մասում կարդացի Վանիեի անունն ու հասցեն: Ի՞նչ էր ուզում ինձանից: Ախորժակս միանգամից փակվեց: Թոստի վրա տարածված մեղրը դառնահամ թվաց: Կատաղած մատներով պատռեցի ծրարը: Մեջը լուսանկարներս էին դրված: Ինչո՞ւ էր ուղարկում իմ տուն... այսինքն... Նիկոլի տուն: Չէ՞ որ հստակորեն ասել էի, թե կգամ, կվերցնեմ:

– Զարմանալի լուսանկարներ են, – ասաց Նիկոլը:

Մեղրը չմեղմացրեց սրտնեղությունս: Ուզում էի անպայման տեսնել Վանիեին: Պետք էր, որ ... Լայն բացեցի աչքերս: Կարծեցի, թե երազում եմ: Ծրարի մեջ կար վեց լուսանկար փոստային բացիկի չափով: Լուսանկարներ՝ տպված ողորկ, փայլուն թղթի վրա: Երեք լուսանկար ինձ պատկերում էին դեմից: Մյուս երեքը՝ կիսադեմ: Ճիշտ ինչպես լինում են հետազոտման մեջ գտնվող ոճրագործների լուսանկարները: Սա արդեն բացահայտ սադրանք էր: Այս Վանիեն ...

– Հագնվո՞ւմ ես արդեն:

Նիկոլը ափսեն դրել էր միոտանի մի փոքրիկ սեղանի վրա: Ցանկասիրությունը նրան նեղացկոտ էր դարձնում: Հենց որ երկարում էի նրա կողքին, նա կերպարանափոխվում էր: Ուրախությունը տիրում էր նրան պարբերաբար և ջնջում նրա կծկված դիմագծերը: Դեմքը ճառագայթում էր:

– Ո՞ւր ես գնում:

– Երկու խոսք ունեմ ասելու այդ լուսանկարչին:

– Հեռախոսի՛ր:

– Ո՛չ, պետք է անպայման տեսնեմ նրան: Հետո կբացատրեմ քեզ:

Քանի որ նա ուրիշ մանրամասնություններ չէր հարցնում, ես մի համբույր դրոշմեցի նրա այտին և ինձ գցեցի Ֆյուրկովի շարժական ծածկով ավտոմեքենայի մեջ: Քառորդ ժամ անց արդեն հրում էի լուսանկարչատան դուռը: Մեռելային լռություն էր տիրում: Վաճառող կինը և երիտասարդ տղամարդը քարացել մնացել էին լուսանկարչական գործիքների հետևում: Ձայրալից շարժումով ձեռքիս ծրարը շպրտեցի սեղանի վրա:

– Ի՞նչ է, քթի՞ս եք ծիծաղում:

Միջին տարիքով կինը վերջապես տեղից շարժվեց: Նա զգուշությամբ լուսանկարները հանեց ծրարից և ուշադիր զննեց:

– Ներքին գործերի նախարարության գրասենյակում չենք այստեղ: Ի՞նչ են նշանակում փախստական ոճրագործների դիմապատկերներին նմանվող այս լուսանկարները:

Որքան խոսում էի, այնքան ավելանում էր խոսելու ցանկությունս: Կատաղությունը դուրս էր պոռթկում ձգված ջղերիս միջից:

– Կանչեցե՛ք խանութի տիրոջը: Երկու խոսք ունեմ ասելու:

– Բայց, պարո՛ն ...

– Սպասում եմ:

Երևաց լուսանկարող երիտասարդի ապշահար գլուխը: Հարձակվեցի վրան մեղադրական խոսքերով.

– Երեկ երեկոյան դուք կես ժամ հոգիս հանեցիք այս ողորմելի արդյունքի՞ համար:

Նա սկսեց կմկմալ.

– Սրանք ... փորձերն են:

– Ի՞նչ փորձեր:

– Այսպիսի փորձնական նմուշներ ենք ուղարկում մեր բոլոր հաճախորդներին, և նրանք ընտրում են:

– Այստեղ ես միայն երկու դիրքով եմ նկարված:

– Դուք պահանջեցիք վեց լուսանկար: Եթե պատվիրած

լինեիք տասը, ապա կստանայիք չորս դիրքով նկարված լուսանկարներ:

Անկե՞ղծ էր արդյոք: Ջղայնությունից կորցրել էի ինքնատիրապետումս: Նայեցի երեք ծառայողներին: Ապշած տեսք ունեին:

– Ես ձեզ ասել էի, որ ինքս կգամ կվերցնեմ: Ինչպե՞ս իմացաք իմ հասցեն:

Տիրեց տհաճ մի լռություն:

– Վանիե՞ն հաղորդեց ձեզ:

– Պարոն Վանիեն քսանչորս ժամից ի վեր բացակայում է:

Մտածեցի հանկարծ, որ ինքնությունս ճշտել էին: Լուսանկարս տեղական մամուլում լույս էր տեսել դատավարության ամբողջ ընթացքում: Նրանք ճանաչում էին ինձ: Գիտեին, որ ապրում եմ Նիկոլ Ֆյուրկովի բնակարանում: Ծանոթ էին իմ ամբողջ անցյալին: Կպչուն մազերով երիտասարդը գիտեր, որ ես պառկում եմ Նիկոլ Ֆյուրկովի հետ: Ինձ լուսանկարողը գիտեր, որ ես Նիկոլ Ֆյուրկովի հետ էի Կամֆիրների կողմից տրված երեկույթին: Միջին տարիքով կինը գիտեր Նիկոլ Ֆյուրկովի հետ փոխանակած իմ առաջին համբույրի և՛ թվականը, և՛ ժամը: Վերջին երեք շաբաթների ընթացքում հրատարակված թերթերը ոչ մի մանրամասնություն բաց չէին թողնում: Ի՞նչ կարող էի ավելացնել: Թողեցի, հեռացա այդ տեղից:

* * *

– Դու և ես, – ասաց Նիկոլը:

Հիսուն հոգու չափ մարդ կար մեր շուրջը մոդայիկ այդ բարում: Ճանաչել էին մեզ: Ոչ մի թշնամական հայացք: Մի քիչ հետաքրքրություն միայն: Նիկոլը շրթները թաթախեց իր բաժակի մեջ:

– Ի՜նչ հիմար բան է, – շարունակեց նա, – գիտեմ, որ դու ինձ սիրում ես, դու էլ գիտես, որ քեզ սիրում եմ, սակայն և այնպես ցանկություն ունեմ անվերջ քեզ հետ խոսելու, ասելու, որ քեզ սիրում եմ:

– Ես նույնպես ուզում եմ բերանս բաց անել՝ միայն ասելու համար. «Նիկո՛լ, սիրում եմ քեզ»: Մի՞թե դա այնքան հիմար բան է:

Մենք նստել էինք դեմ–դիմաց: Խոսում էինք ցածր ձայնով:

– Ոչինչ չեմ լսում, ոչ ոքի չեմ տեսնում: Դու և ես, – կրկնեց Նիկոլը: – Ոչ մի խոսք մի՛ ուզղիր ինձ: Խմի՛ր և ծխի՛ր:

Նիկոլը և ես: Նիկոլը: Նիկոլը: Նա ինձ էր պատկանում: Նրա աչքերը, նրա բերանը, նրա շարժումները, նրա մտածումները ինձ էին պատկանում: Նա ամբողջությամբ ինձ էր պատկանում:

– Նիկո՛լ, վե՛ր կաց: Շո՛ւտ, մի տաքսի նստիր և վերադարձիր տուն:

Հենց նոր Վանիեին էի տեսել: Նա բար էր մտել և դուրս եկել: Ուզում էի մեկընդմիշտ վերջ տալ: Նիկոլը վեր կացավ:

– Մի ժամից կլինեմ քեզ մոտ: Ոչ մի հարց մի՛ տուր: Սիրում եմ քեզ:

Նա դուրս եկավ բարից: Սպասեցի մի րոպե: Մի բաժակ խմել ու հարբել էի: Հարբել էի Նիկոլով: Հարբել էի Վանիեով: Երջանկությունն ու կատաղությունը միախառնվել էին երակներիս մեջ և հրմշտում էին իրար: Վեր կացա և դուրս ելա շնչելու փողոցի թարմ օդը: Վանիեն մտել էր իր փոքրիկ բարից ներս: Անկասկած ինձ էր լրտեսում ...: Ինձ հետևելուց հետո հիմա փախչում էր ինձանից: Զէ՛, այս անգամ ուզում էի անպայման վերջ տալ:

Հրեցի դուռը և ներս մտա: Բարում Վանիեն արմունկով հենվել էր վաճառասեղանին: Գարեջուր էր խմում: Բարում աշխատող երկու դեռատի պարուհիներ շատախոսում էին մի հաճախորդի հետ: Սև ակնոցով մի մարդ բարմենի հետ զառ էր խաղում: Տեղ գրավեցի Վանիեի մոտ ու մի բաժակ գարեջուր պատվիրեցի: Վանիեն սպիտակ ապակիներով ակնոց էր կրում աչքերին: Հստակ չէր զանազանվում նրա աչքերի գույնը, որ պայծառ պետք է լիներ: Քիթը ուղիղ էր, մի քիչ կարճ և թեթևակի ձգված՝ նրա հաստ շրթունքների պատճառով: Նա հագնված էր վայելուչ և կրում էր կարմիր փողկապ:

– Ճանաչո՞ւմ եք ինձ:

Նա բարձրացրեց աչքերը, նայեց ինձ և չպատասխանեց:

–Պիեռ Տալյանն եմ՝ Նիկոլ Ֆյուրկովի սիրականը:

Չշարժվեց: Շարունակեցի.

– Եթե մի բան ունեք ինձ ասելու, չո՛ւտ ասացեք: Բավական է ինչքան թափառեցիք մեր շուրջը:

Նա կուլ տվեց մի կում գարեջուր:

– Լսում եմ ձեզ:

Ակնոցն ուղղեց քթի վրա, ապա հանդարտ ձայնով ասաց.

– Ես ոչինչ չունեմ ձեզ ասելու:

Պայթեցի.

– Դուք ինձ «մարդասպան» անվանեցիք դատական նիստի ավարտին: Ճի՞շտ է թե՞ ոչ:

Նա թեթևակի բարձրացրեց ուսերը և ասաց.

– Օ՛, ո՛չ, ո՛չ:

– Դուք ինձ հետևեցիք ջրաբուժարանում: Ճի՞շտ է թե՞ ոչ:

– Օ՛, ո՛չ, ո՛չ:

Մի քիչ ավելի մոտենալով՝ շարունակեցի.

–Դուք եկաք ձկնորսների հետ և թափառեցիք առանձնատան շուրջը:

– Օ՛, ո՛չ:

–Դուք ինձ հետևում եք ու փախչում: Փորձե՛ք հակառակն ասել:

Նկատեցի հանկարծ, որ մարդիկ մեզ են նայում: Երևի շատ բարձր էի խոսել: Ձայնս իջեցրի:

– Ի վերջո ի՞նչ եք ուզում ինձանից:

Չպատասխանեց: Կանչեց մատուցողին և շատ հանգիստ մի բաժակ գարեջուր պատվիրեց: Հետո, պատշաճությանն անդրադառնալով, հարցրեց ինձ.

– Մի բաժակ էլ գարեջուր չե՞ք ցանկանում:

Բաժակս լեցուն էր: Միանգամից դատարկեցի և ընդունեցի նրա առաջարկը: Մի պահ լռություն տիրեց:

–Շատ զբոսաշրջիկներ կան այս տարի:

Չպատասխանեցի: Շարունակեց.

– Բոլոր հյուրանոցները բերնեբերան լցված են: Խաղասրահները մերժում են մարդկանց ընդունել:

Ծաղրո՞ւմ էր արդյոք ինձ: Խոսում էր շատ բնական կերպով, ասես վաղուց ինձ ճանաչեր:

– Ավելի՛ լավ՝ գործատերերի համար: Անցած տարի համարյա չաշխատեցին վատ եղանակի պատճառով: Այս տարի ...

Նա խոսեց այսպես հինգ րոպե: Հետո դատարկեց բաժակը և մեկնեց: Մնացի ապշած: Մտածեցի: Գործ ունեի խորամանկ, չարամիտ մի մարդու հետ: Կամ էլ՝ մի տխմարի հետ: Մտածում էի նոր տեղի ունեցած եղելությունների մասին: Ոչ մեկ կասկած. Վանիեն ձեռնոց էր նետում ինձ մեկ շաբաթից ի վեր: Եվ հիմա շատ հանգիստ մեկնում էր՝ առանց հարցերիս պատասխանելու: Սանձված մի կատաղություն արագացրեց սրտիս զարկերը: Դուրս ելա բարից:

Նստեցի ավտոմեքենա և սկսեցի վարել դանդաղ ընթացքով: Բոլոր մարդիկ քայլում էին փողոցի մեջտեղով: Մի քանի լաճեր, փոնիների* վրա նստած, զբոսնում էին: Տեղացի երիտասարդներ պաշարել էին դեռահասակ օտարազգի աղջիկների: Օդում ալիք–ալիք տարածվում էր տոնական մի եղանակ: Ի վերջո նկատեցի Վանիեին: Նա հանել էր բաճկոնը և քայլում էր մեջքը թեթևորեն կռացրած:

– Ուզո՞ւմ եք ձեզ տեղ հասցնեմ:

Նայեց ինձ և մտածեց: Ես արդեն բաց էի արել ավտոմեքենայի դռնակը: Վերջապես բարձրացավ ու նստեց:

– Ո՞ր կողմում եք ապրում:

– Անմիջապես դեպի ձախ:

Ես ավտոմեքենան դարձրի դեպի աջ: Սեղմեցի արագացուցիչը և ուղղություն վերցրի դեպի այն սեպ քարաժայռը, որն իշխում էր լճի վրա: Ճանապարհը օձապտույտ էր: Վանիեն չէր խոսում: Հիմա նրան տանջելու հերթը իմն էր: Մարզական այս ավտոմեքենան, որ Ֆյուրկովը գնել էր իր մահվանից երկու ամիս առաջ, կարող էր սլանալ ժամում մինչև հարյուր քսան կիլոմետր: Ֆյուրկովը արագություն չէր սիրում: Նա այն գնել էր պարզապես Նիկոլին հաճույք պատճառելու համար:

– Ավտոմեքենա վարել գիտե՞ք:

– Վանիեն կոկորդը մաքրեց:

– Ո՛չ:

Վստահություն չուներ իմ նկատմամբ: Մի քիչ ավելի սեղմեցի արագացուցիչը: Ճանապարհին ուրիշ ավտոմեքենաներ չկային: Դա վտանգավոր մի ճանապարհ էր՝ նեղ ոլորաններով լեցուն: Անիվների տակ ճխլվում էին մանր խճաքարեր: Արագացուցիչն ավելի էի սեղմում, և ավտոմեքենան կտրուկ շրջում միայն վերջին վայրկյանին: Արագությունը թեթևացնում էր հոգիս: Ծառերն ու ժայռերը կարծես խուժում էին մեզ վրա: Ես ղեկը աննկատ սահեցնում էի մատներիս միջով:

Վանիեն սկսեց քրտնել: Ավտոմեքենայի առջևի ապակու վրա ճզմվուն էին թռչող միջատներ: Քամին կտրում էր շնչառությունս:

–Վերցրե՛ք ղեկը:

– Բայց ...

– Վերցրե՛ք ղեկը, շու՛տ:

Վանիեն իսկույն նետվեց ղեկի վրա, որովհետև ես այն բաց էի թողել: Նա գոռաց.

– Հո հիմար չեք, ավտոմեքենա վարել չգիտեմ:

Նա փորձեց բաց թողնել ձեռքը, բայց երբ նկատեց, որ համառում եմ ղեկին չդիպչել, իսկույն գալարեց մատները: Անճարակ չէր, բայց ճանապարհի յուրաքանչյուր ոլորապտույտին մեզ վտանգ էր սպառնում՝ գլորվելու մեր ներքևում բացված անդունդը: Ոտքս անշարժ պահել էի ոտնակի վրա: Ուզում էի գնալ մինչև ծայրը: Քամին խառնշտկել էր Վանիեի մազերը: Նրա մարմինը ողողված էր քրտինքով: Չէր համարձակվում նայել ինձ: Նրա ակնոցի ապակիները մշուշոտվել էին:

– Հիմա լսում եմ ձեզ:

– Ի՞նչ եք ուզում իմանալ:

– Ամեն ինչ: Դատարկե՛ք, ինչ որ կա ձեր գլխում:

– Ղեկը վերցրե՛ք, խնդրում եմ:

Խղճալի էր նրա տեսքը: Սարսափը եղծել էր դիմագծերը: Պրկված շրթներից ծորում էր լորձունքի բարալիկ մի թել:

– Ինձ մարդասպան կոչեցիք, այո՞ թե՞ ոչ:

– Ի՞նչ նշանակություն ունի ... դուք արդարացվեցիք:

* Փոնի – Անգլիական գաճաճ ձի, մատաղաձի:

Նորից սեղմեցի արագացուցիչը: Ավտոմեքենայի հետևի անիվները կրճատացին: Վանիեն իր մարմնի ամբողջ ծանրությամբ հենվել էր ղեկին:

–Այո՛, ես... ձեզ մարդասպան կոչեցի:

Էլ չէր կարողանում շարունակել: Ձայնը կպել էր կոկորդին:

–Դու՛ք սպանեցիք Ֆյուրկովին:

– Ինչի՞ց գիտեք:

– Լսե՛ք ... կանգ առնենք ... կբացատրեմ ձեզ ...

Որպես պատասխան ավելի սեղմեցի արագացուցիչը:

– Ինձ համար դուք եք մարդասպանը: Գուցե սխալվում եմ: Բայց ի՞նչ նշանակություն ունի, քանի որ ձեզ արդարացրին:

– Շարունակե՛ք ...

–Դուք ստիպված էիք: Տիկին Ֆյուրկովը քսաներեք տարեկան է, իսկ Ֆյուրկովը հիսուն տարեկան էր: Դուք քսանյոթ տարեկան եք ... ստիպված էիք ... սպանեցիք նրան:

–Ճիշտ չէ: Ֆյուրկովը ինքնասպա՛ն եղավ:

–Դուք նրան քարաժայռի վրայից վայր գցեցիք:

–Ինչպե՞ս կարող եք հաստատել ձեր ասածը: Ոչ մի վկա չկար:

Վանիեն շարունակեց.

–Ֆյուրկովը հարուստ էր: Նրա կինը ամբողջ ունեցվածքը ժառանգեց:

Մենք մոտենում էինք քարաժայռին, նշանավոր քարաժայռին ...

– Դուք երիտասարդ եք և փառասեր: Ստիպված էիք ...

– Ես լայնորեն ապահովում եմ իմ ապրուստը: Մոռանում եք, որ ես ինժեներ եմ:

– Հակառակը չեմ ասում ... Կարծիքս եք հարցնում, և ես հայտնում եմ ձեզ:

Նրա քրտինքի կաթիլները թափվում էին վրաս: Ինձ հետ խոսելուց ի վեր կարծես ավելի լավ էր վարում ավտոմեքենան: Բայց վախը անբնական էր դարձրել նրա ձայնը:

– Ահա, ես դատարկեցի գլխիս մեջ եղածը: Ե՛տ վերցրեք ղեկը: Կանգ առնենք:

–Դեռ ոչ: Շարունակե՛ք ...

– Էլ ոչինչ չունեմ ասելու:

– Դուք ինձ հետևո՛ւմ էիք այս օրերին ...

– Այո՛ և ո՛չ:

– Դուք խառնվել էիք ձկնորսներին, որպեսզի գաք և թափառեք մեր առանձնատան շուրջը:

– Այո՛ և ո՛չ: Ես տեսարաններ էի լուսանկարում: Դրանք ձեզ ցույց կտամ:

Նա շատ խղճալի տեսք էր ընդունել:

– Այո՛, դրանք ձեզ ցույց կտամ ... գունավոր լուսանկարներ:

Եվ արտահայտելով իր մտքում եղածը՝ շարունակեց.

– Ես անվնաս մի լուսանկարիչ եմ: Ոչ ոքի վատություն չեմ արել ... ո՛չ ոքի: Կարող եք իմ մասին տեղեկանալ ... չե՛մ դիմանում այլևս ...

Վանիեն պատառոտված, մաշված ձորձ էր դարձել, թուլացած անզոր մի մարդ: Կամաց սեղմեցի արգելակը: Ավտոմեքենան անշարժացավ: Վանիեի ձեռքերը կառչած էին մնացել ղեկին: Նա դանդաղորեն ետ քաշեց ձեռքերը և իջավ ավտոմեքենայից: Բաճկոնակը գլորվեց գետնին: Զվերցրեց: Շապիկը դուրս էր եկել տաբատից: Երերալով գնաց նստեց մի ժայռի վրա: Սկսեց բարձրաձայն շունչ քաշել:

Հանկարծ խիղճս շարժվեց: Նկատեցի, որ նրա ակնոցը մոդայից ընկել է: Կարծես նույնիսկ լսեցի հեկեկանք, որ խեղդվեց նրա կոկորդում: Դողդողացող ձեռքերով հանեց

ակնոցը, ապակիները մաքրեց շապիկի թևքով և խուսափեց ինձ նայելուց:

– Լսե՛ք, Վանիե՛, դուք վտանգավոր խաղ խաղացիք:

Նա բարձրացրեց գլուխը, բայց ես այն տպավորությունն ունեցա, որ ինձ չէր տեսնում:

–Նայե՛ք այս ժայռին, – ասացի նրան: – Ֆյուրկովը սովորություն ուներ նստելու այս ժայռի վրա և ժամերով դիտելու իր ոտքերի տակ խորացող անդունդը:

Վանիեն քիթը ֆսֆսացրեց:

–Դուք թերևս ազնիվ մարդ եք, Վանիե՛:

Մի պահ լուռ մնալուց հետո շարունակեցի.

– Եկեք մարդավարի դեմառդեմ նստած խոսենք: Քանի որ ես արդարացվել եմ, կարող եմ հիմա ձեզ ասել հետևյալը. Ֆյուրկովին ես չեմ սպանել: Ես չեմ հրել նրան: Մենք եկել էինք նստելու այս ժայռի վրա: Գուցե ես մտադրություն ունեի նրան սպանելու: Մի՞թե դա նույն բանն է: Ձե՞ք կարծում, թե տարբերություն կա մտադրության և արարքի միջև: Ուզում էի գնալ և ավտոմեքենայի միջից սենդվիչները բերել, երբ նա ոտքի կանգնեց և միանգամից իրեն գցեց դատարկության մեջ ... Անմիջապես գնացի և ոստիկաններին խոստովանեցի, որ ես նրան սպանել եմ ... Այո՛, այդ պահին ես ինձ մեղավոր էի զգում: Ի վերջո, սակայն, վերագտա հանդարտությունս և ասացի ճշմարտությունը ... պարզ ճշմարտությունը:

– Վանիեն վեր կացավ: Գուցե նա վախենում էր ինձ հետ մենակ մնալ ամայի քարաժայռի վրա:

– Ես մարդասպան չեմ, Վանիե՛: Հավատո՞ւմ եք ինձ ...

– Այո՛, այո՛, հավատում եմ ...

Ձիշտ չէր ասում: Վախենում էր:

– Ինձ հանգիստ թողեք, – ասաց նա: – Ես այլևս ձեզ տեսնել չեմ ուզում:

Եվ նա բռնեց վերադարձի ճանապարհը: Համարյա վազում էր: Թողեցի, որ գնա՝ նեղսրտած, դժգոհ:

* * *

Ի՞նչ պատճառով էր Ֆյուրկովը ինքնասպանություն գործել: Հարուստ էր: Ուներ թշնամի: Չէր կասկածում Նիկոլի հետ իմ ունեցած սիրային կապին: Համակրանք ուներ իմ նկատմամբ: Ինքնասպանության նախօրյակին փող էր տվել ինձ: Ես մտադրություն ունեի մի գրասենյակ վարձելու և, որպես գործակիցներ, աշխատանքի ընդունելու ուրիշ ինժեներների: Ամեն ինչ կարգին էր: Նա երջանիկ էր, լավատես: Վերհիշում եմ բոլոր մանրամասները: Նիկոլը մեզ համար սենդվիչներ էր պատրաստել: Մենք բարձրացել էինք դեպի քարաժայռը՝ մեր գործերի մասին խոսելու: Ֆյուրկովը սովորություն ուներ նստելու ժայռի վրա և ինքնամփոփ մտածելու: Նա հետզհետե ավելի հաճախ էր գալիս այնտեղ: Ավտոմեքենան կանգնեցրել էինք մեզնից տասը մետր հեռավորության վրա: Ես տեղիցս վեր էի կացել, որպեսզի գնամ սենդվիչները բերեմ: Հարցրել էի նրան, թե ինչպիսի՛ սենդվիչ է նախընտրում՝ պանրո՞վ, թե՞ ապուխտով: Նա վեր էր կացել և ինձ էր նայում: Դեմքը բոլորովին խաղաղ էր: Հետո այնպիսի մի ուժով, որ բնավ չէի սպասում նրանից, մի ոստում էր կատարել դատարկության մեջ:

– Ձե՞ս քնել:

Երևի շարժվել էի: Նիկոլը կուչ եկավ գրկիս մեջ:

– Քնի՛ր:

Արևի առաջին ճառագայթները թափանցում էին սենյակի վարագույրներից ներս և տարօրինակ ստվերներ գծագրում պատերին: Վեր կացա: Չորս կողմս ստվերներ էին:

Սեղանը, աթոռը, մահճակալը արտացոլում էին այնպիսի ստվերներ, որոնք ծանոթ չէին ինձ: Այս մեկը կլոր սեղանի ուրվանկա՞րն էր: Հանկարծ, չգիտես ինչո՞ւ, մտածեցի Ֆյուրկովի մասին: Նմա՞ն էր նա այս կարասիներին: Ու-նե՞ր արդյոք առանձնահատուկ այնպիսի մի ստվեր, որ խուսափել էր իմ ուշադրությունից: Տնտղեցի հիշո-ղություններս և որևէ անսովոր բան չգտա: Այն ստվերը, որ Ֆյուրկովը գցում էր իր շրջապատի վրա, միշտ նույնն էր: Նա մեղմաբարո, համակրելի մարդ էր: Եվ մտածել, որ ես ցանկություն էի ունեցել նրան սպանելու, ավելի շուտ՝ դե-պի անդունդը հրելու, որպեսզի միայն ինձ համար պահեմ Նիկոլին և ամբողջ օրը ազատորեն սիրեմ նրան: Այնքան հեշտ էր դա ... Բավական է, որ նրան հրեի ... Մտադ-րությունս նույնքան ատելի՞ էր, որքան արարքը: Ոճիրը մտադրության բնական երկարաձգումը չէ՞ միայն: Մտքերս կենտրոնացան Վանիեի վրա: Նա ճիշտ Ֆյուրկովի տարիքն ուներ: Երկուսն էլ ֆիզիկապես նման էին իրար: Վանիեն դիմա՞կ էր կրում արդյոք: Ըստ իմ ունեցած բոլոր տեղե-կությունների՝ նա պարկեշտ, ազնիվ քաղաքացի էր: Նրան ընտրել էին որպես ատենակալ: Նա խաղաղ կյանք էր վա-րում: Գուցե նրան մի առիթ էր պակասում միայն, որպես-զի դիմակը պատռի՝ երկար ժամանակ ոչխարի պես ապրե-լուց հետո: Գուցե այդ ժամանակ էլ, նրա օրինակով, կկա-րողանայի հասկանալ Ֆյուրկովի վարմունքը... Գուցե:

* * *

– Բերել եմ ձեր բաճկոնը, – ասացի Վանիեին:

Նա բաճկոնը մոռացել էր ավտոմեքենայի մեջ:

– Ա՛, շնորհակալ եմ:

Վանիեն ցուցափեղկի մեջ շարված լուսանկարչական գործիքների վրայից մաքրում էր փոշիները: Նա բաճկոնը դրեց մի աթոռի վրա:

– Գործերը լա՞վ են:

– Չեմ գանգատվում, – ասաց նա: – Առևտրի եռուն շըր-ջանն է:

Ցուցափեղկի առջևից անցնում էին ջրաբուժարանում բուժվող հիվանդներ՝ սպիտակ անձեռոցիկներ կապած ի-րենց վզի շուրջը: Հյուրանոցներից մեկում ծառայող մի ե-րիտասարդ ման էր ածում սայլակի մեջ նստած և ծածկոց-ների մեջ փաթաթված մի պառավ կնոջ:

– Ամուսնացա՞ծ եք:

Վանիեն կկոցեց աչքերը:

– Ո՛չ, ինչո՞ւ եք հարցնում:

– Իսկ ինչո՞ւ չեք ամուսնացել:

Նա ժպտաց:

– Երբ այդ մասին մտածեցի, արդեն շատ ուշ էր:

– Բայց դուք տակավին երիտասարդ եք:

Նա ուսերը շարժեց և ինձ նայեց ավելի համակրանքով: Ապրո՞ւմ էր արդյոք մի կնոջ հետ: Ուզում էի մանրակրկիտ քննության ենթարկել նրան: Նա ծանոթ էր իմ անցյալին, մարդկանց հետ իմ ունեցած հարաբերություններին, ինչ-պես մյուս ատենակալները: Այն տպավորությունն ունեի, որ ամեն ինչով մերկ եմ նրա առջև:

– Ներեցե՛ք երեկոյան կատարվածի համար: Հասկանում եք անշուշտ ... որոշ ժամանակից ի վեր մշտապես լարված,

ջղային վիճակում եմ ապրում: Այս բոլոր պատմություններից հետո ...

Նա մաքրում էր լուսանկարչական մի գործիքի ապակին:

– Իհարկե, իհարկե:

Փորձեցի ժպտալ:

– Խոստովանեք, որ ինձ համբերությունից հանեցիք: Առանց ուզենալու թերևս:

Խանութից ներս մտավ մի կին և լուսանկարչական ժապավեն խնդրեց: Վանիեն տվեց նրա ուզածը:

– Ինչո՞ւ համբերությունից պիտի հանեի ձեզ: Իսկապես ձեզ չեմ հասկանում: Ընդհակառակը, ես այն տպավորությունն ունեի, որ դուք եք ինձ հետևում:

– Ե՞ս:

– Սխալվո՞ւ մ եմ, – ասաց նա:

– Համենայն դեպս անցյալ օրը շուկայում դուք ինձ հետևում էիք ...

– Շուկայո՞ւմ, չորեքշաբթի օ՞րը: Ես ձեզ չեմ էլ նկատել:

– Անկարելի է: Ես ...

Կարիք կա՞ր արդյոք խոստովանելու նրան, որ իր պատճառով ստիպված էի եղել գնելու լոլիկ և տասնյակ պնակներ: Իսկ եթե իրավացի էր ...

– Մոռանանք անցյալը. ես մի քիչ ջղային եմ:

– Ինչո՞ւ արձակուրդ չեք գնում:

– Հնարավոր չէ: Չեմ ուզում հեռանալ քաղաքից: Նիկոլի հետ արձակուրդի մեկնելը մի տեսակ փախուստ կլիներ: Վանիե՛, անկեղծ ասած, դուք հավատո՞ւ մ եք, որ ես մեղավոր եմ: Նայե՛ք ինձ: Մարդասպանի տեսք ունե՞մ:

«Մարդասպան» բառը ճանկռում էր կոկորդս: Վանիեն նայեց ուղիղ աչքերիս մեջ, ապա շրջեց հայացքը: Գնաց դռան առջև և ուշադիր զննեց լուսանկարչատան մի քանի թափանցիկ ժապավեններ՝ դրանք պահելով լույսի տակ:

– Դուք երիտասարդ եք: Ունեք դրավիչ ֆիզիկական կառուցվածք ... Բայց, ինչպես արդեն ասացի, ես ձեզ մեղավոր եմ համարում Ֆյուրկովի մահվան համար: Դուք նրան սպանել եք:

Նա այս խոսքերն ասաց ամենայն հանդարտությամբ, ասես դա անառարկելի փաստ լիներ:

– Սխալվում եք, Վանիե՛ ... իսկապես ...

Ի՞նչ կարող էի ավելացնել: Նրա ձայնի մեջ մեղադրական ոչ մի շեշտ չկար:

– Լա՛վ, ենթադրենք, որ ես եմ սպանել ... ենթադրենք, որ դուք իրավացի եք ...

Ես այս բառերն արտասանում էի մեծ դժվարությամբ.

– Համաձա՞յն եք այսօր կեսօրին ճաշել մի մարդասպանի հետ:

Նա մի վայրկյան անշարժ մնաց, թեթևակի հազաց մի քանի անգամ, կարծես ուզում էր մտածել: Ապա մի քիչ չոր ձայնով պատասխանեց.

– Ինչո՞ւ չէ:

* * *

– Երկու փոքրիկ սեխ, երկու շերտ աղած թարմ սալմոն, երկու կտոր գառան բուդ՝ որպես խորտիկ, մի քիչ բանջարեղեն և սպիտակ գինի՝ ճաշն սկսելու համար:

– Մատուցողն ընդունեց պատվերը և գնաց:

– Ձեր սրտո՞վ է:

Վանիեն մի տեսակ ճնշված էր թվում: Ես նրան բերել էի այստեղ՝ «Վահրամ–կլուբ», ուր հաճախում էին տեղացի և օտարերկրացի երևելի անձնավորություններ: Սա մասնավոր մի ակումբ էր: Այստեղ ամեն մարդ հանգիստ և ազատ էր զգում իրեն: Փոքրիկ սեղաններ էին դրված ավազե հար-

թակի վրա: Երիտասարդ տղամարդիկ փինգ–փոնգ էին խաղում: Մի քանիսը լողում էին լճի մոտ կառուցված ջրավազանում: Ճարպակալած մի մարդ դահուկում էր ջրի վրա:

– Հաճա՞խ եք գալիս այստեղ:

– Գալիս էի հաճախ ...

Առաջին անգամ Ֆյուրկովն էր ինձ բերել այստեղ: Ինքն էր պատվիրել՝ սեխ, սալմոն, գառան բուդ ... «Սիրո՞ւ մ եք ջրի վրա դահուկել», – հարցրել էր ինձ Ֆյուրկովը:

– Ջրի վրա դահուկե՞լ: Դա դժվար մարզաձև է, – պատասխանեց Վանիեն: – Ինչո՞ւ եք ծիծաղում:

Ծիծաղում էի ... Մտածում էի Ֆյուրկովին տված իմ պատասխանի մասին:

– Պետք է փորձել, – պատասխանեցի Վանիեին: – Շատ հետաքրքրական է:

Եվ ավելացրի առանց որևէ պատճառի.

– Դա բարձրացնում է մարդուս տրամադրությունը: Առողջարար մարզաձև է:

Վանիեն զարմացած նայեց ինձ այնպես, ինչպես ես էի նայել Ֆյուրկովին:

– Տրամադրությունս վատ չէ:

Ծիծաղում էի: Ուզում էի անընդհատ ծիծաղել:

– Ո՛չ, ո՛չ, դուք ուրախ չեք, Վանիե՛: Խոստովանեք, որ ուրախ չեք:

Չպատասխանեց:

«Ես կսովորեցնեմ ձեզ ուրախ լինել», – ասել էր ինձ Ֆյուրկովը:

Փինգ–փոնգի մի գնդակ ընկավ մոտս: Արևից թխացած մի աղջիկ եկավ այն վերցնելու: Նա հագել էր սպիտակ մի լողազգեստ, որը ճանկռոտում էր նրա թարմ մարմինը: Վանիեն շրջեց աչքերը:

Մի բոպե լուռ մնացինք: Հետո հանկարծ հարցրի նրան.

– Ի՞նչ է նշանակում ձեզ համար «ապրել» բառը:

Նա մտածեց, ծալեց թևերը և ասաց.

– Ապրել՝ նշանակում է հայտնագործել:

– Դատարկ խոսք: Հայտնագործելու բան չկա: Սե՛ր կա միայն: Լսո՞ւ մ եք ինձ, Վանիե՛, սե՛ր, միմիա՛յն սեր:

– Գուցե: Բայց դա բավարար չէ:

– Մի կին, որին դու սիրում ես, մի կին, որ քեզ սիրում է: Ահա՛ բոլորը: Սահմանը վերջանում է այդտեղ, – ասացի դրեթե բարկությամբ:

Նա բարձրացրեց ուսերը:

– Սխալվում եք:

– Կտեսնեք, կտեսնեք ...

Զայրացած էի առանց պատճառի: Մատուցողը բերեց պատվիրված ճաշերը: Սկսեցինք ուտել: Սառը գինին հաճելիորեն սահում էր կոկորդովս ցած՝ բերանիս մեջ թողնելով ճմլված խաղողի հեշտալի մի համ: Խմու՛մ էի, խմու՛մ...

«Հապա սպիտակ գինու սե՞րը, – հարցրել էի Ֆյուրկովին կես ծաղրական շեշտով, – կարևոր չէ՞ սպիտակ գինու սերը»:

– Ուշադրությո՛ւն դարձրեք ձեր սիգարետի մոխրին, – ասաց Վանիեն: –– Ուտելիս ինչո՞ւ եք ծխում:

Սիգարետս թաղեցի ավազի մեջ: Երկու դեռատի կանայք միաժամանակ նետվեցին ջրավազանի մեջ: Մի փոքրիկ երեխա դատարկ շշի մեջ ավազ էր լցնում: Հարցրի Վանիեին.

– Եթե մարդասպան եղած լինեի, կարծո՞ւ մ եք, որ ինձ կընդունեին այս ակումբում:

– Ձեմ հասկանում, թե ի՛նչ կապ կա, – ասաց նա: – Ինչո՞ւ եք այդպես անհանգստանում: Դատարանը ազատ արձակեց ձեզ: Էականը դա է: Այնքա՛ն ոճրագործներ կան, որ ազատության մեջ են ...

– Համենայն դեպս, Վանիե՛, դուք ճիշտ չեք տրամաբա-

նում: Ես ստիպված եմ ապրել այս քաղաքում: Կարևոր մի դրասենյակ պիտի բանամ այս ձմեռ: Տարիներով մենք ի-բար պիտի հանդիպենք: Ամեն հանդիպման ինքս ինձ պի-տի ասեմ. «Այս մարդն ինձ մարդասպանի տեղ է դնում»: Զարմանալի չէ, հավատացե՛ք: Գոնե ճիշտ լիներ ...

Նա մի սիգարետ վառեց և թույլ տվեց, որ ծուխը քու-լա–քուլա բարձրանա իր վերևում:

– Իսկ եթե ձեզ ասեի, թե անմեղ եք, գոհ կլինե՞ք:

– Ասացե՛ք միշտ:

– Անմեղ եք:

– Կրկնեցե՛ք:

– Անմեղ եք:

– Ճիգ գործադրեցեք և ասացեք ինձ. «Սխալվել եմ, ան-մեղ եք»:

– Իրոք որ դուք հիվանդ եք: Արդեն ուշ է, պետք է մեկ-նեմ:

– Սպասե՛ք ինձ, շուտով կվերադառնամ:

Հինգ րոպե վերջ վերադարձա՝ օդում թափահարելով ա-կումբի մի անդամատոմս:

– Վերցրե՛ք այս անդամատոմսը և տեղեկացեք: Գրեթե անհնար է ձեռք բերել:

– Մտադրություն չունեմ կրկին գալու այստեղ:

– Չի իմացվի բնավ, վերցրե՛ք: Սա ձեզ ոչնչով չի պար-տավորեցնում:

Վերցրեց անդամատոմսը և դրեց տաբատի գրպանը:

– Մնացեք բարով, Վանիե՛:

– Մնացեք բարով, մնացեք բարով:

Սպիտակ գինին թուլացրել էր սրունքներս:

Պառկեցի ավազի վրա և փակեցի աչքերս:

Որքա՜ն հաճելի էր օրորվել այսպես քառասային վիճա-կում՝ առանց մտածելու, առանց դրդռելու նյարդերս:

Լողում էի կարծես փրփրալից մի օվկիանոսում:

* * *

– Ժամը չորսն է, պարոն Տալյան:

Բաց արեցի աչքերս: Նիկոլը նստած էր կողքիս:

– Վաղո՞ւց ես եկել:

– Կես ժամ առաջ: Խռմփացնում էիր:

– Նիկո՛լ ...

Բերանս չորացել էր:

– Նիկո՛լ ... Դու սիրո՞ւմ էիր Ֆյուրկովին: Ճիշտ է, որ մենք որոշել էինք չխոսել նրա մասին, բայց պատասխանի՛ր ինձ ...

Նա սկսեց բռով խաղալ ավազի հետ:

– Սիրել եմ: Նա տարօրինակ մարդ էր:

– Տարօրինակ դարձե՛լ էր: Իսկ ի՞նքը:

– Ինձ սիրում էր իր ձևով: Ես այդ մասին արդեն ասել եմ քեզ:

Նա սկսեց ավազի վրա գծագրել երկրաչափական պատ-կերներ:

– Ես նեղացած եմ նրանից:

– Ինչո՞ւ:

– Նա ինքնասպան եղավ՝ առանց նախազգուշացնելու, առանց նույնիսկ մի բառ թողնելու... Հիշում եմ ...

– Գաղտնի մի պատճա՞ռ ուներ:

– Ոչ մեկ պատճառ: Դու նրան ճանաչում էիր նույնքան, որքան ես:

Արդյո՞ք Ֆյուրկովը Նիկոլին սիրել էր հուսահատորեն: Այդ պատճառո՞վ էր ինքնասպան եղել: Նիկոլն իմ սիրու-հին էր դարձել նրա մահվանից երեք ամիս առաջ: Երեք ամսում ես նրա հետ պառկել էի հինգ անգամ՝ ձեռք առ-նելով հազար ու մի նախազգուշություն: Մենք աշխարհի

ամենագաղտնապահ, ամենազգույշ սիրահարներն էինք: Ոչ մի նամակ չէինք փոխանակում, ոչ մի որոշակի տեղ չունեինք միմյանց հանդիպելու համար: Հնարավոր չէր, որ Ֆյուրկովը կասկած ունենար մեր հարաբերության մասին: Ես շատ էի հարգում նրան և ոչ մի վիշտ չէի ուզում պատճառել:

– Ինժեներների հետ տեսնվե՞լ ես:

– Այո՛, ամեն ինչ լավ է ընթանում:

– Լողանո՞ւմ ենք:

– Լողանում ենք:

* * *

Վանիեն ուրիշների հետ այնքան ընդհանուր դիմագծեր ուներ, որ ես կարծում էի, թե ամենուր նրան եմ հանդիպում: Նա նմանվում էր բոլորին: Նույնիսկ նրա քայլվածքը չփոթվում էր ուրիշների քայլվածքի հետ: Նայած իմ հոգեվիճակի՝ փողոցներում ես հանդիպում էի տասը, տասնհինգ, երեսուն Վանիեների: Այս օրերին ոչ մի ցանկություն չունեի նրան տեսնելու: Տեսակցել էի մի քանի ինժեներների հետ և այցելել որոշ տեղեր իմ ապագա գրասենյակի համար: Անգործությունը զայրացնում էր ինձ: Բարեբախտաբար Նիկոլն այստեղ էր:

– Դե՛, արա՛գ, քշի՛ր, քշի՛ր …

Լուսակիրը կանաչ էր ցույց տալիս: Սեղմեցի արագացուցչի ոտնակը: Լճի երկայնքով սլանալիս կարծեցի՝ տեսա Վանիեին, որը դահուկում էր ջրի վրա: Կանգ առա: Հաստատ նա՞ էր: Հատուկ դասե՞ր էր ստացել: Մի սիգարետ վառեցի: Մոտորանավակը սահում էր ջրի երեսին: Դահուկները եռուն փրփուրի մի սպիտակ հետք էին թողնում իրենց հետևից: Պատրաստվում էի կրկին ավտոմեքենա նստել, երբ դահուկողը լճի եզերքից քսան մետր հեռավորության վրա սլացավ անցավ իմ առջևից: Վանիեն էր: Ակնոց չէր դրել: Ձեռքով նշան արեցի: Բարձրացրեց թևը: Հինգ րոպե հետո նորից անցավ.

– Մարդասպա՛ն:

Կարծեցի, թե ճիշտ չեմ լսել: Սպասեցի: Տասը րոպե հետո կրկին անցավ: Բարեկամաբար բարձրացրեց թևը.

– Մարդասպա՛ն:

Հիմարացե՞լ էր: Արյունը խուժեց գլուխս: Ինչպե՞ս էր հանդգնում այդպես խոսել ինձ հետ: Ամեն մարդ կարող էր լսել: Ստո՛ր արարած: Այդ բառը երեսիս շպրտում և անհետանում էր: Ծայր աստիճան զայրացած՝ սպասեցի նրան: Պտույտ էր գործում լճի վրա: Կարծում էի, թե կրկին կանցնի ափի մոտով, բայց մոտորանավակը հեռանում էր: Քսան րոպե անց նա սլանալով դարձյալ անցավ այնքան մոտիկից, որ ամբողջ մարմինս ողողվեց ջրի ցայտքերով.

– Մարդասպա՛ն:

Հարկավոր էր հանգիստ մնալ և բացատրություն պահանջել: Ճզմեցի սիգարետս ու գցեցի: Այո՛, մի լավ բացատրություն, անկեղծ և վերջնական: Թույլ չէի տալու, որ այս մարդը քթիցս բռնած ինձ ման ածեր, ինչպես կամենար:

Լճի վրա կառուցված էր մի փոքր ամբարտակ: Մոտորանավակներն այնտեղից էին մեկնում: Շատ հանգիստ, շատ զուսպ ուղղվեցի դեպի այն ամբարտակը և սպասեցի: Մի քանի րոպե անց մոտորանավակը բաց թողեց Վանիեին: Առանց դահուկները ոտքերից հանելու՝ նա նստեց ամբարտակի վրա: Ապրելու ուրախությունն էր վայելում:

– Ինչպե՞ս եք:

Չպատասխանեցի: Նա ձեռքով նշան արեց մի տղայի, որը նրա ակնոցը բերեց հանձնեց նրան: Վանիեն ակնոցը դրեց աչքերին և դառնալով ինձ՝ ասաց.

– Բարկացե՞լ եք:

Երբ տղան հեռացավ, մոտեցա Վանիեին, կանգնեցի նրա կողքին և, աշխատելով պահել սառնարյունությունս, շշնջացի.

– Դուք ... դուք ... ինձ ...

Ոտքերս ինձ չէին ենթարկվում: Կակազում էի՝ վստահաբար կյանքումս առաջին անգամ լինելով: Տհաճ մի զգացողություն համակել էր ինձ: Վախեցա: Փնտրեցի սիգարետի տուփս: Դժվարությամբ էի շնչում: Չէի համարձակվում խոսել: Նորի՞ց էի կակազելու:

– Քիչ ... առաջ, երբ դուք անցաք իմ մոտից ...

Մի պարզ, անցավոր միջադեպ. բառերը բնական կերպով պտտվում էին լեզվիս վրա: Վանիեն բարձրացրեց գլուխը: Ակնոցը թրջվել էր: Շարունակեցի.

– Քիչ առաջ դուք ինձ հետ խոսեցիք: Դուք... մի բառ շպրտեցիք իմ երեսին: Ինչո՞ւ:

Նա չափազանց զարմացած թվաց.

– Ես ձեզ խո՞սք ուղղեցի:

– Դուք այդ շատ լավ գիտեք: Եվ մի քանի՛ անգամ:

– Սպասե՛ք ... Ա՛հ, հիշում եմ: Դուք ինձ լսեցի՞ք: Ես բարձրաձայն ձեզ ասացի. «Այս մարզաձևն առողջարար է»*:

Ձի՞շտ էր ասում: Սխա՞լ էի լսել արդյոք:

Ծիծաղելի չպիտի՞ դառնայի՝ կրկնելով այն բառը, որը կարծել էի, թե լսել եմ: Շարունակեցի՝ փոխելով խոսքս.

– Երբվանի՞ց եք ջրային դահուկով զբաղվում:

– Զբաղվել եմ մշտապես:

– Ինչո՞ւ ակումբ չգնացիք: Ձրի է:

– Նախընտրում եմ փողով զվարճանալ:

* Տես էջ 59-ի ծանոթագրությունը:

– Լա՛վ, լա՛վ ...

– Նորից եմ գնում, կտեսնվենք:

Մոտորանավակը վերադառնում էր: Չէի ուզում, որ նա մեկներ այդ տպավորության տակ: Ուզում էի խոսել հետը, թափանցել նրա մտածման խորքը:

– Լսի՛ր, Վանիե՛, այս երեկո մենք հրավիրվել ենք Կամֆիրենց տուն: Չե՞ք ուզում միանալ մեզ: Համակրելի մարդիկ են: Դե՛, երկար մի՛ մտածեք: Ընդունե՛ք:

– Կանֆիրենց տո՛ւն...

– Շատ մոտ են ապրում մեզ: Ես ձեզ կսպասեմ դռան առաջ:

– Համաձայն եմ: Ինչո՞ւ չէ:

– Ինչո՞ւ չէ, – կրկնեցի ես:

Նա ամուր կառչեց մոտորանավակի հետևի մասից, բարձրացրեց թևը և ասաց.

– Մարդասպա՛ն:

– Ի՞նչ ասացիք:

– Մինչև այս երեկո*:

* * *

Նիկոլը պատրաստվում էր: Առաջին անգամ էր, որ մենք միասին դուրս էինք գալու, և նա ուզում էր գեղեցիկ երևալ: Կամֆիրները միշտ էլ շատ շքեղ, շատ ճոխ ընդունելություններ էին կազմակերպում: Այս երեկոն կարևոր էր ինձ համար: Նիկոլն ու ես դեմառդեմ պիտի դուրս գային Ֆյուրկովի բոլոր բարեկամների հետ: Մի տեսակ անձկության և երկյուղի մեջ էի: Հետո մտածեցի Վանիեի

* Ֆրանսերեն «Ce sport est sain» (Այս մարզաձևն առողջարար է» և «A ce soir» (Մինչև այս երեկո» բառերի միաձուլված արագ արտասանությունը այնքան մոտ է «assassin» (մարդասպան) բառի արտասանությանը, որ կարող է շփոթության տեղի տալ և թյուրալսությամբ ընկալվել որպես «մարդասպան» (թարգմ.):

մասին: Ի՞նչ պիտի անեի նրա հետ: Համոզված էի, որ կգա: Խորհուրդ հարցրի Նիկոլից:

– Հրավիրի՛ր Ֆրանսուազին, – ասաց նա:

– Ֆրանսուազ Գրիսակի՞ն:

– Ինչո՞ւ չէ: Նա զվարթ և համակրելի աղջիկ է:

– Ունե՞ս հասցեն:

– Ո՛չ, բայց գիտեմ, որ նա հիմա ապրում է խաղարանին մոտիկ:

Վարանեցի: Ֆրանսուազ Գրիսակը քսաներեք տարեկան գեղեցիկ աղջիկ էր՝ թխահեր, կանաչ աչքերով: Նա հանձն էր առել անպաշտոն կերպով ապրել նախկին մի ատենակալի հետ, նրա հաշվին:

– Կփորձեմ գտնել նրան:

Սովորականի պես փողոցները լցված էին զբոսաշրջիկներով:

– Օրիորդ Գրիսակի՞ն եք ուզում: Նա այստեղ չի ապրում:

Դռնապանուհին փակեց դուռը: Ֆրանսուազը շատ հարմար էր Վանիեին: Նա անտարակույս սիրում էր կանանց: Գուցե կսիրահարվե՞ր այս աղջկան: Այս միտքն ինձ դուր եկավ, չգիտեմ ինչո՞ւ: Հարկավոր էր գտնել նրան: Մտա մի ուրիշ շենք: Դռնապանը թերթ էր կարդում: Նա ուշադիր նայեց ինձ: Ճանաչե՞լ էր:

– Օրիորդ Գրիսակին եմ փնտրում:

Ռադիոընդունիչի վրա շարված էին կինոժուռնալներ: Տասնհինգ տարեկան մի աղջիկ հյուսք էր անում: Գուցե նրա աղջիկն էր գնում այս բոլոր թերթերը:

– Ես ձեզ տեսել եմ ինչ–որ տեղ …

Որպեսզի երկար չխոսեմ, ուզում էի նրան ասել, որ հավանաբար իմ լուսանկարն է տեսել տեղական մամուլում: Փոքր աղջիկն իսկույն կռահեց:

Նա ուշադիր նայեց ինձ, ապա շարունակեց իր հյուսքը:

– Այդ անձը այստեղ չի բնակվում:

Հազիվ էի մեջքս դարձրել, որ աղջիկը վազեց իր հոր մոտ և ինչ–որ բան փսփսաց նրա ականջին: Տասնյակ տներ կային խաղարանի շուրջը: Իսկ եթե Վանիեն ծուղակն ընկնե՛ր … Զգացի, որ քրտնում եմ: Հենց նոր մի հրաշալի միտք էի հղացել:

– Շնորհակալություն:

Նա այս շենքում էլ չէր բնակվում: Այդ միտքը հետզհետե ավելի խորն էր արմատավորվում իմ մեջ: Զգիտեի, թե ինչ արդյունք կունենա, բայց ենթադրում էի, որ արդյունքը դառն կլինի: Վանիեն և Ֆրանսուազը … Ֆրանսուազը՝ երիտասարդ, հեշտասեր, պճնամոլ, իսկ կշեռքի մյուս թաթի վրա Վանիեն՝ մոդայից ընկած իր ակնոցով և ծույլ քայլվածքով: Սակայն նա զբաղվում էր ջրի վրա դահուկելով. վերջին հաշվով դա շատ բնական էր: Ինչպես առողջարանային այս քաղաքի բոլոր բնակիչները, հավանաբար նա ևս երիտասարդ հասակում զբաղվել էր այդ մարզաձևով:

– Ի՞նչ ասացիք, Գարի՞կ:

– Ո՛չ, Գրիսակ:

– Ինչո՞վ է զբաղվում:

Պառավ մի դռնապանուհի էր:

– Ոչնչով:

Նա թևերը երկինք բարձրացնելով՝ ասաց.

– Այստեղ այդ կարգի մարդ չկա: Այստեղ բոլորն էլ աշխատում են:

Եվ դուռը ուժեղ փակեց իմ առաջ: Ամեն գնով հարկավոր էր գտնել նրան: Հրեցի ծանոթ մի բարի դուռը: Մատուցողին ճանաչում էի: Նա ընդառաջ վազեց ինձ և ասաց.

– Շա՛տ գոհ, շա՛տ ուրախ եմ ձեզ համար:

Եվ ձայնը իջեցնելով ավելացրեց.

– Ֆյուրկովը տականք էր:

Ես այդ կարծիքին չէի: Զուզեցի վիճել: Հարցրի, թե գի-տե՞ Ֆրանսուազի հասցեն:

– Նա ապրում է 15–րդ շենքում:

– Շնորհակալ եմ:

– Ձե՞ք ուզում մի բաժակ խմել:

– Կվերադառնամ:

Այլևս բնավ ոտքս չեմ դնի այս բարից ներս: Գնացի 15-րդ շենքը: Ֆրանսուազն ապրում էր երկրորդ հարկում: Սանդուղի գլխին՝ հարթակում, մի պահ տատամսեցի, հե-տո հնչեցրի զանգը:

Կարծես անսպասելիորեն հայտնված մի ուրվական լի-ներ. կանգնած էր ուղիղ իմ դիմաց՝ խաղաղ, անփույթ, եր-ջանիկ: Նրան երբեք չէի տեսել ձգված վիճակում: Երջան-կությունը նրա համար բնական մի հոգեվիճակ էր:

– Մտե՛ք, մտե՛ք:

– Ձե՞մ խանգարում ձեզ:

– Ընդհակառակը:

Մտա ներս: Նա ապրում էր պարզ, բայց ճաշակով կա-հավորված մի բնակարանում:

– Ֆրանսուա՛զ, մի բան եմ խնդրում ձեզնից, մի ծառա-յություն:

Նայեց ինձ՝ ժպտալով:

– Բավականին դժվար մի ծառայություն է:

Ուզում էի նրան պատմել իմ անցկացրած բոլոր նե-ղությունների մասին: Ուզում էի ասել նրան, որ հարկավոր է հաջողեցնել ...

– Իսկ Նիկո՞լը:

– Հենց նա՛ խորհուրդ տվեց ինձ, որ այս երեկո ձեզ հրա-վիրեմ Կամֆիրների տուն...

– Այս երեկո ես ազատ չեմ:

– Շա՛տ կարևոր է:

– Այդ դեպքում ազատ եմ այս երեկո:

Եվ բարձրաձայն ծիծաղեց: Ես դեռ հոգեպես լարված, անհանգիստ վիճակում էի:

– Որքա՜ն ջղային եք ... Լա՛վ, լսում եմ ձեզ: Ձե՞ք ու-զում նստել:

– Հիմա ժամը գրեթե ինն է ... Իրականում հարցը շատ պարզ է: Ահա՛. այս երեկո իմ բարեկամներից մեկին հրա-վիրել եմ Կամֆիրենց տուն: Նա մենակ է, երկչոտ ...

Ֆրանսուազը խմեց իր վիսկին փոքր ումպերով:

– Ինչպիսի՞ մեկն է :

– Արդեն հասուն տղամարդ է: Բայց ինձ համար շատ կարևոր է նրա բարեկամությունը: Հետագայում կբացատ-րեմ ձեզ: Ուզում եմ, որ ծանոթանաք հետը: Ավելին՝ հրա-պուրեք նրան: Էլ ավելին, որ նա սիրահարվի ձեզ: Հնարա-վո՞ր է: Ո՛չ, ո՛չ, հարց մի՛ ուղղեք ինձ: Պատասխանե՛ք ան-կեղծորեն:

– Համաձայն եմ:

Լայն շունչ քաշեցի: Նստեցի մի բազկաթոռի արմնկա-կալի վրա: Քրտինքի մեջ լողում էի: Սիգարետ առաջարկեց:

– Զարմանալի է, – ասաց նա: – Ինձ թվում է, որ ես ապ-րել եմ այս պահը ... շատ տարօրինակ է: Եվ ավելացրեց.

– Անցած տարի էր ... Մոտավորապես ժամը տասը կլի-ներ: Այդ օրը Կամֆիրների տանը երեկույթ կար ... Ֆյուր-կովը եկել էր մեր տուն, որպեսզի ինձ հրավիրի այդ երե-կույթին... Քրտնել էր... Այն ժամանակ ես ապրում էի վե-ցերորդ հարկում, և վերելակ չկար ... Նա ուզում էր ինձ ներկայացնել իր բարեկամներից մեկին: Ես ընդունեցի: Այդ բարեկամը դուք էիք: Հիշո՞ւ մ եք ...

* * *

Տիկին Կամֆիրը ծագումով հունգարացի էր և ամուսնու քթից բռնած իր ուզածի պես ման էր ածում: Նա իր ժամանակն անցկացնում էր զանազան մեղեդիներ և կարոտալի երգեր հորինելով, որոնք ոչ մի հրատարակիչ չէր ուզում տպագրել: Նրա հորինած երգերը բոլորովին անարժեք չէին, բայց մարդ միշտ այն տպավորությունն էր ունենում, որ ինչ–որ տեղ լսել է դրանք: Նրա ամենաջերմեռանդ հիացողը նրա ամուսինն էր՝ բարեհամբույր, աննշան, համեստ մի մարդ:

Տարին մեկ անգամ Կամֆիրները տոնախմբություն էին սարքում իրենց տանը: Հրավիրում էին իրենց բոլոր բարեկամներին: Վլադիմիր Կամֆիրը այդ օրը իրավունք ուներ հարբելու: Նրա կինը քաջալերում էր նրան: Նա խմում և վերջում սկսում էր հրապարակավ նախատել իր կնոջը: Բայց ոչ ոք ուշադրություն չէր դարձնում դրան: Դա ընդունված կարգ էր: Նա իրավունք ուներ տարին մեկ անգամ ըմբոստանալու: Նախատում էր կնոջը հունգարերեն լեզվով՝ առանց ձայնը բարձրացնելու, ատամների միջից: Երբեմն, կամքից անկախ, նրա բերանից դուրս էին գալիս ֆրանսերեն բառեր, որոնք ծանր նշանակություն ունեին հավանաբար իր համար միայն. խամաճիկ, կոկորդիլոս, աղցան: Բայց հունգարական արտասանությամբ այդ բառերը մեկ երկրի սահմանից մյուսն անցնելով՝ դառնում էին թունալից, կծող:

Տիկին Կամֆիրը Նիկոլին ընդունեց աղավնու ղունղուները հիշեցնող քաղցր–մեղցր խոսքերով:

– Ինչքա՜ն գեղեցիկ եք, սիրունիկս ... եկե՛ք ... պատմե՛ք տեսնեմ...

Նա Նիկոլին քաշեց տարավ մի անկյուն՝ դաշնամուրի մոտ: Բոլոր հրավիրյալները եկել էին: Շուրջ երեսուն հոգի: Սրահում մատուցողներն անընդհատ շրջում էին խմիչքներով և աղանդերով լի ափսեներով: Երաժիշտները, հրավիրյալներին խառնված, օդը լցնում էին գնչուական մեղեդիներով: Ամեն ինչ նախատեսված էր հրավիրյալների հաճելի ժամանցի և հանգստի համար. աթոռներ դուրսը՝ այգում, խցանները հանված խմիչքներով լի շշեր, տաք ճաշեր նրանց համար, ովքեր քաղցած էին, աղմուկից մեկուսացված ընդարձակ մի հյուրասենյակ՝ քաղաքականության մասին խոսելու համար: Մթնոլորտը անչափ զվարճացնում էր Ֆրանսուազին: Վանիեն չէր եկել:

– Ուրախ եմ, որ կրկին տեսնում եմ ձեզ, սիրելի՛ Տալյան:

Քաղաքագլուխն էր՝ փոքրակազմ, գիրուկ մի մարդ: Խմել էր: Աչքերը փայլում էին: Նա թեւս մտավ և սկսեց ձեռքի թեթև հարվածներ տալ մեջքիս:

– Ի՜նչ ցավալի պատմություն, սիրելի՛ս: Բարեբախտաբար ամեն ինչ լավ վերջացավ: Արդարությունը սին բառ չէ, ինչ էլ որ ասեն:

Նա հայացքով հետևեց դեռատի մի կնոջ, որ դուրս էր ելնում հյուրասենյակից:

– Ինչ էլ որ ասեն, կյանքը գեղեցիկ է: Գրո՜ղը տանի: Ինձ թվում է, որ քսան տարեկան եմ: Երաժշտությու՜ն, կանա՜յք, խմի՜չք ... Ի՜նչ հրաշալի մարդիկ են Կամֆիրները:

Եվ նա դատարկեց երկու բաժակ վոդկա: Այնքան ուժեղ էր սեղմում թեւս, որ լրջորեն ցավ էր պատճառում: Խոսքը շարունակեց անիմաստ կերպով.

– Մտերմաբար ասեմ ձեզ. ուզում էի երաժիշտ դառնալ: Ջութակը իմ նախասիրությունն էր: Է՜հ, ինչ արած... Սքանչելի երաժշտություն. լսե՛ք սա ջութակները: Սիրելի՛ս, ես շատ ուրախ եմ, որ ձեզ համարում եմ մերոնցից: Խորապես վշտացած կլինեի...

Վանիեն չկար: Խաղարանի տնօրենը հանկարծակի

բռնեց ինձ: Նրա սիգարետի ծայրը սեղմված էր իր բարակ և չոր շրթունքների արանքում: Նա խոսեց ինձ հետ, բայց դեմքի գծերից ոչ մեկը չշարժվեց: Լինելով նախկին խաղամոլ՝ ձեռք էր բերել ինքնատիրապետում: Խոսում էր կարճ ընդհատումներով.

– Կեղտո՛տ, ստո՛ր ոստիկանություն: Միջնադարյան մեթոդներ: Մարդկանց հետ վարվում են, ինչպես անասուններին: Ազատությո՛ն, հավասարությո՛ն, եղբայրությո՛ն... Թույլ տվեք ծիծաղել (նա ծիծաղեց հեգնանքով): Բառե՛ր միամիտ ապուշների համար: Թքա՛ծ ունեմ (նա իհարկե չթքեց): Ամիսներով բանտարկում են մարդկանց, հետո բաց թողնում: Ինչո՞ւ: Ինչպե՞ս: Գաղտնիք ... Ցտեսությո՛ն, սիրելիս: Շնորհավորություններս:

Տիկին Կամֆիրը, դաշնամուրի առջև նստած, մի փոքր եղանակ էր նվագում Նիկոլի համար, որը հուսահատական ակնարկներ էր գցում իմ կողմը: Ես նշանացի հասկացրի նրան, որ համբերություն ունենա: Ֆրանսուազը գրադարակի կազմված գրքերն էր ուսումնասիրում: Վանիեն չկար: Ծանոթներիցս մեկը ինձ ներկայացրեց դեռահասակ մի կնոջ, որ հետևել էր իմ դատավարության ընթացքին: Նա ուներ մեծ բերան, խոշոր աչքեր և հագին՝ լայնաբաց մի մեծ շրջազգեստ: Խիստ զայրացած էր թվում.

– Դողում էի ձեզ համար: Ինչո՞ւ այդքան երկար պահեցին ձեզ: Ճանաչո՞ւմ էիք գլխավոր դատախազին: Կարծեք հատուկ թշնամանք ունեցած լիներ ձեր նկատմամբ: Ի՜նչ դաժան մարդ ...

Արդեն չէի լսում նրան: Ի վերջո ինձանից խնդրեց իմ դատապաշտպանի հասցեն, որը խնամքով նշեց մի փոքրիկ ծոցատետրում իր շրթնաներկի ձողիկով և անհայտացավ հրավիրյալների մեջ: Ես միացա Ֆրանսուազին: Սա, առանց իր գրքից աչքերը բարձրացնելու, ասաց ինձ.

– Նա նույնպես ուշանում է:

– Ինչպե՞ս թե նա նույնպես:

– Ինչպես որ դու՛ք ուշացաք անցած տարի, երբ Ֆյուրկովն ուզում էր մեզ միմյանց ծանոթացնել:

– Ուշացե՞լ էի: Ես ոչինչ չէի խոստացել: Վստահ չէի, թե կգամ ...

Լռեցի՝ տարտամորեն անհանգստացած: Ի դեպ, դա ճիշտ էր: Ֆյուրկովն ինձ հրավիրել էր ... Նա ինձ ներկայացրել էր Ֆրանսուազին ... այս նույն հյուրասենյակում, այս գրադարակի մոտ:

– Ինչպե՞ս տեղի ունեցավ դա:

Ֆրանսուազը ձեռքի գիրքը տեղը դրեց և ասաց.

– Շատ պարզ: Երբ դուք եկաք, նա շտապ դիմեց դեպի ձեզ, քաշեց տարավ բուֆետ, և երբ դուք սկսեցիք խմել, ես եկա միանալու ձեզ: Ինչպես նախապես պայմանավորվել էինք, ես, իբր թե անզգուշությամբ, թեթևակի բախվեցի ձեզ, և Ֆյուրկովը ձեռքիցս բռնելով՝ ասաց ինձ. «Ի՜նչ անակնկալ: Ֆրանսուա՛զ, ձեզ ներկայացնեմ իմ լավագույն բարեկամին»:

Ճիշտ էր:

– Բայց ինչո՞ւ էր ուզում ինձ ներկայացնել ձեզ:

– Դե գիտեք, էլի, որպեսզի մենք միասին պառկենք: Ճիշտ է, դա տեղի չունեցավ: Ինձանից լավ ո՞վ կարող էր իմանալ այդ գործը:

Եվ բարձրաձայն ծիծաղեց:

– Դուք երկչոտ էիք: Նա ուզում էր ծառայություն մատուցել ձեզ: Դե՛, գնացե՛ք մի բաժակ բան բերեք ինձ, որ խմեմ՝ փոխանակ այդ մասին մտածելու ...

Կամֆիրը, որ դեռ հարբած չէր, աչքով նշան էր անում ինձ: Ես բոլորովին մոռացել էի, որ նա Ֆյուրկովի մտերիմ բարեկամն էր: Ֆյուրկովի մահից հետո առաջին անգամ է,

որ տեսնում էի Կամֆիրին: Գնացի միացա նրան: Արդյոք նա՞ էլ ինձ մեղավոր էր կարծում: Կամֆիրը ամուր սեղմեց երկու ձեռքերը և իրանը ետ գցելով՝ ասաց.

– Ի՜նչ դժբախտություն, խեղճ բարեկամս, ի՜նչ դժբախտություն: Ո՞վ կարող էր նախատեսել: Դեռ երկու օր առաջ ... այդ տխուր դեպքից, մենք միասին ախորժաբեր խմիչք էինք ըմպում: Նա խոսում էր իր ծրագրերի մասին: Անհավատալի բան:

Իսկապես անհավատալի էր: Ինքնասպանությունից մի քանի ժամ առաջ պատվիրում էր գեղանկարներ, հեռախոսում, զբաղվում իր գործերով ...

– Ոչ ոքի վրա չես կարող վստահություն ունենալ. մի բարեկամ, որին ճանաչում ես քսան տարուց ի վեր, գալիս է քեզ տեսնելու, խոսում է իր ծրագրերի մասին, ցտեսություն է ասում քեզ, իսկ հաջորդ օրը թերթերից իմանում ես, որ ինքնասպանություն է գործել:

Շատ կցանկանայի, որ Վանիեն այստեղ լիներ և լսեր այս խոսքերը: Ոչ ոք չէր կասկածի ինձ: Կամֆիրը շարունակեց.

– Ֆյուրկովը ձեզ համարում էր իր որդին: Նա շատ գոհ կլիներ՝ ձեզ տեսնելով Նիկոլի հետ: Դուք երիտասարդ եք: Ապրե՛ք, խմե՛ք ...

Մատուցողը բերեց մի չիչ վոդկա ու մի բաժակ և տվեց նրան: Կամֆիրը հարմար մի անկյուն ընտրեց և տեղավորվեց այնտեղ: Նա հարբում էր կանոնավոր կերպով:

Հենց այդ րոպեին էր, որ ես նկատեցի Վանիեին: Նա պետք է նոր եկած լիներ: Ձեռքում բռնել էր մի բաժակ՝ կիսով չափ դատարկ:

– Սպասում էի ձեզ ...

Նա հագել էր մոխրագույն զգեստ, որը երիտասարդացնում էր նրան:

Մազերը թրջված էին: Շատ հանգիստ չէր երևում:

– Ի՞նչ նորություն, – հարցրեց առանց պատճառի:

Պատասխանիս չսպասեց և սկսեց նայել շուրջը:

– Եկեք գնանք մի պատառ բան ուտենք:

Նրան քաշեցի տարա բուֆետ:

– Ես այն տպավորությունն ունեմ, որ ձեզ վաղուց եմ ճանաչում, – ասացի՝ խորտիկներով լի մի պնակ մատուցելով նրան:

Նա մեղմ ծիծաղեց:

– Շուտով ձեզ կներկայացնեմ տիկին Կամֆիրին: Առայժմ նա զբաղված է:

Եվ նրան ցույց տվեցի տիկին Կամֆիրին, որը դաշնամուր էր նվագում և վերջապես կարողացել էր գրավել Նիկոլի ուշադրությունը: Վանիեն երկար նայեց նրանց, ապա դատարկեց իր բաժակը:

– Ձե՞ք ուզում պարել, – հարցրեց նա:

Ամեն անգամ, երբ բերանը բաց էր անում, ինձ թվում էր, թե ուր որ է մի մեղադրանք պիտի անի ինձ:

– Քիչ հետո: Նախ պետք է բարձրացնեմ ձեր տրամադրությունը:

– Բայց ես շատ լավ տրամադրության մեջ եմ: Ուզում եմ մի բաժակ էլ խմել:

Ինչ – որ մեկը մեղմորեն բախվեց ինձ: Շրջվեցի զարմացած: Ֆրանսուազն էր:

– Ի՜նչ անակնկալ, Ֆրանսուա՛զ: Ձեզ ներկայացնեմ իմ լավագույն բարեկամին ...

Վանիեն սեղմեց նրա ձեռքը: Ֆրանսուազը վերցրեց խորտիկի մի փոքրիկ պատառ և սկսեց կծոտել իր սրածայր ատամներով:

– Վաղո՞ւ ց եք իրար ճանաչում, – հարցրեց նա չարաճճի մի փայլ շողացնելով իր աչքերում:

Իմ փոխարեն Վանիեն պատասխանեց.

– Շա՜տ վաղուց:

Ես վատ տրամադրության մեջ էի: Իրար ետևից խմեցի երկու բաժակ վոդկա: Ալկոհոլը այրեց կոկորդս: Ուզում էի ես էլ հարբել Կամֆիրի նման: Խմել և մոռանալ: Երաժիշտները շրջապատեցին մեզ: Ուզում էի մենակ մնալ:

– Ներեցե՛ք ինձ, շուտով կվերադառնամ:

Դուրս եկա: Այգում փոքրիկ լույսեր վառվում– հանգում էին արագ– արագ: Եղանակը մեղմ էր: Նստեցի մի ծառի մոտ և քանդեցի փողկապս: Շնչեցի ավելի ազատ: Վերցրի մի շիշ վոդկա, որ դրված էր սեղանին, և սկսեցի խմել ամենայն հանդարտությամբ: Հիմա ալկոհոլն այլևս չէր այրում կոկորդս. այն թափանցում մտնում էր արյանս մեջ և հաճելիորեն թմրեցնում ուղեղս:

– Մենա՞կ եք, սիրելի՛ բարեկամ:

Կամֆիրն էր: Ինչո՞ւ էր լքել իր անկյունը: Նայում էր ուղղակի աչքերիս մեջ: Հարբա՞ծ էր: Ձեռքում բռնած շշի պարունակությունը գրեթե նույնն էր մնացել: Արդեն մի շիշ դատարկե՞լ էր, կամ նո՞ւյն շիշն էր: Նստեց կողքիս՝ խոտի վրա:

– Ես էլ եմ մենակ, –ասաց նա: – Միշտ էլ մենակ եմ եղել: Ո՛չ , ոչ միշտ ... առաջ, երբ պայքարում էի փող վաստակելու համար, մենակ չէի: Այժմ կողքիս այլևս ոչ ոք չկա: Փողը և ես: Հիմա բոլորովին մենակ եմ: Տարօրինակ է, չէ՞:

Ժամանակ առ ժամանակ հրավիրյալների աղմուկ– աղաղակը ներսից մեզ էր հասնում:

– Բարեկամներ. բազմաթիվ բարեկամներ: Բոլորն էլ ազնիվ են: Բայց ի՞նչ է ազնվությունը: Ես կարիք չունեմ ազնվության: Ես կարիք ունեմ ջերմությա՛ն ... մարդկայի՛ն ջերմության:

Նայեց շշին.

– Ես թաքուն շատ եմ խմում, բայց երեկոյան: Օրվա ընթացքում մնում եմ ժուժկալ: Ձեմ ուզում վիշտ պատճառել կնոջս: Նա հավատում է: Ինչի՞: Չգիտեմ: Բայց հավատում է: Շարունակում է հավատալ: Կյանքը նրա համար մի թել է, որ չի կտրվում բնավ: Նա հավատում է, որ ինքը ծնվել է այն օրը, երբ ստեղծվել է երկիրը, և կմահանա միայն, երբ վերջ կգտնի այս աշխարհը: Նրա համար բոլոր մարդիկ, որ մահանում են, տկարամիտ արարածներ են: Անմտություն չէ՞ ...

Կամաց ծիծաղեց, ապա մի ումպ խմեց և կռացավ ինձ վրա.

– Ճշմարտությունը ալկոհոլի մեջ է, բայց չպետք է այդ բանն ասել ... Ա՛, հա՛, ի՞նչ էի ուզում ասել ձեզ ... այո՛, այո՛ ... եթե հարցս անհարմար է, մի՛ պատասխանեք. ուզում եք ...

Եվ իսկույն շարունակեց.

– Դուք վերջին մարդն էիք, որ տեսաք Ֆյուրկովին իր մահվանից առաջ: Ասացե՛ք, խնդրեմ ...

Նա էլ ավելի կռացավ ինձ վրա: Ձայնը դողում էր.

– Ֆյուրկովը հարբա՞ծ էր, երբ ինքնասպան եղավ:

Պե՞տք էր ստել հաճույք պատճառելու համար նրան:

– Ո՛չ, նրա միտքը լրիվ պայծառ էր: Նա տատանվում էր ապուխտի և պանրի միջև:

– Ինչպե՞ս, սիրելի՛ բարեկամս ...

Ես նրան հարցրել էի, թե ո՞րն էր նախընտրում՝ ապուխտո՞վ թե՞ պանրով սենդվիչ: Նա մի պահ մտածեց, իսկ հետո ...

– Ափսո՜ս, հազա՜ր ափսոս ...

Կամֆիրը վեր կացավ, լայն շունչ քաշեց և հառաչեց.

– Ի՜նչ ցավալի կորուստ:

Կես ժամ անց՝ վերադարձա հյուրասենյակ: Վանիեն միշտ այնտեղ էր: Տիկին Կամֆիրը, Նիկոլը և Ֆրանսուա-զը շրջապատել էին նրան:

* * *

– Ալլո՛, Ֆրանսուա՞զ: Արթնացրի՞ քեզ:

– ...

– Մենա՞կ եք:

– Պառավում եմ:

– Պատմե՛ք շարունակությունը:

– Երազո՞ւմ եք: Ի՞նչ շարունակություն:

– Մենք ձեզ առանձին թողեցինք Վանիեի հետ առավոտ-յան ժամը երկուսին: Դուք քաղցած էիք:

– Ճիշտ է, ես միշտ քաղցած եմ լինում այս օրերին: Մենք սոխով սուպ կերանք Էժենի մոտ:

– Հետո՞:

– Հետո քայլեցինք: Նա ինձ «բարի գիշեր» ասաց և վե-րադարձավ իր բնակարանը:

– Ինչո՞ւ:

– Նա ցանկություն չուներ ինձ հետ պառկելու: Շատ պարզ է, չէ՞. առաջարկություն չարեց ինձ:

– Անհավատալի է: Դուք երիտասարդ եք, գեղեցիկ, ցանկահարույց: Նա ամուրի է: Դուք խմել էիք ...

– Վերհիշե՛ք: Անցած տարի էր: Այն ժամանակ ես մի քիչ ավելի երիտասարդ էի. դուք ամուրի էիք, և մենք խմել էինք ...

– Լա՛վ, անցնենք: Ժամադրվե՞ց ձեզ հետ: Վերցրե՞ց ձեր հեռախոսի համարը:

– Ոչ իսկ այդ:

– Ինչի՞ մասին խոսեցիք:

– Ձեր մասին: Կարծում եմ ձեզ շատ է սիրում:

– Անկարելի է:

– Նա չէր դադարում ձեր մասին խոսելուց: Անկեղծ ա-սած՝ կարծում եմ հատուկ համակրանք ունի ձեր հանդեպ: Հենց որ արտասանում էր ձեր անունը, ոգևորվում էր: Ճա-շի ամբողջ ընթացքում ձեր գովեստն արեց: Նա ձեզ համա-րում էր համակրելի, լուրջ, գիտակից անձնավորություն:

– Դա հնարավոր չէ:

– Ինչո՞ւ: Դուք համակրելի, լուրջ, գիտակից անձնավո-րություն չե՞ք:

– Խոսե՞ց ձեզ հետ ... Ֆյուրկովի մասին:

– Բոլորովին: Անընդհատ ձեր գովեստն էր անում: Կար-ծում եմ, որ ... Կարո՞ղ եմ անկեղծ լինել: Նա ցանկանում է, որ դուք և ես պառկենք միասին: Զարմանալի է, չէ՞:

* * *

Վանիեն առաջինը եկավ ճաշի: Ես հրավիրել էի նաև Ֆրանսուազին: Նիկոլը սեղանը պատրաստել էր բացօթյա պատշգամբում: Ինձ համար շատ կարևոր էր այս ճաշը: Վերջ պիտի տայի Վանիեի հետ իմ ունեցած հարաբե-րությանը: Սա մի տեսակ մնաս բարովի ճաշ էր: Ուզում էի մեկընդմիշտ ազատվել հոգեկան իմ ծիծաղելի տագնապնե-րից: Ի վերջո ի՞մն էր հանցանքը, որ Ֆյուրկովը ինքնաս-պանություն էր գործել: Իսկ այս Վանիեն կարծում էր, թե ես մեղավոր եմ: Ի՞նչ նշանակություն ուներ ինձ համար մեկ մարդու ամբաստանությունը: Մի կողմում՝ Վանիեն, մյուս կողմում՝ դատարանն ու իմ բոլոր բարեկամները: Ծիծաղելի էր, շատ ծիծաղելի:

Տեսնելով, որ Վանիեն գալիս է, ուզում էի նրան ասել, որ անմիջապես հեռանա՝ առանց որևէ բացատրություն տալու: Բայց նա ծաղիկներ էր բերել, իսկ Նիկոլը խմիչք էր

մատուցում նրան: Դե, ինչ արած, ավելի լավ էր հարցը փակել ազնվությամբ:

– Մի քիչ սառո՞ւյց:

– Երբ սառույցը սահեցնում էի նրա բաժակում, ձախավեր մի շարժում արեցի, և վիսկին թափվեց նրա բաճկոնի վրա:

– Կարևորություն չունի, մեծ բան չէ, – ասաց նա:

Նիկոլը գնաց մի անձեռոցիկ բերելու:

– Բան չկա, բան չկա ...

Նա մի տեսակ քաշված, երկչոտ վիճակում էր: Շարժումները ծանր էին, դանդաղ և անվստահ: Խոսում էր միայն այն ժամանակ, երբ հարց էինք տասիլ նրան: Քանի որ Նիկոլն ուշանում էր գալ, ես նրան հարցրի, թե ուզո՞ւ մ է արդյոք ծանոթանալ մեր առանձնատանը:

– Սիրո՛վ, – ասաց նա:

Մեծ ցանկություն ուներ տեղից շարժվելու: Մենք միասին այցելեցինք առաջին հարկը: Նա հլու– հնազանդ հետևում էր ինձ և զարմացած աչքերով նայում այն ամբողջ շքեղությանը, որ տարածվում էր մեր շուրջը:

– Ահա և մեր սենյակը:

Նա մի պահ տատանվեց, հետո ներս մտավ: Պատերը զարդարված էին յուղաներկ նկարներով, որոնք ամբողջ մի հարստություն արժեին: Վանիեն սկսեց ուշիուշով քննել յուրաքանչյուր գեղանկար: Աչքերը չէր կարողանում հեռացնել դրանցից:

– Ի՜նչ հրաշալի նկարներ: Ասացե՛ք ինձ, պարոն Տալյան...

Նա մի փոքր վարանեց, ապա ասաց.

– Այս նկարները Ֆյուրկովի՞ն են պատկանում:

– Այո՛, Ֆյուրկովին էին պատկանում:

Նա ձեռքերը իրար միացրեց և շարունակեց.

– Զմայլելի գործեր են: Ինչպիսի՜ արվեստ: Ներեցե՛ք ինձ ... Բայց իսկապես չէի սպասում, որ նման գլուխգործոցներ կգտնեմ այստեղ:

Շլացած էր: Հետո միանգամից հայացքը նկարներից կտրեց և մի տեսակ թշնամական տոնով ասաց ինձ.

– Խոստովանեք, որ բախտավոր եք:

Չէի սպասում այսպիսի հարձակողական արագ պատասխանի:

– Ինչո՞ւ եմ բախտավոր:

– Դուք այդ լավ գիտեք:

– Լսե՛ք, Վանիե՛ ...

Զայրանալն անօգուտ էր. չուզեցի շարունակել. բարձրացրի ուսերս և ասացի.

– Դուք դառնացած եք, ամեն տեղ վատն եք տեսնում:

Հեգնանքով ծիծաղեց և ասաց.

– Սխալվում եք: Ես վատը տեսնում եմ այնտեղ, ուր այն կա:

Բարկացած էր: Նրա վերաբերմունքը նեղություն պատճառեց ինձ:

– Ես նկարներ եմ ցույց տալիս, իսկ դուք սկսում եք բարկանալ: Ձե՞ք կարծում, որ չափազանցում եք:

– Չափազանցո՞ւմ: Դուք պարկեշտություն չունե՞ք բնավ: Իմ ամբողջ կյանքում ես երազել եմ նկարներ ունենալ:

– Դուք միակը չեք այդ բանը երազող:

– Հիմարություններ դուրս մի՛ տվեք:

Համբերությունս սպառվել էր: Ուզում էի դռնից դուրս շպրտել նրան: Նա նույնքան զայրացած էր, որքան ես:

– Առայժմ աստվածները ձեզ հետ են, – ասաց: – Դուք ապրում եք շքեղության մեջ, անհոգ ... ունեք առանձնատուն, ավտոմեքենա ...

Լռեց, ապա ավելացրեց.

– Բայց այս նկարնե՛րը ... Դուք իրավունք չունեք այս նկարներն ունենալու:

– Ինչո՞ւ:

Նա մի պահ խառնվեց, ապա ասաց.

– Որովհետև այս նկարները ներկայացնում են մի երազ, որ իրագործված է մի մարդու կողմից: Դուք իրավունք չունեք այդ երազը գողանալու նրանից: Մանավանդ դո՛ւք:

– Ավելի պա՛րզ խոսեք:

Զայրացել էի: Հիմարաբար: Վանիեն ավելացրեց.

– Առանձնատունը, ավտոմեքենան, կինը ... սրանք դեռ ոչինչ, բայց ո՛չ այս նկարները, ո՛չ այս նկարները:

Կատաղել էր: Փորձեցի պահել սառնարյունությունս:

– Այս նկարները Նիկոլին են պատկանում ... Նիկոլ Ֆյուրկովին ... Դրանք իմը չեն: Գո՞հ եք:

Այս խոսքերս հանգստացրին նրան:

– Փոխենք նյութը, – ասացի, – այլապես պիտի բարկանամ:

Հենց այդ րոպեին Ֆրանսուազը ժամանեց: Նա թարմ էր, հրապուրիչ: Վանիեն հազիվ մի թեթև ժպիտ շնորհեց նրան, և մենք սեղան նստեցինք:

– Ի՜նչ հրաշալի օր է, – ասաց Նիկոլը:

Վանիեն նայեց նրան: Արդյոք տհաճ մի բա՞ռ պիտի դուրս տար բերանից: Նա հանգիստ դատարկեց իր բաժակը:

– Այո՛, գեղեցիկ օր է, – ասաց:

Ես քաղցած չէի: Վանիեն ինձ համբերությունից դուրս էր հանել, և չէի կարողանում հանգստանալ: Բարեբախտաբար Ֆրանսուազը կենդանացնում էր խոսակցությունը: Ճաշից հետո անցանք հյուրասենյակ՝ սուրճ խմելու:

– Դուք ձեր զգեստի վրա մի բիծ ունեք, – բացականչեց Նիկոլը ցույց տալով Վանիեի բաճկոնը:

Վանիեն նայեց բաճկոնին: Ծիծաղելի տեսք ուներ այդ պահին: Հանկարծ խղճացի նրան: Դառնացած մի տղամարդ էր, իր վիճակի հետ հաշտված խստասիրտ մի ամուրի: Գուցե բնավ չէր ճանաչել սերը: Ոչ ոք համակրանք կամ գորով չէր ունեցել նրա հանդեպ: Մի սիգար տվեցի նրան և հարցրի, թե մարսողության համար որևէ խմիչք չի՞ ցանկանա: Նա վերցրեց սիգարը և վառեց:

– Մարսողական խմիչք չեմ խմում, – ասաց:

– Ո՛չ, պնդում եմ: Մի՛ մերժեք ինձ այդ հաճույքը պատճառել ձեզ:

Մեր աչքերը հանդիպեցին իրար: Նա առաջինը շեղեց իր հայացքը՝ շփոթված, խղճալի, ծեծված շան նման:

– Կոնյակ, եթե կարելի է, – ասաց:

Գնացի և կոնյակ բերեցի նրա համար:

– Խնդրեմ, նստե՛ք այս բազկաթոռին:

Նա տեղավորվեց իմ ցույց տված բազկաթոռի մեջ:

– Ձե՞ք ցանկանա մի քիչ երաժշտություն լսել:

Մտածեց:

– Սիրում եմ երաժշտությունը, – ասաց վերջապես:

Իսկապես խղճում էի Վանիեին: Պատկերացնում էի նրան մենակ, երեկոյան տուն մտնելիս, իր սուրճի համար ջուր եռացնելիս, մութ բնակարանում մեծ քայլերով շրջելիս, ոստիկանական վեպեր կարդալիս, անկողնում սպասելով, որ քունը տանի՝ աչքերը հառած ճոճանակավոր ժամացույցին, ժամերին, որոնք հաջորդում էին իրար և չէին վերջանում ...

– Ինչպիսի՞ երաժշտություն եք նախընտրում:

– Ը՜ ...օպերային երաժշտություն:

Օպերային երաժշտություն չունենք:

Նրա սիգարի մոխիրը ծանրանալով թափվեց նրա տաբատի վրա:

– Շտրաուսի «Կապույտ Դանուբը»:

– «Կապույտ Դանուբն» էլ չունեինք: Դրեցի Մոցարտի ձայնապնակներից մեկը: Վանիեն հանգիստ տեղավորվեց իր բազկաթոռի մեջ և ուշադիր ունկնդրեց: Նրա կյանքն անցնում էր աչքերիս առջևով մոդայից ընկած հին կինոժապավենի նման: Ի՞նչ պիտի աներ մեր մոտից մեկնելուց հետո: Կիրակի օր էր: Նա քայլելով պիտի վերադառնար իր բնակարանը՝ փողոցից փողոց շրջագայելով: Կամ պիտի մտներ մի սրճարան, պիտի նստեր, մի մեծ բաժակ գարեջուր պատվիրեր և դիտեր մարդկանց անցուդարձը փողոցում: Բարեկամներ չունե՞ր: Վստահաբար ուներ, բայց հավանաբար կձանձրանար նրաց հետ: Գուցե կանցներ իր խանութի առջևից՝ մի հայացք գցելու ցուցափեղկում շարված լուսանկարչական գործիքների վրա: Այնուհետև՞: Այնուհետև՝ տուն, մուճակներ, սիգարետ, որը կհանգցներ վառելուց անմիջապես հետո: Եվ քանի որ գիշերը կուշանար, նա վարագույրները կքաշեր, որպեսզի սենյակը խավարի մեջ թաղի և վառի իր ցայգալամպը:

Գրեթե ցանկություն էր առաջացել մեջս երեկոյան ընթրիքի պահելու նրան: Բայց մտածեցի մի ուրիշ լուծումի մասին. Ֆրանսուազը ... Նա կարող էր նրան հրավիրել իր մոտ և փոփոխություն մտցնել նրա սովորությունների մեջ: Սիգարս հանգել էր: Նիկոլը և Ֆրանսուազը իրար հետ խոսում էին ցածր ձայնով: Ես նշան արեցի Վանիեին, որ վեր կենա և միանա ինձ բացօթյա պատշգամբում: Նա վեր կացավ: Ընկճված տեսք ուներ: Իսկ այդ անիծյալ արատը, որ այդպես մնացել էր ու չէր չորանում:

– Ֆրանսուազը ձեզ դո՞ւ ր է գալիս:

Հազաց՝ շփոթված:

– Այո՛, բայց ...

– Նա անտարբեր չէ ձեր նկատմամբ: Անկեղծ եմ ասում:

Այս առավոտ զանգահարեց ինձ և ձեր մասին հարցրեց:

Վանիեն կկոցեց աչքերը:

– Ձեմ թաքցնում ձեզանից, որ նա կապի մեջ է հարգելի մի անձնավորության հետ, որ այժմ արձակուրդի է մեկնել: Եթե ուզում եք ...

– Կարծում եք, որ ...

– Ճաշի՛ հրավիրեք նրան: Եվ վերջապես, Վանիե՛, դուք դեռ երիտասարդ եք և ձեզ պահում եք ծերունու նման: Քանի՞ տարեկան եք:

– Հիսուներկու:

– Փոխե՛ք ձեր սովորությունները, սատանա՛ն տանի: Դո՛ւրս ելեք, ճաշե՛ք, պարե՛ք... Կարծում եմ որոշ խնայողություն կունենաք:

Նա աշխուժացավ: Համարձակություն եկավ վրան:

– Իհարկե, – ասաց, - գործերս հաջող ընթացքի մեջ են, չորս ծառայող կա իմ խանութում: Անշուշտ որոշ խնայողություն ունեմ:

Ինձ թվում էր, որ խոսում եմ մի ուրիշ Վանիեի հետ:

– Էլ ինչի՞ եք սպասում, հո հավիտյան չեք ապրելու:

Դա ամենատափակ փաստարկումն էր իմ կողմից:

– Վստահ եմ, որ բնավ արձակուրդի չեք գնացել: Խոստովանե՛ք:

Նա թույլ կերպով բողոքեց՝ ասելով.

– Ո՛չ, ո՛չ, անցյալ տարի ... չէ՛, երկու տարի առաջ ծովափ գնացի:

– Իսկ այս տարի՞: Նկատի ունեցեք, որ մեր քաղաքը շատ գրավիչ է այս եղանակին: Զվարճացե՛ք, թա՛փ տվեք ձեզ, դո՛ւրս ելեք ձեր թմրությունից: Գնացեք պարե՛ք պարասրահում: Գեղեցիկ կանայք միշտ էլ կգտնվեն: Վերջապես անզգա մեկը չեք, Վանիե՛:

Նա դարձել էր շատ մեղմ, հեզահամբույր: Լսում էր ինձ երեխայի նման:

– Ես շատ զգացական մարդ եմ, – վերջապես խոստովանեց նա, – երբ կապվում եմ մի կնոջ ...

Լռեց:

– Կամաց: Մի՛ կապվեք Ֆրանսուազին: Նրա հետ պետք է զվարճանալ: Այդքա՛ն: Ես վստահ եմ, որ մի օր դուք անպայման կգտնեք իդեալ կնոջը:

Նայեց ինձ խեղճացած, խոնարհաբար:

– Բայց այդ իդեալ կնոջը գտնելու համար հարկավոր է դուրս գալ: Նա ինչ–որ տեղ է: Ձեզ է մնում նրան գտնել: Նա ինքը չի բախելու ձեր դուռը:

– Իսկ ո՞ւր պետք է դուրս գալ, – ասաց ծիծաղելի մի շարժումով:

– Զգիտեմ, բայց բոլոր փորձերը ձեր կողմից պետք է արվեն: Ձպետք է սպասել պատահականության, պետք է առաջ մղել այն: Ձէի՞ք ուզենա դուք էլ ունենալ մի օջախ, երեխաներ:

Իմ այս խոսքերն ինձ դրդում էին ավելի առաջ գնալու: Ուզում էի ճանաչել Վանիեի իսկական անձնավորությունը: Ուզում էի օգնել նրան, դառնալ նրա բարեկամը:

– Ես պաշտում եմ երեխաներին, – ասաց նա: – Երբեմն, ժամը հինգի մոտ, թողնում եմ աշխատանքս և գնում զբոսայգի՝ հատկապես դիտելու երեխաներին:

– Ինչո՞ւ եք ամուրի մնացել:

Տխուր ժպտաց:

– Իմ զգացական կյանքը նման է ձկնկուլի առակին: Հիմա ինձ մնում են միայն փշրանքները:

– Ո՛չ, բոլորովի՛ն ոչ, – պատասխանեցի՝ թևս դնելով նրա ուսին: – Դուք սխալվում եք: Կո՞ւյր եք միթե: Նայե՛ք ձեր շուրջը: Ձեր տարիքում ամուսնացող մարդիկ ավելի

շատ են: Կյանքը սկսվում է հիսուն տարեկանից:

Լիճը լցված էր առագաստանավակներով: Հավանաբար մրցություն կար:

– Ապացույցն այն է, որ շատ զարմացա, երբ ձեզ տեսա ջրի վրա դահուկելիս:

– Սրունքներս ամուր են: Ես կարող եմ տասնհինգ կիլոմետր քայլել՝ առանց կանգ առնելու:

– Ուրեմն ճիշտ եմ:

Վանիեն իր սիգարից վերջին անգամ մի երկար ծուխ ներս քաշեց և ափսոսանքով սիգարը ճզմեց մոխրամանի մեջ:

– Կանայք ...ինչպե՞ս ասեմ ... ես կանանց հետ խոսել չգիտեմ, – ասաց նա: – Սակայն ձեզ վստահեցնում եմ, որ ես սիրարկած չեմ փնտրում: Ես նույնպես կարիք ունեմ սիրո, գորովի... ինչպես ամեն մարդ:

– Սկսեք սիրահետել Ֆրանսուազին: Պտտվեք նրա շուրջը: Հետո... կտեսնենք դեռ: Մենք շատ մարդկանց ենք ճանաչում: Ի վերջո դուք կգտնեք իդեալ կնոջը:

Նա խորը շունչ քաշեց, ապա ուշադիր նայեց իր բաճկոնին: Բիծն սկսում էր անհետանալ:

–Պիտի հետևեմ ձեր խորհրդին, – ասաց նա:

Վանիեն դարձել էր մեղմ, հեզ գառան նման: Ինչպե՞ս է, որ վախեցել էի այս մարդուց: Իսկապես որ հոգնած պիտի լինեի:

* * *

– Ալլո՛, Ֆրանսուա՛զ: Արթնացրի՞ ձեզ:

– Այո՛:

– Ներողություն եմ խնդրում: Մենա՞կ եք:

– Այո՛:

– Իսկ մեր բարեկա՞մը:

Մի պահ վարանեց, ապա ասաց.

– Ոչինչ: Մենք միասին ճաշեցինք, և նա վերադարձավ իր տունը: Պարզապես ձեզ հաճույք պատճառելու համար է, որ համաձայնեցի ճաշել նրա հետ:

– Վիճեցի՞ք հետը: Վերջին հաշվով նա վատ մեկը չէ:

– Որոշ հմայք ունի, բայց թույլ մարդ է: Ֆիզիկապես անշուշտ վատ չէ:

– Հույս ունեմ մենք նույն մարդու մասին ենք խոսում, այսինքն՝ Վանիեի:

– Մեր խոսքը Հռոմի պապին չի վերաբերում. այո՛, Վանիեի, ձեր բարեկամ Վանիեի: Գեղեցիկ աչքեր ունի:

– Իմ մասին խոսե՞ց ձեզ հետ:

Մի պահ վարանելուց հետո ասաց.

– Խոսեց ձեր նկարների մասին: Ինձ թվաց, թե նա ձեզանից նեղացել է:

– Ի՞նչ ասաց:

– Ոչ հաճելի բաներ:

– Շա՞տ էր չար:

– Նույնիսկ փոքրոգի: Միշտ նկարների պատճառով: Ինձ ասաց, որ դուք իրավունք չունեք դրանք դիտելու: Կարծում եմ՝ մի քիչ խելառ է: Զանգահարե՛ք ավելի ուշ: Ուզում եմ դեռ քնել:

Կամաց ցած դրեցի լսափողը: Վանիեի անձնավորությունը նորից անհասկանալի էր մնում ինձ համար: Կարծում էի, թե ըստ էության ճանաչել եմ նրան, բայց ինչ–որ բան միշտ մնում էր անիմանալի: Թեպետ իրարից բաժանվել էինք որպես հին բարեկամներ: Ինչո՞ւ էր նեղացել ինձանից: Արդյո՞ք այդ նկարները որպես պատրվակ էր օգտագործում քողարկելու համար իր քինախնդրությունը: Մեր առանձնատունը նրան ավելի էր տպավորել, քան այդ նկարները, դրանում վստահ էի: Կեղծավորությո՞ւն էր անում: Փորձում էի մոռանալ նրա դժկամությունները: Ապարդյուն էին նրա բոլոր ջանքերը:

– Պատրա՞ստ ես:

Նիկոլը մի կողով ուտելիք էր պատրաստել: Մենք որոշել էինք բացօթյա ճաշել մեր առանձնատան հետևում գտնվող անտառում: Ճանապարհ ընկանք: Ծառերը, առանձնությունը, Նիկոլի սերը հաշտեցրին ինձ կյանքի հետ: Խորունկ շունչ էի քաշում բնության գրկում: Կանգ առանք մի առվակի մոտ: Մեզ հետ բերած գինու շիշը թողեցի սառը ջրի մեջ: Նիկոլը երկարեց խոտի վրա, և ես գլուխս հանգչեցրի նրա կրծքին: Նրա մատները սողոսկեցին մազերիս մեջ: Որքա՜ն քաղցր էր նա: Ափերիս մեջ առա նրա ձեռքերը և երկարորեն համբուրեցի: Մաշկը նուրբ էր, թափանցիկ: Կռացա նրա վրա:

– Նիկո՛լ, – ասացի, – տափակ, բայց հրաշալի մի բան պիտի ասեմ. «Սիրում եմ քեզ»:

Այս նույն նախադասությունը կրկնեցի տասն անգամ, քսան անգամ, երեսուն անգամ: Նա մեղմորեն հրեց ինձ և վեր կացավ: Ապա ազատվեց իր շորերից: Ես չէի շարժվում՝ կախարդված նրա պատանեկան քնքուշ մարմնից: Որքա՜ն գեղեցիկ էր և ցանկալի: Նայեց ինձ ժպտալով, հետո նետվեց առվի մեջ:

– Արի՛:

Հետևեցի նրան: Առուն խորը չէր: Ջուրը հազիվ ծնկներս էր ծածկում: Սառն էր: Նիկոլն սկսեց ջրի ցայտքեր տեղացնել վրաս: Թե՛ շոգում էի, թե՛ մրսում: Մարմինս սառած էր, բայց արյունս այրում էր աչքերս: Նետվեցի Նիկոլի վրա: Վերցրի նրան և պառկեցրի խոտի վրա: Հանձնվեց առանց դիմադրության, ինքնամատույց: Գողի նման նայում էի իմ որսին: Նրա վարսերը, թրջված շրթունքները, փոքրիկ ստինքները, գիրուկ սրունքները ինձ էին պատկա-

նում: Նրա երակների մեջ հոսող արյունը ինձ էր պատկանում: Նրա մտքերը ինձ էին պատկանում: Սկսեցի համբույրներով ծածկել նրա մարմինը: Դեռ երբեք այսպիսի ուժով չէի ցանկացել նրան: Շուրջս աշխարհն ամբողջովին անհետացել էր: Գոյություն չունեին այլևս ո՛չ ծառեր, ո՛չ անտառ, ո՛չ քաղաք: Ո՛չ ոք: Միա՛յն Նիկոլը: Նիկոլի մկանները: Նիկոլի մաշկը: Նիկոլի շնչառությունը: Օրորվում էի անիրական մի աշխարհում, որ դեռ բնավ չէի ճանաչել: Ասում էի ինքս ինձ. «Մի՞թե հնարավոր է լինել այսքան երջանիկ՝ միանալով մսից և արյունից կազմված աստվածային մի էակի: Մի՞թե հնարավոր է ճանաչել այսպիսի մի ուրախություն: Մի՞թե ես չեմ այն միակ անձը աշխարհում, որ ըմբոշխնում է երկնային այս հրճվանքը»: Եվ մտածում էի տարտամորեն. «Այս ուրախությունը ճանաչելուց հետո այսօր ինձ համար միևնույն է, թե կմեռնեմ Ֆյուրկովի նման»: Նիկոլը բացեց աչքերը.

– Ծարավ եմ:

Վեր կացա բերելու գինու շիշը:

– Սառն է:

Այսօր գինին ուրիշ համ ուներ: Ամեն ինչ, որ շրջապատում էր մեզ, կերպարանափոխվել էր: Ծառերն ավելի վեհաշուք էին թվում ինձ: Թռչունների երգն ավելի ներդաշնակ էր: Արևի ճառագայթները, որոնք սպրդում էին ճյուղերի արանքից, կարծես ունեին մի նոր, ոսկեզօծ փայլ: Այն տպավորությունն ունեի, որ սիրում եմ առաջին անգամ:

– Նիկո՛լ:

Այս անվան հնչականությունն ինձ արբեցնում էր և երկարաձգվում իմ մեջ անպատում մի հեշտանքով:

– Պիե՛ռ, երջանիկ եմ:

Նա անվերջ կրկնում էր.

– Պիե՛ռ ... Պիե՛ռ, ես երջանիկ եմ, Պիե՛ռ ... Պիե՛ռ ...

* * *

Գիշերվա կեսին ընդոստ արթնացա քրտինքների մեջ: Ֆյուրկովը բաց էր արել մեր սենյակի դուռը և առանց մի փոքր հայացք գցելու մեզ վրա՝ անշարժ կանգնել էր իր նկարների առջև: Աչքերիցս չէր վրիպել ոչ մի մանրամասնություն. կրում էր սպիտակ վերնաշապիկ և մի վզնոց էր փաթաթել իր վզի շուրջը: Հագին իր մոխրագույն զգեստն էր: Ներս մտնելիս քայլել էր ոտքի մատների վրա: Կծեցի շրթունքներս: Ֆյուրկովի ուրվականը երերաց: Նորից կծեցի: Ուրվականն անհետացավ:

Վեր կացա, որպեսզի գնամ մի բաժակ ջուր խմեմ խոհանոցում և ամբողջովին ջնջեմ նրա պատկերը աչքիս առջևից: Նիկոլը խաղաղ քնում էր: Դուրս եկա ննջարանից: Հյուրասենյակը թաղված էր կիսախավարի մեջ: Հանկարծ կանգ առա տեղում քարացած: Գորգի վրա տարածվել էր երկարավուն մի ստվեր: Քաջությունս չկորցրի: Բայց որքան առաջանում էի, ստվերը լուռ հետևում էր ինձ: Չէի համարձակվում ետ նայել և սակայն կատարելապես արթուն էի: Ծիծաղելի մի երկյուղ ինձ պահում էր ձգված վիճակում: Դժվարությամբ էի շարժում սրունքներս: Լսում էի ինքս իմ հևոցը, և լրացուցիչ մի անձկություն սառեցրեց ինձ: Ինչքա՜ն հեռու էր խոհանոցը: Որտե՞ղ էր փոխանջատիչը: Կարծեցի, թե գետինը փախչում է ոտքերիս տակից: Եվ մտածեցի Ֆյուրկովի մասին: Իսկապե՞ս մեռած էր: Այո՛, անկասկած: Նրան գտել էին վիթխարի քարաժայռի ստորոտին՝ մարմինը կտոր–կտոր եղած: Տեսել էի այդ լուսանկարը թերթերի մեջ: Երևում էր միայն նրա մարմնի ձևը. վրան մի ծածկոց էր գցված: Իմ վախը ոչ մի իմաստ չուներ: Ծիծաղելի էր, շատ ծիծաղելի ... Վերջապես հասա խոհանոց և շտապեցի դեպի փոխանջատիչը: Սառած մի լույս լուսավորեց սրահը: Ամե-

նուրեք տիրում էր չարագուշակ մի լռություն: Ինչո՞ւ թռչունները չէին երգում: Շատ կանո՞ւխ էր արդյոք: Իսկ ծղրիդնե՞րը հապա: Չէի կարող տանել այլևս այս լռությունը և քայլելիս չէի համարձակվում աղմուկ հանել՝ հայտնի դարձնելով ներկայությունս: Բաժակների մի ամբողջ շարք էր գտնվում դարակի վրա, բայց ինչպե՞ս հասնել այնտեղ՝ առանց շշուկ հանելու: Հազարումի նախազգուշություններով վերջապես անցա ինձ դարակից բաժանող երեք մետրը, և իմ անճարակ մեկ շարժումի հետևանքով հանկարծակի բաժակները իրար հետևից թափվեցին գետին: Աղմուկը համարձակություն և վստահություն տվեց ինձ: Բաց արեցի սառնարանը, ջուր լցրի և խմեցի: Լռությունը նորից ինձ սեղմեց իր աքցանի մեջ: Գինու փոքրիկ շիշը ձեռքիցս ցած ընկավ և փշրվեց: Ես շարունակեցի խմել: Հանկարծ իրական մի ներկայություն զգացի բաց դռան հետևում: Մի ստվեր, որ գոյություն չուներ քիչ առաջ, երկարաձգվում էր խոհանոցում: Տարօրինակ, անմարդկային մի ստվեր: Մի ստվեր, որ շարժվեց: Նիկոլն էր: Ուսերին գցել էր մի սավան: Շշնջացի.

– Ծարավ էի ...

Նա մի քիչ առաջացավ դեպի ինձ և ձեռքերը դրեց ճակատիս.

– Բայց դու այրվում ես ... Շու՛տ, արի մտի՛ր անկողին:

Քրտինքի խոշոր կաթիլներ էին հոսում իմ վրայից: Մրսում էի: Թողեցի, որ Նիկոլն ինձ առաջնորդի: Անցանք հյուրասենյակից և մտանք ննջարան: Այլևս չէի վախենում: Դողում էի ջերմության մեջ: Երկարեցի անկողնում:

– Հիմա քեզ համար մի տաք բան կպատրաստեմ, որ խմես, – ասաց Նիկոլը:

– Ո՛չ , մնա՛ մոտս, մի՛ շարժվիր:

Վերցրի նրա ձեռքը:

– Խելամի՛տ եղիր, Պիե՛ռ, հասկացի՛ր: Որտե՞ղ է ջերմաչափը:

Նա ջերմաչափը սահեցրեց լեզվիս տակ: Փակեցի աչքերս:

– 39 ու կես: Պետք է գնամ բժիշկ կանչեմ:

– Ոչ ոքի մի՛ անհանգստացրու: Երկու հատ ասպիրին տուր ինձ: Բան չկա, կանցնի:

– Գնամ մի բաժակ թմբիի եռացրած հյութ պատրաստեմ քեզ համար:

Նիկոլը հեռացավ: Մնացի մենակ՝ աչքերս լայն բացած, բայց ուղեղս ոչ մի պատկեր չէր արձանագրում:

* * *

– Ի՞նչպես ես զգում քեզ:

Երկու օր է, ինչ գամված էի անկողնում: Նիկոլն ի վերջո գնացել և բժիշկ էր կանչել: Վիճակս ծանր չէր: Հավանաբար մրսել էի առվի մեջ լողանալիս:

– Հիմա ինձ շատ ավելի լավ եմ զգում:

– Փակի՛ր աչքերդ և քնի՛ր:

Նիկոլը տեղավորվեց ինձ մոտ և սկսեց թերթել մի գիրք: Երկու օրից ի վեր նա չէր հեռանում իմ սնարի մոտից: Քնում էր հարևան սենյակում: Փակեցի աչքերս և վերցրի նրա ձեռքերը: Կանացի քնքուշ և թարմ ձեռքեր, որոնք իջեցնում էին ջերմությունս և ինձ հանգստացնում: Ուզում էի նրան ասել, որ սիրում եմ, բայց բառերը արգելակվում էին փառ կապած լեզվիս վրա:

– Վանիեն քեզ էր հարցնում:

Ցցվեցի անկողնիս մեջ:

– Վանիե՞ն: Էլի ի՞նչ է ուզում ինձանից:

Նիկոլը թմբիի հյութով լի բաժակը դրեց սեղանին:

– Ոչինչ: Նա զարմանում էր, որ այլևս քեզ չի տեսնում:

Դժվարությամբ արտասանեցի.

– Ո՛չ մի ժամադրություն չեմ տվել նրան: Թող գրողի ծոցը գնա ...

Նիկոլը ժպտաց:

– Մի՛ բարկացիր: Նա ազնիվ մարդ է: Ես նրան ասացի, որ հիմա դու ավելի լավ ես զգում քեզ: Քո հիվանդությունը մտահոգում է նրան: Ի դեպ նա ինձ տվեց մի հոյակապ բժշկի հասցե. դոկտոր Ֆարբետ: Ճանաչո՞ւ մ ես նրան ...

Դոկտոր Ֆարբե՛տ ... Ինչ–որ տեղ լսել էի այդ անունը:

– Բայց նա բժիշկ չէ, հոգեբո՛ւյժ է:

Նիկոլը զարմացած մնաց.

– Վստա՞հ ես: Ինչո՞ւ նա ինձ տվեց այդ հոգեբույժի անունը: Գուցե լավ չլսեցի ...

Ցանկություն չունեի այլևս խոսելու: Խորասուզվեցի թմրությանս մեջ, թմրություն, որ մեկուսացնում և հաճելի մի զգայություն էր տալիս ինձ: Ես կարիք ունեի այս ջերմությանը: Մտքերս ծուլորեն տեղաշարժվում էին գլխիս մեջ և հանգուցալուծվում քրտինքներով:

– Ծարավ եմ:

Փակեցի աչքերս: Տենդը արագացնում էր սրտիս զարկերը: Հևում էի: Որքա՞ն ժամանակ տևեց այս թմրությունը: Ձեռքերս երկարեցի և հանդչեցրի Նիկոլի ձեռքերի վրա: Մի րոպե հետո զգացի, որ այդ շփումը նեղում է ինձ: Նա է՞լ տաքություն ուներ արդյոք: Բաց արեցի աչքերս: Վանիեն նստած էր կողքիս: Ձեռքերս դրել էի նրա ձեռքերի վրա: Այնքան հոգնած էի, որ նրա ներկայությունը չզարմացրեց ինձ:

– Ավելի լա՞վ եք հիմա:

Արտասվոր մի ժպիտ անցավ նրա շրթների վրայից: Ի՞նչ էր անում նա այստեղ: Ինչո՞ւ էր եկել ինձ նեղելու:

– Ո՞ւր է Նիկոլը:

Նա ձեզ համար նարնջի հյութ է պատրաստում: Ուզո՞ւմ եք՝ կանչեմ նրան:

– Ո՛չ:

Ցանկություն ունեի արդարանալու նրա առաջ: Արդարանալու ինչի՞ց:

– Տեսնում եք ... հիվանդ եմ:

– Դե, մեծ բան չէ: Հաջորդ շաբաթ ամեն ինչ կմոռանաք:

Ես էլ այդ կարծիքին էի: Մտածում էի, որ այս զզվելի տենդը և ամբողջ այս քրտնահարությունը, որ խոցոտում էր մարմնիս ծակոտիները, կմաքրի ինձ, և ես կլինեմ մի ուրիշ մարդ: Տհաճություններից զերծ երջանիկ մի մարդ: Նիկոլը ներս մտավ՝ մի բաժակ նարնջի հյութ ձեռքին: Վանիեն տեղից չշարժվեց: Որքա՞ն ժամանակից ի վեր նստած էր սնարիս մոտ: Իսկ ինչո՞ւ վեր չէր կենում: Տանու մա՞րդ էր համարում իրեն:

– Թո՛ղ այնտեղ, քիչ հետո կխմեմ:

– Ծարավ էիր: Քեզ հարկավոր են վիտամիններ:

Նա գլուխս վեր բարձրացրեց և խմեցրեց: Վանիեն բարեկամաբար մեզ էր նայում: Որոշ ժամանակ անց տենդը նորից բռնեց ինձ: Տարտամորեն լսում էի Վանիեի ձայնը: Նա Նիկոլի հետ խոսում էր նկարների մասին:

* * *

«Արդեն ձմեռը վրա է հասել»,– մտածեցի ես: Իմ մանկության ձմեռը: Ձյան փաթիլները հանդարտ իջնում էին, կերպարանափոխում քաղաքը և նրան տալիս մաքուր տեսք, բացի այն փոքրիկ թաղամասերից, ուր ես էի ապրում: Իմ թաղամասում շատ ժողովուրդ էր լինում: Մարդիկ թրև էին գալիս փողոցում: Ձյունը միշտ կեղտոտ էր լինում և շուտ հալվում: Ինչպե՛ս էի խեղդվում իմ մանկության

այդ մթնոլորտում: Մենք միշտ մրսում էինք, և հարկավոր էր առավոտները շուտ վեր կենալ դպրոց գնալու համար: Կեսօրին կարճատև մի զբոսանք էի կատարում դպրոցի բակում՝ կծոտելով սենդվիչս:

Այս տարի ձմեռը շուտ էր եկել, և անկողնում դեռ տառապում էի այս անիծյալ հիվանդությամբ: Ձյան խոշոր փաթիլներ էին ընկնում, և տղաները փողոցում աղմկելով շտապում էին դպրոց:

– Նիկո՛լ, – կանչեցի:

Դուռը բացվեց, և Նիկոլը երևաց:

– Վարագույրները քաշի՛ր:

Նա քաշեց վարագույրները: Ես կռացա: Ծառերը ծաղկել էին:

– Միշտ ամառվա մե՞ջ ենք, Նիկո՛լ:

– Իհարկե, սիրելի՛ս: Երևի մղձավանջ ես ունեցել: Դեռ առավոտվա ժամը հինգն է: Պառկի՛ր:

– Ի՞նչ օր է այսօր:

– Հինգշաբթի:

Կորցրել էի ժամանակի զգացողությունը:

– Վանիեն ե՞րբ էր այստեղ: Անցա՞ծ շաբաթ:

– Ո՛չ, երեկ: Ուզո՞ւմ ես խմել:

– Ո՛չ, շնորհակալություն: Ուզում եմ քնել:

Փակեցի աչքերս և ձևացրի, թե քնած եմ: Երբ որ Նիկոլը դուրս ելավ սենյակից, վեր կացա: Ուզում էի ստուգել, թե իրոք ամառվա մե՞ջ ենք: Բաց արեցի պատուհանը: Օդը մեղմ էր և անուշաբույր: Ոչ մի փոթ լճի երեսին: Ոչ մի ամպ երկնքում: Սակայն ես չէի երազել: Իրապես տեսել էի ձյան փաթիլներ և երեխաներ, որոնք շտապում էին դեպի դպրոց: Ջառանցանքի մեջ չէի: Հանկարծ անշարժացա մի նկարի առջև: Ուտրիլլոյի մեկ կտավն էր, որը ներկայացնում էր ձյունով ծածկված մի թաղամաս և դպրոցական-

ներ: Այս կտավը, որ գտնվում էր ճիշտ իմ անկողնու դիմաց, քանի օր է զբաղեցնում էր միտքս: Շփոթվում էր իմ երազանքների և մանկական հիշողությունների հետ:

– Ի՞նչ ես անում:

Նիկոլն էր: Չէր պառկել: Գնացել էր նարնջի հյութ պատրաստելու ինձ համար: Ցույց տվեցի մյուս նկարները:

– Սրանք բորբոքում են իմ տենդը, – ասացի նրան:

Չհասկացավ: Ցանկություն չունեի բացատրություններ տալու:

– Այս նկարները հետապնդում են ինձ: Ամեն անգամ, երբ նայում եմ սրանց, ինձ թվում է, թե տենդի մի նոր նոպա եմ ունենում:

– Ուզո՞ւմ ես, որ վերցնեմ:

– Այո՛, անպայմա՛ն: Պետք է վերցնել, ուրիշ տեղ դնել, պետք է վաճառել:

Նիկոլը կապված էր այդ նկարներին: Դրանք Ֆյուրկովին էին պատկանում:

– Այս նկարները տխուր են, – շարունակեցի, – մենք սրանք կվաճառենք և ուրիշ նկարներ կգնենք: Համաձա՞յն ես:

– Ինչպես ուզում ես:

– Ջերմաչա՛փը տուր, խնդրեմ:

Վերջապես պիտի ազատվեի այս նկարներից, որոնք ներկայացնում էին «Ֆյուրկովի երազը», ինչպես ասում էր Վանիեն այնքան դիպուկ կերպով:

– Եթե ուզում ես, մենք սրանք կվաճառենք աճուրդով, – ասաց Նիկոլը:

– Այսո՛ր իսկ ուղարկիր Գարկոսին, ես վստահում եմ նրան:

Նայեցի ջերմաչափին: Տաքությունս իջնում էր ...

* * *

Աննկատելիորեն մուտք գործեցի վաճառասրահներից ներս: Զանգահարել էի, որպեսզի ինձ համար տեղ պահեն առաջին շարքում: Աճուրդի հանված առարկաները գնահատող պաշտոնյան բարեկամաբար նշան արեց ինձ: Մարդիկ սկսում էին խուռներամ ներս մտնել: Շտապում էի ժամ առաջ վերջ տալ աճուրդի հանված նկարներին: Չէի սիրում այս մթնոլորտը: Այս ամբողջ ժողովրդի մեջ հավանաբար երկու կամ երեք լուրջ գնորդներ կլինեին: Մյուսները գալիս էին սոսկ նայելու և հուզումից դողալու, ինչպես այդ լինում է խաղասրահներում:

Գոհարեղենով ծանրաբեռնված մի կին եկավ տեղավորվեց ինձ մոտ: Նա ուշադիր քննեց սեղանի վրա դրված նկարը, ապա իր տպավորությունները փոխանակեց մի բարեկամուհու հետ, որը նստած էր նրա հետևում: Վերջապես նկարները գնահատության դրվեցին:

– Մեկ միլիոն, – հայտարարեց գնահատող պաշտոնյան:

– Մեկ միլիոն հարյու՛ր հազար, – ավելացրեց գինը մի անգլիացի իր ահավոր արտասանությամբ: Նա դռան մոտ ոտքի էր կանգնած:

– Մեկ միլիոն երկու հարյուր հիսու՛ն հազար:

Ծանոթ մի հավաքորդ էր, որ թևերը ծալած, սևեռուն հայացքով նայում էր նկարին: Անգլիացին ստուգեց իր կատալոգում տրված տեղեկությունները, ապա գլուխը վեր առնելով՝ ասաց.

– Մեկ միլիոն երեք հարյուր հիսու՛ն հազար:

Իմ կողքին նստած կինը ցնծության մեջ էր: Ո՞ր մեկն էր տանելու նկարը: Մի բոպե լռություն տիրեց: Գնահատող պաշտոնյան բարձրացրեց իր մուրճը:

– Մեկ միլիոն երեք հարյուր հիսուն հազար ... մեկ անգամ ..

– Մեկուկե՛ս միլիոն, – բացականչեց հավաքորդը: Անգլիացին կրկին վեր առավ գլուխը և դուրս տվեց իր սիգարետի ծուխը: Մթնոլորտը լարված էր: Բոլորը կախված էին անգլիացու շրթներից:

– Մեկ միլիոն յո՛թ հարյուր հազար ...

Բոլորի հայացքները դարձան հավաքորդի կողմը:

Աճեցնելո՞ւ էր գինը: Նա տեղից չէր շարժվում: Քրտինքի մի քանի կաթիլներ մատնում էին նրա հուզումը:

– Մեկ միլիոն յոթ հարյուր հազար ... մեկ անգամ ... երկու անգամ...

Մուրճը օդում կախված մնաց:

– Երեք անգամ:

Մթնոլորտը թուլացավ, հանդարտվեց: Անգլիացին, որ ձեռք էր բերել նկարը, ճգմեց սիգարետը իր ոտքի տակ: Նույն խաղը վերսկսվեց մյուս նկարների հետ: Թվերը գնգում էին ականջներիս մեջ ինչպես երազում: Չէի մտածում նույնիսկ Ֆյուրկովի մասին: Այդ գումարը նախատեսված էր ուրիշ նկարներ գնելու համար, ինչպես համաձայնել էինք Նիկոլն ու ես: Այժմ մնացել էր միայն մի գծանկար Պիկասոյից:

– Հինգ հարյուր հազար, – հայտարարեց գնահատող պաշտոնյան:

Բազմաթիվ առաջարկություններ տեղացին միաժամանակ:

– Հինգ հարյուր հիսու՛ն հազար ... վե՛ց հարյուր հազար...

Շատ համեստ հագնված մի կին ավելացնում էր աճուրդի գինը:

– Յո՛թ հարյուր հազար ...

Մուրճը բարձրանում էր:

– Յոթ հարյուր հազար... մեկ անգամ...

Նորից այդ անհանգստացնող լռությունը:

– Երկու անգամ ...

– Յոթ հարյուր հիսու՛ն հազար:

Շիկահեր մի երիտասարդ էր՝ չոր և ջղային: Առաջին անգամ էր, որ լսում էի նրա ձայնը: Դեմքի մկանները հաճախակի շարժվում էին:

– Յոթ հարյուր հիսուն հազար ... Դե՛, պարոնա՛յք, մի փոքր ջանք ևս:

Լռություն: Գնահատող պաշտոնյայի ձայնը դարձավ սպառնալից:

– Պիտի հանձնեմ, ո՞վ է ուզում ավելացնել ... Յոթ հարյուր հիսուն հազար ... մեկ անգամ ... երկու անգամ ...

Նա բարձրացրեց մուրճը: Ոչ ոք չէր խոսում:

– Ի՛նը հարյուր հազար:

Զարմացած պաշտոնյան իջեցրեց մուրճը: Բոլոր ներկաներն իրենց գլուխները ետև դարձրին: Ձայնը գալիս էր սրահի խորքից:

Ճի՞շտ լսեցի ինը հարյուր հազար ...

– Ի՛նը հարյուր հազար, – կրկնեց ձայնը:

Վեր կացա՝ մտահոգված: Այդ ձայնը ...

– Ինը հարյուր հազար ... մեկ անգամ ... երկու անգամ ... երեք անգամ ...

Վանիեն ձեռք էր բերել գծանկարը:

* * *

– Պարոն Վանիեն հենց նոր դուրս եկավ:

Երկու օր է, ինչ նա չէր երևում: Կարևոր բաներ ունեի ասելու նրան այդ գծանկարի վերաբերյալ:

– Համենայն դեպս, – ասացի վաճառող կնոջը, – կարծում եմ երբեմն խանութ գալիս է: Նա ինչ–որ տեղ ճաշում է...

Կինը մի պահ մտածեց և ասաց.

– Իհարկե: Եթե ուզում եք անպայման նրան տեսնել ... ի՞նչ օր է այսօր:

– Ուրբաթ:

– Արդեն ուրբա՞թ է, Աստված իմ ... այո՛, եթե ուզում եք տեսնել նրան, դուք կեսօրին նրան կգտնեք Պլտի–Շալեում:

– Վստա՞հ եք:

Թեթև, խորհրդապահ մի ժպիտ երևաց նրա դեմքին:

– Դա անշուշտ նրան է վերաբերում ... Նա Պլտի–Շալեում կլինի իր ընկերների հետ... իր մշտական ընկերների... այսինքն... ամեն մարդ իր կյանքն ապրում է իր ուզած ձևով, այնպես չէ՞:

Նա չուզեց ավելի մի բան ասել: Ժամը տասնմեկն էր: Ռոշեցի գնալ հանձնարարված տեղը: Դա մի փոքր, հնաոճ ճաշարան էր՝ առանձնացած, ոչ ընդարձակ, լքված մի այգու մեջտեղում: Ճաշարանից խոհանոցի հոտ էր գալիս: Ինչո՞ւ էր Վանիեն այստեղ գալիս ճաշելու ամեն ուրբաթ: Հրեցի դուռը և ներս մտա: Դեռ ոչ ոք չկար: Ճաշասեղանները պատրաստել էին: Տեղավորվեցի մի պատուհանի մոտ:

– Ուզում եք ճաշել հենց հիմա՞:

Սպասարկող աղջիկը ներկայացրեց ճաշատեսակների ցուցակը:

– Ո՛չ, սպասում եմ մի ընկերոջ: Լուսանկարիչ Վանիեին:

Աղջիկը մի պահ մտածեց:

– Ա՛հ, լուսանկարչի՞ն... նրա ընկերները դեռ չեն եկել: Նրանց սեղանը պատվիրված է: Ձեն ուշանա:

Տարիքն առած մի մատուցող հացի շերտեր էր կտրում և դրանք շարում ոգորահյուս մի զամբյուղիկի մեջ: Հետո սկսեց բարձրաձայն հաշվել քաղցրավենու բանկաները, որ սպասարկող աղջիկը բերեց խոհանոցից: Գանձապահուհին անհագ ախորժակով ուտում էր մի թխվածք՝ մեկ ձեռքը

պահած ծնոտի տակ, որպեսզի փշրանքները գետին չթափվեն: Կեսօրին դուռը բացվեց: Հիսուն տարեկանի մոտ մի տղամարդ, հավանաբար ամենօրյա մի հաճախորդ, ներս մտավ, մի րոպե շատախոսեց դանձապահուհու հետ, որը նրան հանձնեց նրա թղթապանակը, ապա տեղավորվեց իմ ետևում: Մի քանի րոպե անց երկու զույգ, մի կնոջ և մի տղայի ուղեկցությամբ, մտան ճաշարան: Ամենայն հավանականությամբ Վանիեի բարեկամներն էին: Նրանք ուղղվեցին դեպի այն սեղանը, որ իրենց էր վերապահված: Տղամարդիկ Վանիեի տարիքն ունեին:

– Ցո՛ւյց տուր ձեռքերդ:

Կինը տղային տարավ ճաշարանի խորքը: Վանիեն կարող էր գալ մեկ րոպեից մյուսը:

– Երկու շիշ Ռիկար* և երեք շիշ Պորտո**:

Ես սկսեցի ճաշել: Ճաշերը շատ համեղ էին: Վանիեն ուշանում էր: Նրա բարեկամները նորից ճաշի պատվեր էին տվել և նայում էին իրենց ժամացույցներին: Իմ ուշադրությունը գրավեց երեք կանանց միջև գոյություն ունեցող նմանությունը: Հավանաբար երեք քույրեր էին: Այն կինը, որ թվում էր, թե տղայի մայրն է, կլիներ շուրջ քառասուն տարեկան: Նա երեքից ամենապչբասերն էր: Հենց այնպես մտքովս անցավ, թե այդ կինը մի գուցե կամուսնանար Վանիեի հետ: Իսկ տղա՞ն: Կինը այրի՞ էր արդյոք: Ամեն անգամ, երբ դուռը բացվում էր, նա գլուխը վեր էր բարձրացնում: Ի վերջո նրանք իրենց ճաշի պատվերները տվեցին և սկսեցին լուռ ճաշել:

– Պարոն Վանիեն չի գալու: Նա ներողություն է խնդրում:

– Զանգահարե՞ց:

* Ռիկար – Ֆրանսիական գինու տեսակ:

** Պորտո – Պորտուգալական հայտնի գինի:

– Նրա խանութից էին զանգահարում:

– Առաջին անգամ է, որ նա իր խոստումը չի կատարում:

– Գուցե շատ աշխատանք ունի:

– Գուցե:

Տխուր էին: Վանիեն մեկ անգամ ևս խույս էր տալիս ինձանից:

* * *

Վահրամ– Ակումբում Նիկոլի հետ երկարել էի ավազի վրա, երբ տեսա Վանիեին մոտովս անցնելիս: Նա հագել էր զոլավոր լողազգեստ և թևի տակ դրել էր պատկերազարդ մի ամսագիր: Հայացքով հետևեցի նրան: Նա տեղավորվեց մի ճոճաթոռի վրա և ծալեց թևերը:

– Ո՞ւր ես գնում:

– Ուզում եմ մի տեղեկություն իմանալ Վանիեից:

– Նա այստե՞ղ է:

– Քիչ առաջ մեր մոտով անցավ:

– Զգիտեի, որ նա հաճախում է այս ակումբը, – ասաց Նիկոլը:

Ավազը կիզիչ էր: Եկա Վանիեի մոտ:

– Ա՛, դո՞ւք եք:

– Երեք օրից ի վեր ձեզ եմ փնտրում:

Նա շփեց աչքերը:

– Ահավասիկ ես ինքս ձեր դիմաց:

–Քիչ առաջ դուք մեր մոտով անցաք: Կարող էիք մի խոսք ասել մեզ:

– Զնկատեցի ձեզ:

Ստում էր: Թող թե դա ոչ մի նշանակություն չուներ: Աճուրդի դրված նկարների վաճառքի օրվանից մի հարց տանջում էր ինձ:

– Ինչո՞ւ գնեցիք Պիկասոյի գծանկարը:

Զարմացած՝ նա տեղում ցցվեց.

– Վաճառքի հանված չէ՞ր:

Արդեն սկսել էր ինձ ջղայնացնել:

– Այո՛, բայց ինչո՞ւ դու՛ք գնեցիք: Հատկապե՛ս դուք:

– Ինձ դուր էր գալիս:

– Դա պատճառ չէ:

– Ձեզ չեմ հասկանում:

– Լսե՛ք, Վանիե՛, – ասացի համբերությունից դուրս ելած, – իմ գործերին չխառնվեք: Վերադարձրե՛ք ինձ այդ գծանկարը... ուզում եմ ասել՝ վերավաճառե՛ք ինձ:

Մտածում էի, որ աներևակայելի մի գին կառաջարկի ինձ:

– Ձեզ չեմ հասկանում, – կրկնեց նա:

– Շատ լավ եք հասկանում:

Ինչպե՞ս բացատրեի նրան: Ինքս անգամ չգիտեի իմ կամակորության պատճառը: Այդ գծանկարը պատկանում էր Ֆյուրկովին, Նիկոլին և ինձ: Ինձ համար միևնույն էր այն տեսնել օտարների ձեռքում, բայց չէի ուզում, որ Վանիեի՛ն պատկաներ այն:

– Մնահավա՞տ եք, – հարցրեց ինձ:

– Մնահավա՞տ: Ո՛չ: Ինչո՞ւ:

– Հենց այնպես:

Վանիեն ամենատափակ բառերին այնպիսի ճկուն մի դարձվածք էր տալիս, որ ինձ տհաճություն էր պատճառում:

– Ինչո՞ւ եք ուզում վերստանալ այդ գծանկարը:

– Ես իմ պատճառներն ունեմ:

Նա մտածեց, ապա ասաց.

– Ձեզ հասկանում եմ:

Ի՞նչ էր հասկանում: Ձեռքի ամսագրով սկսեց հովհարել դեմքը: Դա նորաձևության վերաբերյալ մի ամսագիր էր:

– Ես ազնիվ մարդ եմ: Վերավաճառում եմ ձեզ:

– Քանիսո՞վ:

– Ինչ գնով որ ձեռք եմ բերել: Գո՞հ եք:

– Հանգստացա:

– Վաղը եկեք վերցրե՛ք:

– Կանցնեմ ժամը տասի մոտ:

Այլևս ինձ ոչինչ չէր կապի նրան: Արդյոք գուշակո՞ւմ էր իմ միտքը:

– Ուզո՞ւմ եք, որ վերադարձնեմ նաև ակումբի անդամատոմսը:

Ծիծաղեց մեղմորեն առանց թուլացնելու սեղմված շրթունքները:

– Ինչո՞ւ երեկ չճաշեցիք Պրտի-Շալեում ձեր ընկերների հետ:

Շատ զարմացավ:

– Ինչպե՞ս իմացաք:

– Ես այնտեղ ձեզ էի սպասում: Մենակ ես չէի ...

Հոգեպես ինձ թեթևացած էի զգում: Ավելացրի առանց պատճառի.

– Ինչո՞ւ չեք ամուսնանում երրորդ քրոջ հետ:

Ամսագիրը ցած սահեց նրա ձեռքերից: Զարմացած նայեց ինձ:

– Բացահայտ երևում էր: Նա ձեզ էր սպասում ...

Կարծեցի, թե պիտի բողոքի: Ընդհակառակը, մեղմացավ:

– Խեղճ կինը կորցրեց իր ամուսնուն ավտոմոբիլի վթարից,– ասաց նա: – Ես նրանց շատ էի կապված ... Մի հիմար ավտովթար ...

Փինգ-փոնգի մի գնդակ գլորվեց նրա աթոռի մոտ: Նա վերցրեց և սպասեց, որ խաղացողը գա վերցնի՝ փոխանակ ինքը գնդակը նետելու նրան:

– Ի՞նչ է ձեր կարծիքը այդ կնոջ մասին:

Նրա ձայնը դարձել էր ցածր, խորհրդապահ:

– Դուք շա՛տ հարմար եք միմյանց:

Նրա սուր հայացքը մի պահ կանգ առավ ինձ վրա:

– Ձե՞ք գտնում, որ նա շատ երիտասարդ է ինձ համար:

– Ձեմ կարծում:

Վանիեն գլուխը ետ շրջեց:

– Թերևս մի օր ամուսնանամ հետը... սակայն մի կետ է միայն ինձ անհանգստացնում ... Ես շատ կապված էի նրա ամուսնուն, իսկ նա մեռած է:

– Քանի որ մեռած է ...

Ձշարունակեցի: Նա սևեռուն հայացքով նայում էր ինձ: Լռեցի: Կարճ լռությունից հետո ավելացրեց.

– Այո՛, պետք է ամուսնանամ նրա հետ: Նա քնքուշ, գորովալից կին է: Ինձ կնքահայր կլինե՞ք:

Կատակո՞ւմ էր:

– Լուրջ եմ ասում:

– Գուցե:

– Պիտի մտածեմ այդ մասին: Այժմ ես ինձ շատ... շատ միայնակ եմ զգում: Իմ բոլոր ընկերներն ամուսնացած են:

Անզգայաբար պիտի ընկնե՞ր արդյոք խոստովանությունների զառիթափի վրա:

Նա ուշքի եկավ և խոր շունչ քաշեց:

– Ի՞նչ եք մտածում տղամարդկանց հագուստների նորաձևության մասին,– ասաց նա՝ ցույց տալով ձեռքի պատկերազարդ ամսագիրը:

* * *

Ժամը ինն անց կեսին սեղմեցի Վանիեի դռան զանգը: Նա ապրում էր մի մութ շենքում, որի պատերից խոնավ քարի հոտ էր փչում: Բաց արեց դուռը և խնդրեց ինձ ներս մտնել: Հագել էր երկար, հնամաշ մի ցայգազգեստ:

– Ժամանակից շուտ եմ եկել ...

– Ժամը հինգից ի վեր արթուն եմ, – ասաց նա: – Սուրճ եմ պատրաստել: Կցանկանա՞ք կարագով և քաղցրավենիով մի շերտ հաց:

Վանիեն մտավ խոհանոց: Քննեցի նրա հյուրասենյակը: Բնակարանը հարմարավետ էր և ընդարձակ, կահույքը՝ հին և մոդայից ընկած: Հյուրասենյակի մեջտեղում կար լաքած մի մեծ սեղան, որի վրա դրված էր մի մոխրաման: Հին մոդելի մի ռադիոընդունիչի վրա հանգչում էր չինական մի ծաղկաման: Ոչ մեծ չափի մի գորգ, որը շատ նման էր մահճակալի մոտ փռվող գորգիկի, գամված էր պատին՝ խունացած գույներով բազկաթոռների վերևում: Պատուհանները ծածկված էին հաստ վարագույրներով: Տախտակամածը փայլեցված էր և սահուն: Հայացքս ընկավ դարակի վրա շարված գրքերի վրա: Վիկտոր Հյուգոն քնել էր Բոսյուեի և Բալզակի հետ: Հավանաբար հաճախ չէր խանգարում նրանց քունը: Փոշին նստել ամրացել էր ոսկեզօծ եզրերով նրանց կազմի վրա:

– Կցանկանայի՞ք երկու կտոր շաքար:

Տեղիցս վեր ցատկեցի: Ներս էր մտել առանց աղմուկի: Ափսեն դրեց սեղանի վրա: Բերել էր քաղցրավենի, մեղր և խաշած ձվեր: Քաղցած չէի, բայց նրան հաճույք պատճառելու համար մի կտոր բան ծամծմեցի: Սուրճը հրաշալի էր: Վանիեն նախաճաշում էր մեծ ախորժակով:

– Վաղո՞ւց եք այստեղ ապրում:

Ծիծաղելի մի շարժում անելով ասաց.

– Սկզբից ի վեր: Պատկերացրեք, որ այս տանն եմ ծնվել: Տեսնո՞ւմ եք այս տախտակամածը: Կես դար առաջ այս տախտակամածի վրա քայլել եմ չորեքթաթ:

Նա հացի շերտը ամբողջությամբ թաթախեց սուրճի մեջ և շարունակեց.

– Անցած օրը հաշվում էի, որ քսան հազար կիլոմետր եմ քայլել այս չորս պատերի միջև: Էլ չեմ խոսում մյուս սենյակների մասին:

Նա գլուխը կռացրեց կուլ տալու համար հացի շերտի ծայրը, որ սուրճի մեջ թաթախվելով շատ էր ծանրացել:

– Գիտե՞ք, սիրելի՛ բարեկամս ...

Նա մի կում սուրճ խմեց և շարունակեց.

– Գիտե՞ք, սիրելի՛ բարեկամս, որ ես ածիլվել եմ տասներկու հազար անգամ: Մտածե՞լ եք երբևէ մաշկի դիմադրողականության մասին:

Զվարճալի մի ծիծաղ լայնացրեց նրա դիմագծերը:

– Երբ մարդ մենակ է ապրում, արտառոց բաների մասին է մտածում: Ես հոգի եմ տվել ինձ շրջապատող այս առարկաներին: Օրինակի համար այս ծաղկամանը... նայեցե՛ք ... սարսափելի բան է: Չեմ կարողանում տեղը փոխել: Քսան տարուց ի վեր տնկվել մնացել է այս ռադիոընդունիչի վրա: Անհնար է ազատվել: Մի անգամ փորձեցի: Տարա գցեցի խոհանոցում, բայց երբ վերադարձա հյուրասենյակ, բոլոր կարասիները բողոքում էին... Հարկավոր էր դրանք էլ տեղափոխել:

Ի վերջո ծաղկամանը նորից տարա դրեցի ռադիոընդունիչի վրա և ոչ ուրիշ տեղ: Ճիշտ ինչպես այս գրքերը, որ դուք քննում էիք քիչ առաջ: Վիկտոր Հյուգոն և Բալզակը իմ նախասիրած հեղինակներն են, բայց ես դրանք բնավ չեմ կարդում: Գիտեմ, որ գրքերն այդտեղ են, դրանց ներկայությունը հանգստացնում է ինձ ... Բայց ներեցե՛ք,

երևի շատ եմ խոսում... Ի դեպ այս տարի առաջին անգամ է, որ խոսում եմ նախաճաշելիս:

Վեր կացա և մի սիգարետ վառեցի:

– Պետք է ամուսնանաք, Վանիե՛, դուք միջոցներ ունեք: Փոխե՛ք այս կարասիները, մի քիչ թա՛փ տվեք ձեզ, արթնացե՛ք:

– Մտածում եմ այդ մասին, – ասաց նա: – Բայց ամեն առավոտ արթնանում եմ հեզ ոչխարի նման:

Պատուհանի տակ մի ավտոմեքենա ազդանշան տվեց: Վանիեն բարձրացրեց ձեռքը:

– Արդեն ժամը տասն է: Լսե՛ք ... վարորդը նորից ազդանշան պիտի տա ... պատուհանը պիտի բացվի ... լսո՞ւմ եք: Եվ սպասուհին պիտի ասի. «Պարոնը շուտով կիջնի ...»: Տասը տարուց ի վեր պարոն Բելտոն իջնում է առավոտյան ժամը տասին և գնում ջրաբուժարան՝ կանոնավոր կերպով շարունակելու իր բուժումը: Ինչպե՞ս ուզում եք, որ ես փոխեմ իմ կենսաձևը ինձ շրջապատող ոչխարների այս հոտի մեջտեղում:

– Քանդե՛ք արգելափակոցը: Նախ գնե՛ք մի ավտոմեքենա:

– Վարել չգիտեմ:

– Շատ հեշտ է: Խորհուրդ եմ տալիս անպայման գնել մի ավտոմեքենա:

Վանիեն նորից սուրճ լցրեց իր գավաթում, փոքրիկ գդալով երկարորեն այն խառնեց և ասաց.

– Կմտածեմ, դուք իրավացի եք ...

Անկեղծորեն ուզում էի օգնել նրան: Ֆյուրկովին հանդիպելուց առաջ Վանիեի նման ես էլ առանձնացած, միապաղաղ կյանք էի վարում: Ֆյուրկովը նոր հորիզոններ բացել տվեց ինձ:

– Հրավիրե՛ք ձեր բարեկամուհուն և եկե՛ք այս երեկո

ճաշելու մեր տանը: Ձայնապնակներ կդնենք, երաժշտություն կլսենք, կպարենք:

– Կարծում եք ...

– Սպասում ենք ձեզ: Ի դեպ ահա՛ փողը ...

Եվ ձեռքիս չեկը դրեցի սեղանին: Նա վերցրեց և դրեց իր ցայգազգեստի գրպանում:

– Նկարն արդեն փաթաթել եմ:

– Կտեսնվենք այս երեկո:

– Այս երեկո, – ասաց՝ տալով ինձ Պիկասոյի գծանկարը:

* * *

Գորգի վրա երկարած՝ Նիկոլը երազում էր: Գրամոֆոնը օդում տարածում էր բարձրաձայն մի պարեղանակ: Կիսով չափ կրծված մի խնձոր չորանում էր մի ձայնապնակի թղթյա ծածկույթի վրա: Նիկոլը հագել էր շատ սեղմ մի տաբատ, որ հիանալիորեն կաղապարում էր նրա մարմինը:

– Ինչո՞ւ ես կարդում թերթերը:

– Հենց այնպես, ըստ իմ սովորության:

– Ինչո՞ւ ես սիրում ինձ:

Լռեցի:

– Պատասխանի՛ր, Պիե՛ռ, ինչո՞ւ ես ինձ սիրում:

– Կարող եմ հրաժարվել թերթերից, բայց ոչ քեզնից:

– Երդվո՞ւմ ես:

Նա նման էր արձանի: Հազիվ էր շնչում:

– Եթե ճիշտ եմ հասկանում քեզ, արդեն ես դասակարգված եմ. ինձ սիրում ես, և գրքի այդ գլուխը փակված է: Ինձ սիրում ես մեկընդմիշտ և վե՛րջ: Ինձ սիրում ես, և այդ մասին այլևս չի խոսվում:

Շարժվում էին միայն նրա շուրթերը: Ամսաթերթը դրեցի տեղը և ասացի.

– Սխալվում ես: Ես սիրում եմ ամեն ինչ, որ քեզ է վերաբերում:

Բացեց աչքերը, ժպտաց և սողոսկեց մինչև այն բազկաթոռը, որի վրա երկարել էի: Նա գլուխը հանգչեցրեց կրծքիս:

– Մի բան եմ մտածում, – ասաց հանկարծ: – Այս երեկոյան քեզ համար պիտի պատրաստեմ կիտրոնով թխվածք: Հիշի՛ր, այդպիսի թխվածք դու արդեն կերել ես:

Իսկապես, առաջին անգամ, երբ Ֆյուրկովը ճաշի էր հրավիրել ինձ, Նիկոլը կիտրոնով թխվածք էր պատրաստել:

– Լավ գաղափար է, – ասացի առանց ոգևորության:

Նա վեր կացավ, փոխեց ձայնապնակը:

– Գեղեցի՞կ է Վանիեի նշանածը:

Առանց պատասխանիս սպասելու գնաց խոհանոց: Վանիեն եկավ ժամը ութին մոտ: Մենակ էր: Մի մանրուք գրավեց ուշադրությունս. նա այլևս չէր կրում մոդայից ընկած իր ակնոցը: Լույսի մի ճառագայթ ընկավ նրա աչքերի վրա: Որպես ակնոց նա ակնաբյուրեղներ էր կրում: Երեկոն մի քիչ ձանձրալի անցավ: Վանիեն գրեթե չխոսեց: Մենք ունկնդրեցինք դասական երաժշտություն: Երեկոյի վերջում Նիկոլը ինձ հետ պարեց մի չա–չա–չա*, իսկ Վանիեի հետ՝ մի վալս:

Այդ երեկո անկողին մտնելով Նիկոլի կողքին՝ ինձ թվաց, թե տենդը նորից պիտի բռնի ինձ: Ձեռքերս և ոտքերս այրվում էին: Այտերս կրակի մեջ էին: Զափեցի տաքությունս. ջերմություն չունեի:

– Որտե՞ղ են Ֆյուրկովի հագուստները:

– Հագուստնե՞րը:

– Այո՛, նրա հագուստները:

* Չա-չա-չա – Մեքսիկական ծագումով պար է՝ առաջացած ռումբայից:

– Պետք է, որ հանդերձապահարանում լինեն: Ինչո՞ւ:

– Չպետք է պահել:

Նիկոլը ցցվեց:

– Բայց ինչո՞ւ:

Ապա մի պահ մտածեց և ավելացրեց.

– Գուցե դու իրավացի ես:

– Չգիտեմ: Տո՛ւր սպասուհուն:

– Բայց դրանք բոլորովին նոր են:

– Ի՞նչ նշանակություն ունի:

Վեր կացա գիշերվա կեսին: Անդիմադրելի մի ցանկությունից մղված՝ գնացի հարևան սենյակը, որ լուսավորված էր լուսնի լույսով: Հանդերձապահարանը բանալուց առաջ տարօրինակ մի զգացում ունեցա. մեջս թե՛ ցանկություն կար և թե՛ վախ: Ուզում էի տեսնել Ֆյուրկովի հագուստները: Ինձ թվում էր, թե նրան կգտնեմ այդտեղ, ինձ մոտ կանգնած, հայելու հետևում: Սիրո, գորովանքի հանկարծակի, անցողիկ մի զգացում համակեց ինձ: Վարանեցի կրկին: Հետո կամացուկ, դողալով, գլուխս դատարկ. պտտեցրի բանալին և միանգամից ետ քաշվեցի: Մեկ ակնթարթում մեր բարեկամության բոլոր հանգրվանները իրար մոտ եկան և սեղմվեցին ուղեղիս մեջ: Հանդերձապահարանում կային տասը Ֆյուրկովներ: Կապույտ հագուստը հիշեցնում էր մեր առաջին հանդիպումը, թավշյա բաճկոնը՝ մեր ձկնորսությունը լճի ափին, սմոկինգը՝ ուրախ հանդիսությունը պարասրահում, զոլավոր հագուստը՝ մեր հանդիպումը Նիկոլի հետ: Այդ օրը Ֆյուրկովը հագել էր նույն զոլավոր մոխրագույն հագուստը: Հոգեպես ճնշված՝ փակեցի հանդերձապահարանը:

* * *

Մի քանի օրից ի վեր Վանիեն ճանապարհին դեմս էր ելնում՝ նստած ուսումնական մի ավտոմեքենայի ղեկին: Սովորում էր ավտոմեքենա վարել: Եղանակը փչացել էր: Մանր, չդադարող, խոնավաբեր անձրևը փողոցները դատարկել էր մարդկանցից: Ես մնացի առանձնատանը Նիկոլի մոտ: Մենք ձայնապնակներ էինք լսում, կարդում, հանգստանում:

Օրերն անցնում էին առանց միջադեպի, առանց անակնկալների: Ես կարիք ունեի այս հանդարտության: Հիմա ֆիզիկապես ինձ զգում էի ավելի լավ: Բացօթյա պատշգամբում նստած՝ զբաղված էի մի գրքի էջերը կտրելով, երբ նկատեցի մի տաքսի, որը գալիս էր դեպի մեր առանձնատունը: Վեր կացա: Տաքսին կանգ առավ ծառուղու դռան առջև, և երևաց Վանիեի դեմքը: Նա վարորդի հաշիվը փակեց և արագ քայլերով մտավ ծառուղի: Հեռվից նշմարելով ինձ՝ միանգամից կանգ առավ և երկու թևերը բարձրացրեց երկինք: Ի՞նչ էր ուզում ինձանից:

– Պարոն Վանիեն մեզ այցելության է գալիս, – ասացի Նիկոլին, որը շարունակում էր թերթել պատկերազարդ մի ամսագիր:

– Մենա՞կ է:

– Այդպես էլ միշտ մենակ կմնա, – ասացի: –Նա հավիտենական ամուրին է:

– Զվարճալի, հետաքրքիր մարդ է:

Ես Նիկոլի կարծիքին չէի: Ինձ համար Վանիեն տափակ մարդ էր, մի ամուրի, որի նմանները հազարներով կան:

Նա շնչակտուր մոտեցավ մեզ:

– Ուրախ եմ, որ ձեզ ոտքի վրա եմ տեսնում, – ասաց ինձ՝ ջերմորեն սեղմելով ձեռքս:

Ապա թուքը կուլ տվեց և շարունակեց.

– Ինձ ասել էին, որ դուք հիվանդացել եք, ծանրորեն հիվանդացել:

Նիկոլը բարձրացրեց գլուխը: Վանիեն շարունակեց.

– Ամեն դեպքում եկել եմ ձեր լուրերն ստանալու: Ուրեմն դուք չե՞ք հիվանդացել: Ավելի լավ:

Նա մնաց կանգնած, շփոթված: Անդրադարձա, որ նրան ասելու ոչինչ չունեմ: Քաղաքավարության համար շնորհակալություն հայտնեցի:

– Ե՞րբ եք ստանալու ձեր վարորդական արտոնագիրը:

Նրա դեմքը ճառագայթեց:

– Ուզում էի ձեզ անակնկալ անել: Երեկ ստացա իմ արտոնագիրը: Ինչպե՞ս իմացաք, որ սովորել եմ ավտոմեքենա վարել:

– Ես ձեզ տեսա:

– Իսկ ես՝ ոչ: Ուրեմն կարծեցի, որ հիվանդացել եք:

Մենք լուռ մնացինք: Նիկոլը մի կողմ նետեց ամսագիրը և մի սիգարետ վառեց:

– Ներեցե՛ք, որ ձեզ խանգարեցի, – ասաց Վանիեն: – Պետք է վերադառնամ խանութ: Ցտեսություն ...

Անհանգստացած, շփոթված՝ ուզում էր հեռանալ:

– Քանի որ եկել եք, անշուշտ մի բաժակ խմեք, – ասացի նրան:

– Հիմա ես ձեզ խմիչք կբերեմ, – ասաց Նիկոլը:

Վանիեն մի րոպե անշարժության մեջ մնաց, ապա մոտեցավ ինձ և ցածր ձայնով ասաց.

– Ինչո՞ւ պրոֆեսոր Ֆարբետի մոտ քննվելու չեք գնում: Եթե ուզում եք, ձեզ մի փոքր հանձնարարագիր կտամ: Նա իմ բարեկամն է:

– Բայց ես հիվանդ չեմ, – պատասխանեցի անհամբեր: Հիվանդացել էի անցած ամիս, մրսել էի: Հիմա ես ինձ շատ լավ եմ զգում: Նախ կարիք չունեմ քննության ենթարկվելու Հոգեբույժի մոտ:

– Նույնիսկ ես եմ քննվում նրա մոտ: Նա հայտնի մարդ է: Անկեղծորեն ...

– Ահա իմ լավագույն դեղորայքը, – ասացի՝ ցույց տալով Նիկոլին:

* * *

Երկինքը շարունակում էր մնալ ամպամած, բայց այլևս անձրև չէր գալիս: Սև մութ ամպեր կուտակվում էին քաղաքի վրա, մինչ լիճը գույն էր փոխում, դառնում յուղոտ, ողորկ, անծալ: Օդում վառոդի հոտ կար: Կարճատև, արագ և անձայն փայլատակումները լուսավորում էին երկնքի չորս անկյունները: Սրճարանները իջեցրել էին իրենց վարագույրները: Զբոսաշրջիկները ման էին գալիս իրենց հովանոցներով, բայց անձրև չէր գալիս: Կեսօրից հետո բարձրանում էր մի զով քամի, տեղափոխում ամպերը, և գունատ մի արև երանգներ էր խաղացնում պատերին: Իսկույն, կարծես ինչ–որ կախարդանքով, փողոցները լցվում էին մարդկանցով:

Երեք օր է, ինչ դուրս չէի եկել մեր առանձնատնից: Այս կեսօրից հետո որոշեցի գնալ մի շրջան կատարել քաղաքում և թերթեր գնել: Նիկոլն ամբողջ օրը ձայնապնակներ էր լսում: Նա երբեք չէր ձանձրանում: Հարցրի նրան, թե ուզո՞ւմ է ինձ ուղեկցել:

– Ո՞ւր ես գնում:

– Գնամ թերթեր գնեմ:

Մի պահ մտածեց և հանկարծ տեղից վեր ցատկեց:

– Ի՞նչ ես կարծում, Մանդրակը դեռ ապրո՞ւմ է:

– Ո՞վ:

– Կախարդ Մանդրակը և նրա բարեկամ Լոթարը: Հարցրո՛ւ լրագրավաճառին նրանց մասին: Նրանք իմ ման-

կության հերոսներն են: Չեմ հիշում թերթի անունը:

Քառորդ ժամ անց հասա քաղաք: Ավտոմեքենան վա-ռում էի դանդաղ: Արևն անհետացել էր, և զբոսաշրջիկնե-րը, նկատի ունենալով ամեն հավանականություն, բաց էին արել իրենց հովանոցները: Ավտոմեքենան կանգնեցրի մի տեղ՝ թերթեր գնելու համար, երբ մի ազդագիր հեռվից գրավեց իմ ուշադրությունը: Թեթևակի անհանգստացած՝ մի քանի քայլ առաջացա, ապա հետզհետե ավելի արագ գնացի դեպի ազդագիրը, որը տարածված էր պատին մի սրճարանի մոտ: Աչքերիս չէի հավատում: Ազդագիրը ներ-կայացնում էր մի ծերունու, բնական մեծությամբ, որի ձեռ-քին կար մի շիշ հանքային ջուր: Նա խոր ծերության էր հասել շնորհիվ այդ ջրի: Դա մի ծերունի էր կանոնավոր դիմագծերով, սպիտակ մորուքով, ժպտադեմ, մաքուր և հստակ նկարված: Նա հագել էր Ֆյուրկովի զոլավոր մոխ-րագույն հագուստը, այն հագուստը, որ Նիկոլը տվել էր իր սպասուհուն: Նկարը կրում էր Վանիեի ստորագրությու-նը: Ծերունու բաճկոնի գրպանից դուրս էր կախված մի թաշկինակ՝ Ֆյորկովի թաշկինակը Տ. Ֆ սկզբնատառերով:

Շունչս կտրված՝ երկար ժամանակ մնացի ազդագրի ա-ռաջ: Հետո նստեցի ավտոմեքենաս՝ գլուխս կրակների մեջ: Վանիեն գազազել էր: Բոլոր պատերի վրա, բոլոր ցուցա-փեղկերում երևում էին տարբեր չափսի տասնյակ ազդագ-րեր: Որ փողոցը որ սլանում էի ավտոմեքենայով, աչքիս առջև ցցվում էր Ֆյուրկովի զգեստը:

Սա բացահայտ մարտահրավեր էր: Ա՜հ, դավաճա՜նը: Նա այս նենգ միջոցին էր դիմել ինձ զայրացնելու համար: Պետք էր անմիջապես բացատրություն պահանջել: Ուզում էի քարշ տալ նրան ազդագրի առջև և ցույց տալ Ֆյուրկո-վի սկզբնատառերը: Ծայրաստիճան գրգռված՝ հասա նրա խանութը: Ներս մտնելիս բախվեցի մի հաճախորդի, որը դուրս էր գալիս խանութից:

– Որտե՞ղ է նա:

Վաճառող կինը շշմած նայեց ինձ:

– Ո՞վ, պարոն Բոլա՞ը:

– Հիմար մի՛ ձևացեք: Վանիեն՝ ձեր գործատերը:

Նա դարձյալ նայեց ինձ՝ շունչը կոկորդում խեղդված:

– Պարոն Վանիե՞ն: Նա... մեկնեց ջրաբուժարան:

– Վստա՞հ եք: Եթե ստեք ինձ.....

Դուրս ելա և սլացա դեպի ջրաբուժարան: Ծծմբախառն ջրի հոտը բռնեց կոկորդս: Նախասրահում յուրաքանչյուր այն վրա ծերունին ձեռքում բռնած էր իր շիշը: Մոտեցա մի պատուհանիկի և աշխատակցուհուն ասացի.

– Ուզում եմ Վանիեի հետ խոսել:

– Նա այստեղի պաշտոնյաների՞ց է:

– Նա այստեղի ազդագրերի լուսանկարիչն է:

Աշխատակցուհին ձեռքի հյուսքը մի կողմ դրեց և ա-սաց.

– Ա՜հ, պարոն Վանիեն... Սպասե՛ք... կարծեմ... դուք նրան կգտնեք համար 7 սենյակում, միջանցքի խորքում:

Դա գոլորշիապատ բաղնիքն էր:

– Լա՜վ: Ինձ մի կտրոն տվեք, խնդրեմ:

– Ուզում եք մերսվե՞լ:

– Ո՛չ:

Հանվեցի և հրեցի դուռը: Շատ ճարպոտ մարմիններ կա-յին այդ օրը. սպիտակ որովայններ, թուլացած մսերով ազդ-րեր, պարարտ մարմիններ, որոնք տղմաթաթավ փոկերի նման փռված էին ջրավազանի շուրջը՝ բաղդատության մեջ դնելով իրենց գիրությունը: Ինքնակոչ հյուրի նման սպրդել մտել էի այստեղ: Մածուցիկ գոլորշին կպչում էր մարդուս մաշկին: Հայացքով փնտրեցի Վանիեին: Այստեղ չէր: Արդյոք ստե՞լ էին ինձ: Հրեցի մերսումների հատկաց-

ված սենյակի դուռը և ներս մտա:

Վանիեն պառկել էր երկարավուն մի տախտակի վրա, և մերսողն իր մատները մխրճում էր նրա որովայնի կակուղ մսի մեջ: Նա իսկույն տեսավ ինձ: Մի ժպիտ, ավելի շուտ մի ծամածռություն իրարից բաժանեց նրա շրթները: Դեմքը ծածկված էր քրտինքով, և նա հևում էր:

– Մեկ կիլոգրամ կորցրել եմ, – ասաց նա: – Հե՛, հե՛, կամա՛ց, ցավեցնում եք...

Մերսողը ապուշ– ապուշ ժպտաց: Ավելի ուշադրությամբ նայեցի նրան: Այս մերսողը այն մարդն էր, որը մաս էր կազմում ատենակալների խմբին: Զայրալից խոսքերը, որ ուզում էի շպրտել Վանիեի երեսին, կպած մնացին կոկորդիս մեջ:

Դժվարությամբ արտասանեցի.

– Վանիե՛, կսպասեմ ձեզ միջանցքում: Խոսելու բան ունեմ:

Կես ժամ անց նա եկավ: Նստել էի մի աթոռի վրա և նայում էի ազդագրին: Նա հետևեց հայացքիս:

– Ինչ կարծիք ունեք այդ ազդագրի մասին:

Ծաղրո՞ւմ էր ինձ: Շատ հպարտ էր երևում, որ իրեն հաջողվել է այսքան գեղեցիկ մի լուսանկար պատրաստել: Կշռելով բառերս՝ ասացի.

– Վանիե՛, այս ծերունու հագուստը Նիկոլի ամուսնու՝ Ֆյուրկովի հագուստն է: Խոստովանե՛ք, որ դուք դիտմամբ այս հագուստն եք ընտրել, որպեսզի ջղայնացնեք ինձ: Էլ համբերություն չունեմ:

Ինքն էր, որ սկսեց բարկանալ:

– Գնացե՛ք, բուժել տվեք ձեզ, – ասաց նա, – բավական են ձեր սպառնալիքներն ու լռելյայն ակնարկությունները: Դուք հիվանդ եք, հասկանո՞ւմ եք, հիվա՛նդ, հիվա՛նդ... Դիտողություն անելու ի՞նչ կա այս ազդագրում: Սքանչելի

ազդագիր է: Ծերունին հագել է ձեր...ձեր բարեկամի հագուստը, հետո՞ ինչ: Ոչ ոք դա չի նկատել ձեզանից բացի:

Զսպված մի կատաղություն պատեց ողջ էությունս, բայց ոչ մի ձայն դուրս չեկավ բերանիցս: Վանիեն շարունակեց.

– Եկե՛ք մի բան ցույց տամ ձեզ: Հետևեցե՛ք ինձ...

Հետևեցի նրան ինքնաշարժ մեքենայի նման: Դուրս եկանք ջրաբուժարանից:

Քայլեցինք շուրջ քարորդ ժամ: Հասնելով մի գբոսայգու առջև՝ նա մատով ցույց տվեց ինձ մի ծառ: Այդ ծառի տակ նստած էին տասի չափ ծերունիներ, որոնք բոլորն էլ հագել էին Ֆյուրկովի հագուստները: Նայեցի նրանց՝ առանց բան հասկանալու:

– Ձեր սպասուհին ահա այս հագուստները նվիրել է ծերանոցին: Ես փնտրում էի մի ծերունու իմ ազդագրի համար: Եվ նրանց միջից ընտրեցի մեկին:

Հազիվ կարողանում էի լսել: Նայեցի նրանց: Արտասովոր մի տեսարան էր: Կնճռոտված դեմքով անատամ մի ծերունի հագել էր Ֆյուրկովի կապույտ հագուստը: Հագուստի թևքերը իջնում էին նրա նիհար ձեռքերից ցած, բայց նա ոչ մի ուշադրություն չէր դարձնում դրան և շարունակում էր դոմինո խաղալ մի ուրիշ ծերունու հետ, որ հագել էր իշայծյամի կաշուց կարած Ֆյուրկովի բաճկոնը: Մի ուրիշ ծերունի հպարտորեն ուռեցնում էր իր կուրծքը նոնագույն այն բաճկոնի տակ, որ Ֆյուրկովը պատվիրել էր Լոնդոնում:

– Անհավատալի բան է, – շշնջացի:

Նայում էի այս ծերունիներին և կարծում էի, թե երազի մեջ եմ: Երբ որ նրանցից մեկը իր քիթն էր սրբում, կարծում էի, թե նա Ֆյուրկովն է, որը շուտ– շուտ հիվանդանում էր հարբուխով: Եթե նա ապրելու լիներ, տեսնես սրանցից ո՞ր մեկին կնմանվեր: Անտանելի տեսարան էր, մի

տեսակ այլանդակ, անհեթեթ ծաղրանկար: Բաժանվեցի Վանիեից՝ առանց մի բառ արտասանելու:

* * *

Նիկոլը դուրս էր եկել մի շրջապտույտ կատարելու ավտոմեքենայով: Ես մնացի տանը մենակ՝ անկողնու վրա երկարած, առանց ցանկության, առանց ամփոփվել կարողանալու որևէ մտքի վրա: Ջղերս այրում էին մաշկս: Ամենափոքր աղմուկը արագացնում էր սրտիս զարկերը: Ինձ թվում էր, թե քթիցս արյուն պիտի գա: Ժամանակը ոչնչով չէր օգնում: Հանգած մռայլ մի երկինք և ամպեր, որոնք խեղդում էին մթնոլորտը: Ժամանակ առ ժամանակ պայթող որոտը հայտնում էր, թե շուտով անձրև է գալու: Հողմապտույտ էր բարձրանում: Ամպերը պտտվում էին այնպիսի ուժգնությամբ, որ կարծես պիտի պատառոտվեին, հետո տեղում քարանում–մնում: Վեր կացա, որ լողանամ, երբ հնչեց հեռախոսի զանգը:

– Ալլո՛, լսում եմ ձեզ, Վանիե:

– Ինչպե՞ս իմացաք, որ ես եմ:

– Դա կարևոր չէ: Ի՞նչ եք ուզում ինձանից:

Ինձ թվաց, թե շփոթվեց:

– Ը՛հ... լսեցի, որ քաղաքից հեռանալու եք:

– Ո՞վ ասաց ձեզ:

–Այդպիսի մի լուր է շրջում, ճի՞շտ է:

Քաղաքից մեկնելու մտադրություն չէի ունեցել բնավ:

– Ճիշտ չէ: Ի՞նչ լուր է դա: Անշուշտ մի տեղից լսել եք:

– Գարաժի մոտի լրագրավաճառուհուց:

– Ապահո՛վ եղեք, տեղիցս չեմ շարժվելու,– ավելացրի չոր ու կտրուկ և լսափողը դրեցի տեղը:

* * *

Գարաժի մոտ կար մի փոքր գրախանութ, որի տերը հիսուն տարեկանին մոտ էր: Ես նրան ճանաչում էի վաղուց: Բոլորովին չէր փոխվել: Դուրս ցցված այտեր, խոնավ աչքեր, փայլուն քիթ և ձեռքեր, որոնք սևացած էին անընդհատ թերթեր հաշվելու պատճառով: Նա կարճահասակ էր և տաղտ: Ճիշտ ժամին միշտ գնում էր փոստ՝ թերթեր ստանալու, այնուհետև նստում իր աթոռակի վրա առավոտյան ժամը վեցից մինչև երեկոյան ժամը ութը: Հաճախորդները չէին ուշանում, գնում էին իրենց թերթերը և անմիջապես հեռանում:

– Կարո՞ղ եք ինձ բաժանորդագրել տեղական թերթին:

Նա հետաքրքրությամբ նայեց ինձ:

– Իհարկե: Ինչքա՞ն ժամանակով:

– Մեկ տարով: Հասցես հիմա ձեզ կտամ:

Մատիտն արդեն շարժվում էր նրա հաստ մատների միջև:

– Գիտեմ ձեր հասցեն, – ասաց նա, – կարծում եք... այն օրից ի վեր, երբ...

Այս կի՞նն էր տարածել սուտ լուրը: Չէի համարձակվում հարցնել: Նրան տեսել էի միշտ մենակ: Խանութ էր գալիս մթերքի պայուսակը ձեռքին և նույն պայուսակով մեկնում տուն: Նրան երբեք չէի տեսել մի տղամարդու հետ: Ոչ ոք չէր գալիս նրան սպասելու, և սակայն եղել էր մեկը նրան հղիացնելու համար:

Մտածկոտ հեռացա գրախանութից: Բարձրացա ծառուղիով մի ձայնապնակ գնելու Նիկոլի համար: Պատահաբար անցա Վանիեի տան առջևից: Հավանաբար նա տանը չէր: Շենքի մոտից հեռանալու վրա էի, երբ նկատեցի, որ ավտոմեքենաս գտնվում է մայթի վրա: Գրախանութի մոտ չէի՞ թողել: Այո՛, վստահ էի: Շոշափեցի գրպաններս: Բանալի-

ները մոտս չէին: Երևի թողել էի ավտոմեքենայի մեջ: Առանց երկար մտածելու՝ բարձրացա բնակարանը և սեղմեցի դռան զանգը: Իսկույն նա դուռը բաց արեց:

– Սպասում էի ձեզ, – ասաց և ավտոմեքենայի բանալին երկարեց ինձ:

– Մոռացել էիք հպատեղի վրա: Մտածեցի, որ...

– Ինչո՞ւ եք խառնվում իմ գործերին:

Հիմար մի զայրույթ մթագնում էր ուղեղս: Ավելի մոտից նայեցի նրան:

– Դուք Ֆյուրկովի հագուստն եք հագել:

– Իսկապես, այո՛, – ասաց հատ–հատ արտասանելով բառերը: – Ես ազատ մարդ եմ:

Դողում էի: Նյարդերս սկսում էին տեղի տալ: Հարձակվեցի վրան և բռնեցի կոկորդից :

– Դուք չդադարեցիք այս բոլոր օրերին ինձ անհանգստացնել: Ասացե՛ք, ինչո՞ւ:

Նա փորձեց թեթևակի ինձ հրել:

– Դե՛, դե՛, լուրջ պահեք ձեզ, Տալյան, բա՛ց թողեք ինձ:

Ուզում էի բաց թողնել նրան և հեռանալ, բայց, հակառակ իմ կամքին, ձեռքերս կպած էին մնում նրա կոկորդին:

– Բա՛ց թողեք ինձ, խեղդվում եմ:

Գետին տապալեցի նրան իմ ամբողջ ուժով: Գլուխը բախվեց մի աթոռի: Ուզեց վեր կենալ, բայց կատաղությամբ նետվեցի վրան: Ուզում էի մեկընդմիշտ հանդարտեցնել նյարդերս: Բառերը իրար էին հրմշտում կոկորդիս մեջ:

– Ինչո՞ւ եք ուզում, որ հիվանդանամ: Ինչո՞ւ եք ուզում, որ հեռանամ:

Նա շարժեց ոտքերը: Իսկույն տիրապետությանս տակ առա դրանք: Լրիվ անշարժացրել էի նրան: Իզուր փորձում էր պաշտպանվել:

– Խոստովանե՛ք, որ առաջին օրվանից չդադարեցիք ինձ տանջելուց: Խոստովանե՛ք, որ...

Ժամանակ չէի թողնում նրան, որ պատասխաներ: Չէի կարողանում այլևս կանգ առնել խոսելուց: Բառերը շղթայվում էին բառերին, հոսում, հանգստացնում ինձ:

– Ինչի՞ մասին էիք խոսում մերսողի հետ: Էլի պատմություններ էիք հնարում... Գովազդային նկարների այդ պատմությունը հապա՞... Ասացե՛ք, ինչո՞ւ, ինչո՞ւ: Իսկ այն մյուս պատմությունը... Ինչո՞ւ իմ ավտոմեքենան տարաք մինչև ձեր դռան մոտ: Ինչո՞ւ: Իսկ այդ հագուստը... և գծանկարը...

Շունչը կտրված, շառագունած, աչքերը դուրս ցցված՝ Վանիեն նայում էր ինձ և ձևացնում, թե ոչինչ չի հասկանում: Բաց թողեցի նրան: Նա կիսով չափ վեր կացավ, բայց զայրույթս դեռ չէր խաղաղվել: Ծնկի մի ուժեղ հարված հասցրի ամբողջ դեմքին: Կյանքումս առաջին անգամ էր, որ ինձ թույլ էի տալիս այդպիսի մի շարժում կատարել: Առաջին անգամ էր, որ կռվում էի մի տղամարդու հետ: Այս անգամ Վանիեն իր մարմնի ամբողջ ծանրությամբ տատանվեց ու փռվեց սենյակի հատակին: Նետվեցի վրան:

– Կեղծավո՛ր, կեղծավո՛ր...

Ուրիշ բառ չէի կարողանում արտասանել: Քրտինքի մեջ լողում էի: Վանիեն այլևս չէր շարժվում: Ընկած էր գետնին, անկենդան, ճակատը տախտակամածին կպած:

– Կեղծավո՛ր...

Ձեռքս կարմիր էր, արյունոտված: Համոզված էի, որ դա իմ արյունն է: Ո՛չ, Վանիեի արյունն էր: Միանգամից խաղաղվեցի: Արդյո՞ք ծանրորեն էի վիրավորել նրան: Ե՞ս էի իմ ամբողջ ուժով սեղմել այս մարդու կոկորդը: Մեռա՞ծ էր արդյոք: Ինձ մեղադրել էին մի ոճրի համար, որը ես չէի գործել: Եթե Վանիեն մեռած էր... Անկարելի է... ինչքան

ապուշ էի: Ինքս ինձ չէի ճանաչում: Հազար ու մի զգուշություններով շուռ տվեցի նրա մարմինը: Վանիեն բացեց աչքերը: Սարսափելի՜ աչքեր: Ե՞ս էի վախեցնում նրան:

– Ես... ոչինչ չեմ արել..., – թոթովեց նա: – Երդվում եմ, ոչինչ...

Նայեցի նրան՝ առանց բան հասկանալու:

– Ավտոմեքենան... դա... անմեղ կատակ էր... չկարողացա դիմանալ... ուզում էի փորձարկել: Գովազդային նկարները... անկեղծորեն կարծում էի, որ ձեզ տհաճություն չեն պատճառի... Եթե իմանայի... իսկ հագուստը... այն, որ հագնում եմ... նրանը չէ... կարել եմ տվել ինձ համար նույն օրինակով... Ուզում էի կյանքս փոխել... Ես... ես սովորեցի մեքենա վարել... նոր կահույք պատվիրեցի... գնեցի գծանկարը... իսկ շոգեբաղնիքը... ուզում էի նիհարել... ուզում էի սովորություններս...

Լռեց: Հևում էր: Ես կռացել մնացել էի նրա վրա: Իսկ եթե նա ճի՞շտ էր ասում: Եթե այս բոլոր եղելությունները սոսկ իմ երևակայությա՞ն արդյունք էին... Նա ինձ ասել էր, որ ուզում է իր կյանքը փոխել: Ես նրան քաջալերել, օգնել, խորհուրդ էի տվել: Ես էի նրան թելադրել, որ ավտոմեքենա վարել սովորի, նոր հագուստներ կարել տա, նոր կահույք գնի, դուրս գա իր պատյանից: Նա խոստովանություններ չէ՞ր արել ինձ: Եվ հիմա վիրավոր ընկած է այստեղ և ոչ ոք չունի, որ օգնի իրեն: Խանութում ծաղրում էին նրան, որ իր գործերը թողած՝ ուզում է իր համար մարզական ավտոմեքենա գնել: Նա կարող էր մահանալ լքված, մենակ, այս տանը, որտեղ ծնվել էր, և ոչ ոք չէր գա փնտրելու նրան: Ոչ ոք: Նա անտեսում էր իր ընկերներին, որովհետև ձանձրանում էր նրանց հետ: Նա եկել էր ինձ տեսնելու մեր առանձնատանը, որպեսզի կապվի մի նոր մարդու հետ, նոր բարեկամներ ունենա, և ահա անշարժացած մնացել է ծնկներիս տակ իր իսկ տան մեջ: Եվ չկա մեկը, որ օգնի իրեն:

– Վանիե՛: Վանիե՛, մի՛ մեղադրեք ինձ... ներե՛ք ինձ...

Վերցրի նրան մեղմորեն, եղբոր նման: Պառկեցրի բազմոցին և քննեցի վերքը:

– Վտանգավոր չէ, վտանգավոր չէ: Մի՛ վախեցեք, Վանիե՛...

Մտա խոհանոց: Գտա ալկոհոլ և անձեռոցիկ: Վանիեն չէր շարժվում: Սկսեցի մաքրել գլխից հոսող արյունը: Վերքը խոր չէր:

– Ներե՛ք ինձ, Վանիե՛... Հիվանդացել էի... ջղերս... Խոստանում եմ, որ կգնամ հոգեբույժի մոտ քննվելու... Ինչպե՞ս եք զգում ձեզ: Խոսե՛ք, մի բա՛ն ասեք...

Աննկատելիորեն շարժեց շրթները:

– Մի քիչ ավելի լավ եմ, – շշնջաց: – Մի քիչ... հառուստս կեղտոտվեց:

– Հիմա կմաքրեմ: Մի՛ շարժվեք: Հանգստացե՛ք: Ուզո՞ւմ եք, որ բժիշկ կանչեմ: Ներե՛ք ինձ, Վանիե՛: Ես մարդասպան չեմ: Երդվում եմ: Ոչ ոքի չեմ սպանել: Առաջին անգամ է, որ այսպես բորբոքվում եմ: Հասկանում եք... այս դատավարությունը... այս մեղադրանքները... Ֆյուրկովին սիրում էի հոր նման: Նրա բարեկամներից ոչ ոքի մտքով չի անցել, թե ես եմ գործել այդ ահավոր արարքը: Ոչ ոքի մտքով, Վանիե՛:

Նա բարձրացրեց թևը թույլ, հոգնած մի շարժումով: Արյունը լերդացել էր: Վանիեն ծերացել էր տասը տարով:

– Եկե՛ք, Վանիե՛... Ես ձեզ այստեղ չեմ թողնի: Եկե՛ք հանգստանալու մեզ մոտ մի քանի օրով... Դա կօգնի ձեզ, որ փոխեք ձեր մտքերը... Եկե՛ք... Կարո՞ղ եք քայլել: Հենվե՛ք ինձ վրա... Ասացե՛ք Նիկոլին, որ ավտոմեքենայի արկած եք ունեցել...

Օգնեցի նրան, որ վեր կենա: Նա հլու–հնազանդ բռնեց թևս: Խղճի խայթը ճմլում էր սիրտս:

* * *

Նիկոլը սավանը նետեց իր վրայից և անկողնից դուրս ցատկեց այն ժամանակ, երբ ես ուզում էի գիրկս առնել նրան: Առավոտյան ժամը վեցն էր, և սպիտակ ամպերից ցած էր իջնում անբնական, հեղձուցիչ մի տաքություն: Օդի ոչ մի տատանում չէր շարժում լայն բացված պատուհանների վարագույրները:

Նիկոլը մարմնամարզական մի քանի շարժում արեց, ապա կռացավ վրաս: Թվում էր, որ լավ տրամադրության մեջ է: Նա քիթը քսեց իմ այտին, ծանրացավ վրաս, և այն պահին, երբ պատրաստվում էի նրան գիրկս առնել, ետ քաշվեց:

– Վե՛ր կաց: Գնանք թիավարենք լճի վրա: Ուզում եմ շարժվել, ազատ չունչ քաշել:

Ցանկություն չունեի ո՛չ վեր կենալու և ո՛չ էլ թիավարելու: Միակ ցանկությունս Նիկոլն էր, Նիկոլը, որ այնքան ցանկալի էր այս առավոտ, Նիկոլը, որ փախչում էր ինձանից այս առավոտ առաջին անգամ լինելով: Եղանակի պատճառով թերևս:

– Վեր եմ կենում, բայց դու՛ պիտի թիավարես: Համաձա՞յն ես :

Մի պահ մտածեց և ասաց.

– Կարծում եմ՝ լուծումը գտա:

Եվ նա արագ փաթաթվեց անկողնի սավանով:

– Պիտի խնդրեմ քո բարեկամին, որ ուղեկցի մեզ: Նա ուժեղ է, լավ կթիավարի:

Վանիեն երկու օրից ի վեր պառկել էր հարևան սենյակում: Գլխի վերքը սպիացել էր: Նիկոլը բաց թողեց դուռը և ոտքի մատների վրա քայլելով՝ գնաց բախելու Վանիեի դուռը: Իսկույն վերադառնալով՝ ասաց.

– Խռմփում է... Սարսափելի է... Արի լսի՛ր...

Հետևեցի նրան: Իրոք Վանիեն խռմփում էր մեծ աղմուկով, ասես ներշնչած օդը դժվարությամբ էր մտնում իր թոքերը և հետո դուրս գալիս առավել մեծ աղմուկով: Մեկ–մեկ այն տպավորությունն էի ունենում, որ նրան խողխողում են:

– Թողնենք, որ քնի, – ասաց Նիկոլը: – Գնանք թիավարենք երկուսով: Վախեցնում է ինձ:

Նա հայտնապես տպավորված էր: Հանկարծ դուռը բացվեց, և Վանիեն երևաց հանգստացած, թարմացած դեմքով, որը բոլորովին չէր համապատասխանում քիչ առաջվա սուր, ճչացող ողբերին: Նա աչքերը չռեց և ասաց.

– Արդեն վե՞ր եք կացել:

Հագել էր Ֆյուրկովի գիշերանոցը: Նիկոլը, սավանը սեղմելով իր մարմնի վրա, պատասխանեց.

– Մենք որոշել ենք մի շրջապտույտ կատարել լճի վրա: Ուզո՞ւմ եք մեզ ուղեկցել:

Եվ նա չարաճճի մի հայացք գցեց վրաս: Վանիեն իրեն զսպեց, որ չհորանջի:

– Շրջապտույտ նավակո՞վ : Այո՛, ինչո՞ւ չէ: Ձեզ չե՞մ խանգարի:

– Ամենևի՛ն, – ասաց Նիկոլը: – Հագնվե՛ք շուտով և եկե՛ք միանալու մեզ:

Նիկոլն ինձ քաշեց տարավ ննջասենյակ և արագ հագնվեց: Մի կարճ տաբատ և մի վերնաշապիկ: Նույնն արեցի և ես: Նա ատամների միջից մրմնջաց ականջիս.

– Պիտի թիավարի՛ Վանիե հայրիկը: Կտեսնես, թե ինչպե՛ս եմ աշխատեցնելու նրան: Կտեսնես...

Թիակները նրա ձեռքը տալու գաղափարը անչափ

զվարճացնում էր նրան: Արագ սանրեց մազերը, հետո դարձավ դեպի ինձ և շրթները կպցրեց իմ շրթներին: Նա խոր հեշտանքի մի տեսակ խռխռոց արձակեց, ապա անջատվեց ինձնից ափսոսանքով, բայց եռանդագին:

Ավազի վրա կապված մի նավակ կար: Մենք այն հրեցինք մինչև ջուրը:

– Ահա՛ նա:

Վանիեն երևաց: Նա դեռ իր տաբատի գոտին էր կապում և մոռացել էր սանրվել: Սպեղանիով ծեփած երեք շերտ կտավ շրջանակում էին նրա ճակատը: Նա նման էր կրտսեր ծաղրածուի:

– Շտապեցի, – ասաց և տեղավորվեց նավակի մեջ, մեր դիմաց: Վերցրեց թիակները: Լիճը խաղաղ էր: Թիակները համաչափ մտնում էին ջրի մեջ և դուրս գալիս: Հարյուր մետրի չափ թիավարելուց հետո առաջարկեցի թիակները ինձ հանձնել:

– Ո՛չ, ես պետք է նիհարեմ:

Լճի վրա ուրիշ նավակ չկար: Քաղաքը, կարծես քարացած, քուն էր մտել: Քարաժայռը, որ ես հաճախ սիրում էի դիտել, անհետացել էր մառախուղի մի թանձր խավարի տակ: Նիկոլը, գլուխը կախած ջրի վրա, ձեռքը սահեցնում էր ջրի մակերեսին և ոչինչ չէր ասում: Երբ հասանք լճի մեջտեղը, ես հանվեցի և ինձ գցեցի ջուրը:

– Դուք շարունակեք թիավարել, – ասացի Վանիեին:

Ուզում էի մենակ լինել, թուլացնել, հանգստացնել մկաններս: Կնախընտրեի, որ ջուրը ավելի սառը լիներ: Մի քանի շարժում կատարելուց հետո պառկեցի մեջքի վրա և սկսեցի դիտել ամպերը, որոնք ի վերջո շշմեցրին ինձ: Նավակը հիսուն մետրի չափ հեռու էր գտնվում: Նիկոլը առաջվա նման գլուխը կախել էր ջրի վրա, իսկ Վանիեն շարունակում էր թիավարել: Միայն ինքն էր ինձ տեսնում: Ես

նշան արեցի նրան, բայց նա շարունակեց թիավարել: Իմ մի քանի վարժությունները հոգնեցրել էին ինձ: Ես մոտեցա նավակին, բայց Վանիեն թիավարում էր միշտ: Նորից նշան արեցի: Նա ոչ մի ուշադրություն չդարձրեց ինձ վրա: Նավակից մի քսան մետր հեռու էի: Հանկարծ ջուրը ինձ սառած թվաց: Ի՞նչ է, լճի մեջտեղո՞ւմ պիտի թողներ ինձ: Իսկ Նիկոլը: Ինչո՞ւ չէր նա դառնում իմ կողմը:

– Հոգնած եմ, սպասե՛ք:

Նիկոլը շուռ եկավ և ինձ նայեց: Վանիեն շարունակում էր թիավարել: Ի՞նչ էր նշանակում նրանց այս տարօրինակ վարմունքը: Ես չափից դուրս հոգնած էի, որպեսզի շարունակեմ հետևել նրանց, և վախենում էի ծիծաղելի դառնալ նրանց աչքին՝ աղաչելով, որ սպասեն ինձ: Երկարեցի մեջքի վրա, որպեսզի հանգստանամ: Նրանք անշուշտ նկատել էին, որ ես հոգնել եմ: Փակեցի աչքերս, որովհետև ամպերից թափանցող ճառագայթները շլացնում էին ինձ: Այլևս չէի լսում թիակների աղմուկը: Գնացե՞լ էին արդյոք: Հարկավոր էր գերմարդկային ուժ գործադրել կրկին ափ հասնելու համար: Բարձրացրի գլուխս և տեսա Նիկոլին, որը ծիծաղում էր: Ինչո՞ւ էր այդպես ծիծաղում: Կատաղությունը խայթեց կոկորդս: Հետո նկատեցի, որ նավակը գալիս էր ուղիղ ինձ վրա: Շուտով Նիկոլի գլուխը վերևից երևաց դեմքիս վրա:

– Ուզո՞ւմ ես դեռ լողալ:

Զէ՞ր նկատել, որ ես հոգնել սպառվել էի: Առանց մի բառ արտասանելու՝ մեծ դժվարությամբ բարձրացա նավակ: Վանիեն ոչինչ չէր ասում: Վատ տրամադրության մեջ էի: Ծնոտներս կծկված՝ այն տպավորությունն ունեի, որ չեմ թրջվել:

* * *

Նիկոլը պատրաստում էր կիտրոնով մի թխվածք, որ տնական հայտնի խմորեղենն էր: Ես կարդում էի մի ամսագիր, իսկ Վանիեն ռադիոյից լսում էր օրվա լուրերը: Տասը րոպե անց նա դարձրեց կոճակը և հոտ քաշեց: Վանիլի հոտը տարածվել էր սենյակում: Վանիեն ասաց.

– Ճաշից հետո պիտի գնամ: Վախենում եմ, որ կխանգարեմ ձեզ: Դուք իսկապես չափազանց ազնիվ գտնվեցիք:

Թվում էր, թե անկեղծ է: Կանչեցի .

– Նիկո՛լ, արի՛ մի րոպե: Վանիեն գնում է...

Նիկոլը ներս մտավ փոքրիկ գոգնոցը կապած:

– Վանիեն տուն է վերադառնում:

– Ինչո՞ւ:

– Չգիտեմ:

Կարճ լռությունից հետո նա ասաց.

– Նախ կճաշակի իմ պատրաստած թխվածքը, այնուհետև կտեսնենք:

Ապա վերադարձավ խոհանոց:

– Ճանձրանո՞ւմ եք մեզ հետ:

Նա համակրանքով ձեռքը դրեց ուսիս վրա: Չէի սպասում այդպիսի ջերմ վերաբերմունքի: Անկեղծորեն հուզվեցի:

– Լսե՛ք, Պիե՛ռ... Երբեք, երբեք այսքան երջանիկ չեմ եղել:

Նա այս նախադասությունը արտասանեց ինքնաբուխ կերպով և, կարծես մի քիչ ամաչելով, ավելացրեց.

– Այս մի քանի օրերը, որ այստեղ ձեզ մոտ անցկացրի, ինձ հիշեցնում են իմ երիտասարդությունը: Չծաղրեք ինձ, խնդրեմ: Ես զարմիկներ ունեի և ամեն ամառ գնում էի մեկ ամիս անցկացնելու նրանց մոտ: Նրանք ապրում էին մի տան մեջ, ծովի ափին: Սրանք հիշողություններ են, որ ես

բնավ չեմ մոռանա: Ապուշ բան է, բայց այդպես է: Ձեզ պիտի ասեմ էլ ավելի ապուշ մի բան...

Նա մոտեցավ ինձ և արագորեն փսփսաց ականջիս.

– Ինձ թվում է, որ կյանքս կանգ է առել տասնյոթ տարեկան հասակում: Իմ բոլոր հիշողությունները պարփակված են այդ ժամանակահատվածի մեջ, թեև արտակարգ ոչինչ չեմ արել: Հիշում եմ, որ ձանձրանում էի, բայց նույնիսկ տասնյոթ տարիների իմ ձանձրույթը հիմա քաղցր է թվում ինձ: Տարօրինակ չէ՞: Հիսուներկու տարեկան եմ: Մտածում եմ երբեմն այս մասին, բայց չեմ կարողանում լուրջ ընդունել իմ հիսուներկու տարիները: Մի քանի ամիս առաջ հրավիրվել էի իմ զարմիկներից մեկի մոտ: Նա իմ տարիքին է և ունի զավակներ: Երբ նրան տեսնում եմ իր զավակների հետ, ինձ թվուն է, թե երազում եմ:

Նա լռեց, հետո շարունակեց՝ շունչը բռնված.

– Չեմ կարողանում ինձ համոզել, որ մի օր կարող եմ մահանալ, և ոչ մի հետք չի մնա ինձանից:

Նա դողում էր իր սիգարետը վառելիս:

– Ես լուսանկարիչ դարձա մասամբ իմ տագնապների պատճառով: Կարո՞ղ եմ մի գաղտնիք հայտնել ձեզ: Ես հավաքում եմ բոլոր այն մարդկանց լուսանկարները, որոնց ճանաչել եմ, և որոնք մահացել են: Այդ լուսանկարները ես մեծացնում եմ և երբ մտածում եմ իմ սեփական մահվան մասին, դրանք փռում եմ հատակին և մտնում եմ գալիս դրանց մեջտեղում, որպեսզի մեղմացնեմ իմ սեփական մահվան գաղափարը:

– Ձեր հավաքածուն հարստացնելու համա՞ր է, որ ինձ դատապարտեցիք մահվան:

Իսկույն զղջացի այս խոսքերիս համար: Վանիեն տեղում քարացավ, կարծես հարված ստացած լիներ:

– Ո՛չ, իհարկե ոչ: Ես ձեզ իսկապես մեղավոր էի կար-

ծում: Իսկ հիմա՞... է՞հ, ում է պետք քրքրել այդ պատմությունը:

– Եկե՛ք գնանք մարսողական մի բան խմենք բացօթյա պատշգամբում:

* * *

Մենք Վանիեին համոզեցինք, որ մի գիշեր էլ անցկացնի մեր տանը: Կեսգիշերի մոտ ննջասենյակ քաշվեցի Նիկոլի հետ: Եղանակը չէր փոխվել: Ասես ցեմենտի մի կտոր կախված լիներ մեր գլխավերևում: Խոշոր ճանճերը բզզում էին օդում: Տասը բոպե հետո բարձս արդեն թրջվել էր: Նիկոլը քնում էր: Ուզում էի գիրկս առնել նրան, բայց չէի համարձակվում դիպչել: Քունս չէր տանում: Ամեն ինչ ինձ թվում էր ծանր և խոնավ: Ամենափոքր աղմուկը ցնցում էր ջղերս: Չէի կարողանում աչքերս փակել: Դռան և պատուհանների բռնակները այնպես էին փայլում, որ անհնար էր լինում քնել: Իմ բոլոր զգայարանքներին, բոլոր ջղերին կոչ էի անում, որ թուլանան, որպեսզի քնեմ, բայց քունը չէր գալիս:

Լսում էի, թե ինչպես Վանիեն շարժվում է իր անկողնում: Նա նույնպես չէր քնում: Մտածեցի վեր կենալ և մի սիգարետ ծխել կամ գուցե որոշ ժամանակ շատախոսել նրա հետ: Բայց ճիշտ այդ պահին զգացի, որ թևերս ծանրանում են: Չէի շարժվում այլևս: Թողնում էի զգուշությամբ, որ քունը աստիճանաբար կլանի ինձ, անզգայացնի մարմնիս բոլոր անդամները և լրիվ տիրանա ուղեղիս:

Քնից ընդոստ արթնացա: Երկար ժամանակ սանձված անձրևը, փախչելով ամպերի միջից, շառաչաձայն թափվում էր լճի վրա: Նիկոլն ինձ մոտ չէր: Թեքվեցի և տեսա, որ գիշերանոցը հագին նա նստած է պատշգամբում Վանիեի մոտ: Վերջինս թևերը ծալած էր, անշարժ նստած, արձանի նման ուղիղ: Չէին խոսում: Երբ ամպերից խույս տված մի փայլակ ճեղքում էր այս անձրևի ուժգին տարափներից առաջացած խավարի անթափանց վարագույրը, կարմրավուն մի լույս էր բոցկլտում նրանց դեմքերի վրա, որոնք նմանվում էին կարծր, անկենդան դիմակների: Վանիեի մեղկ դեմքը ցավագին և ազնիվ ցոլքեր էր արձակում: Ես նրան երբեք չէի նայել այդ դիտանկյունից: Նիկոլի դիմագծերը քարացած էին վշտագին մի կենտրոնացման մեջ: Ուզում էի վեր կենալ, հանել նրանց այդ ձգված վիճակից և ասել. «Եղած չեղածը անձրև է»: Բայց մնացի անկողնում դամված, կարծես կախարդված: Որքա՞ն ժամանակից ի վեր պատշգամբում էին: Իսկ ինչո՞ւ ոչ մի բառ չէին արտասանում: Անձրևը կրկնապատկեց իր սաստկությունը նվազ համաչափությամբ: Նրա ճայթյունը երկարաձգվեց լճի վրա և ցրվեց: Ասես ամպի յուրաքանչյուր ծվեն դատարկվում էր ավելի կամ նվազ անհամբերությամբ: Հետո հանկարծ տեղի ունեցավ մի դադար: Լիճը փաթաթած մառախուղն անհայտացավ, և սպիտակ ալյակներ մրմնջացին անզգալիորեն: Խորունկ շունչ քաշեցի: Վանիեն ցայգազգեստը սեղմեց իր մարմնի վրա և առանց մի բառ ասելու՝ հեռացավ պատշգամբից: Նիկոլը դեռ որոշ ժամանակ մնաց պատշգամբում, հետո նրա ստվերը ուրվագծվեց դռան բացվածքի մեջ:

Աստված իմ, որքա՜ն ցանկալի էր նա իր թափված մազերով, իր անշարժ դեմքով, իր գիշերանոցով, որի մեջ լողում էր իր մերկ և ոսկեգույն մարմինը:

Վեր կացա և զգացի, որ դողում եմ: Մոտեցա նրան և ձեռքս դրեցի նրա ուսին: Ոչինչ չասաց: Այն տպավորությունն ունեցա, թե երբեք չեմ սիրել նրա մարմինը: Խռովված էի և անհանգիստ: Գրկեցի նրան և մեղմորեն սեղմեցի: Մարմինը ձգված էր: Վերցրի քնքշությամբ և դրեցի

մահճակալի վրա: Չէր դիմադրում: Կռացա նրա շրթների վրա: Դեմքը թրջված էր, բայց շուրթերը չոր էին և այրվում էին: Երկարեցի նրա կողքին և երկարորեն համբուրեցի նրան: Չէր շարժվում: Գրկիս մեջ առա և ուժգին սեղմեցի կրծքիս: Աչքերը լայն բացած՝ նայում էր առաստաղին: Սիրային մի նոր հնարա՞նք: Մերկացրի նրան և շրթներս պտտեցրի նրա կիզիչ և ձգված մարմնի վրա: Ուզում էի ցավեցնել նրան, որպեսզի մի տրտունջ, մի ճիչ արձակի: Ատամներս մխրճեցի նրա մսի մեջ և ուժգին նրան սեղմեցի մարմնիս: Որքա՜ն ցանկալի էր: Սավառնում էի մի ուրիշ աշխարհում և տարտամորեն մտածում Ֆյուրկովի մասին, որը սիրել էր այս մարմինը: Մաշկս, մկաններս, ոսկորներս, արյունս մասնատվում, թափանցում էին նրա մարմնի մեջ, ձգվում, ձգվում, և այլևս ոչինչ գոյություն չուներ բացի բորբոքված ջղերի անվերջանալի պայթյուններից:

Ընկա նրա կողքին՝ շնչասպառ: Նա փակել էր աչքերը, բայց դեմքը ողողված էր արցունքներով: Ինչո՞ւ էր լաց լինում:

* * *

Նիկոլը բաց արեց աչքերը և ժպտաց ինձ.

– Չե՞ս կարծում, որ Վանիեն տարօրինակ մի կյանք է վարում, – ասաց:

Եվ շարունակեց.

– Տարօրինակ և ոգևորությամբ լեցուն:

Չպատասխանեցի: Ի՞նչ էր պատմել նրան, որ նա այդ աստիճան տպավորվել էր: Նիկոլը վերմակը քաշեց վրան և փակեց աչքերը: Դեռ քունը չէր առել: Վեր կացա և գնացի Վանիեի դուռը թակելու:

– Մտե՛ք:

Հագնված, մաքուր սափրված՝ նա ինչ–որ բան էր նշում

իր ծոցատետրում: Նիկոլի հարցը անհանգստացնում էր ինձ:

– Ճի՞շտ է, որ դուք տարօրինակ կյանք եք վարում:

Ձայնս թեթևակի դողում էր: Վանիեն գլուխը բարձրացրեց և զարմացած աչքերով նայեց ինձ:

– Տարօրինակ կյա՞նք: Ե՞ս:

– Նիկո՛լն ասաց ինձ: Պատահաբար հո կրկնակի կյանքով չե՞ք ապրում:

Ես բնական էի համարում այդ մասին հարցնել նրան, և նա բնական էր համարում պատասխանել ինձ:

– Ո՛չ, բոլորովի՛ն,– բողոքեց:–Նիկոլն ինձ խնդրեց, որ իրեն պատմեմ բոլոր օրերի իմ կյանքը: Եվ պատահաբար ընտրեցի մի օր և նրան պատմեցի...

Եվ նա գրպանից հանեց իր ծոցատետրը.

– Արթնանալ առավոտյան ժամը հինգին: Խմել մի գավաթ սուրճ՝ չափչփելով սենյակս: Ռադիոյից լսել լուրերը: Մեկնել խանութ և այլն: Իսկապես որ տափակ կյանքով եմ ապրում:

Ժպտացի:

– Զարմանալի է: Նիկոլը գտնում է, որ դա տարօրինակ կյանք է:

Վանիեն բարձրացրեց ուսերը:

* * *

Այդ նույն երեկոյան՝ մեզնից բաժանվելուց հետո, Վանիեն զանգահարում էր մեզ և ճաշի հրավիրում իր տանը:

– Պատրաստել եմ սառը ուտելիքներ, – ասաց նա: – Սպասում եմ անպայման:

Ժամը իններին մոտ հասանք նրա տունը: Նա հագուստը փոխել էր և կապել պոռոտ գույներով մի փողկապ, որ բնավ չէր հարմարվում իր բաճկոնին: Բազմագույն մոմեր

լուսավորում էին հյուրասենյակը և ծաղիկներ էին սփռվել շքեղորեն հարդարված մի սեղանի վրա:

– Ամեն ինչ դրված է, – ասաց նա, – ձկնկիթ, հորթի լյարդով կարկանդակ, հավի միս և շամպայն:

Նա ժպտաց գոհունակ դեմքով:

– Մեզ ոչ ոք չի խանգարի:

Նիկոլը նայեց ինձ, և ես նրա աչքերի մեջ հանկարծ նկատեցի տարօրինակ մի փայլ, որ ինձ անհանգստություն պատճառեց: Հիշեցի հանկարծ, որ որոշ ժամանակ առաջ ես նրան իր ամուսնու հետ ճաշի էի հրավիրել իմ լուսանկարչատանը:

– Եվ սա բոլորը չէ, – շարունակեց Վանիեն: – Կլինի նաև մի անակնկալ:

Խմե՞լ էր արդյոք: Շատ լավ տրամադրության մեջ էր թվում և անընդհատ պտտվում էր սեղանի շուրջը: Այդ ժամանակ ես էլ նրանց համար պատրաստել էի սառը ուտելիքներով մի սեղան, որի վրա դրված էին ձկնկիթ և հորթի լյարդով կարկանդակներ: Մտածեցի, թե պարզ զուգադիպություն է: Բոլոր ամուրիներն էլ ...

– Եկե՛ք, պարոնա՛յք ...

Երկու կույր երաժիշտներ մտան հյուրասենյակ: Ժպտում էին: Մեկը ջութակահար էր, մյուսը՝ ակորդեոնահար: Կամաց–կամաց իմ անհանգստությունը փարատվեց, և Վանիեի բարձր տրամադրությունը վարակեց ինձ: Երաժիշտները նվագում էին հունգարական չարդաշներ: Վանիեն դատարկում էր բաժակ բաժակի հետևից: Նիկոլը, գլուխը ետև շրջած, հետևում էր նվագի համաչափությանը՝ շարժելով իր պատառաքաղը: Ես երգում էի: Դույլի մեջ դրված երկրորդ շիշը անհամբեր մեզ էր սպասում: Ահավոր աղմուկ–աղաղակ էինք բարձրացնում:

– Իսկ հարևաննե՞րը, Վանիե՛:

Նա ձեռքի կտրուկ շարժումով ավլեց և սրբեց նրանց՝ ասելով.

– Ոչխարներ են, կարևորություն մի՛ տվեք:

Երաժիշտները կրկնապատկեցին իրենց եռանդը: Վանիեն բաժակը բարձրացրեց՝ ասելով.

– Խմում եմ բարեկամության կենացը: Մե՛ր բարեկամության:

Նա լրջացել էր:

– Բարեկամությա՛ն կենացը, – պատասխանեցի՝ արձագանքելով նրան:

– Բարեկամությա՛ն կենացը, – շարունակեց Նիկոլը:

Եվ մենք դատարկեցինք մեր բաժակները: Վանիեն իսկույն լցրեց դրանք և ասաց.

– Իմ սիրելի՛ Պիեռ, մի խնդրանք ունեմ. թույլ կտա՞ք, որ ձեզ դիմեմ եզակիով:

– Այո՛, իհարկե: Խոսենք իրար հետ եզակիով: Բոլորն էլ եզակիով են խոսում:

Թվաց, թե պատասխանս հուզեց նրան: Նա իր բաժակը դրեց սեղանին և ձեռքս սեղմեց գորովալից զգացումով: Կարծեցի, թե ինձ պիտի համբուրի ռուսական ձևով՝ բերանից:

Նա ասաց.

– Մի խնդրանք ևս. թո՛ւյլ տուր, որ առաջինը ես խոսեմ քեզ հետ եզակիով:

– Արդեն այդ բանն արեցիր, – ասաց Նիկոլը. – դու եզակիով խոսեցիր հետը:

Չգիտեմ, թե ի՛նչ պատճառով Նիկոլի եզակիով խոսելը նրա հետ վիրավորեց ինձ մի քանի վայրկյան: Ծիծաղելի է, մտածեցի, Վանիեն կարող է նրա հայրը լինել: Սակայն Վանիեն ոչ մի ուշադրություն չդարձրեց դրա վրա:

– Հիմա մենք պիտի փշրենք մեր բաժակները:

Մինչ ես փորձում էի բողոքել, նա պնդեց՝ ասելով.

– Փշրենք մեր բաժակները, որպեսզի կնքենք մեր բարեկամությունը:

Եվ նա թափով իր բաժակը արձակեց պատին: Մենք ընդօրինակեցինք նրան: Առավոտյան ժամը երկուսի մոտ արդեն լրիվ հարբած էինք: Երաժիշտները մեղմ եղանակներ էին նվագում: Ես ընկել թաղվել էի բազկաթոռիս մեջ: Վանիեն իր նոր ձայնապնակներն էր ցույց տալիս Նիկոլին, որը ուշադրությամբ քննում էր դրանք: Ամեն ինչ ինձ թվում էր պարզ և դյուրին: Մեկնելու ազդանշան տվեցի՝ ասելով.

– Շուտով կտեսնվենք:

Ավտոմեքենայի ղեկը հանձնեցի Նիկոլին:

– Ինչպիսի՛ երեկո, ինչպիսի՛ երեկո, – կրկնում էի ա-նընդհատ:

– Ես քեզ ասացի, նա տարօրինակ կյանք է վարում:

– Այո՛, տարօրինակ....

Բայց երբվանի՞ց: Արդյո՞ք նրա համար, որ Նիկոլն էր նրան թելադրել այդ գաղափարը...

* * *

Առավոտյան ժամը տասին հնչեց հեռախոսի զանգը: Մենք տակավին անկողնում էինք: Վերցրի լսափողը:

– Ա՛, դուք եք...

Վանիեն հուզված էր թվում: Նրա ձայնը հաճախակի ընդհատվում էր:

– Չեմ կարող ընդունել ձեր հրավերը,– ասում էր նա,– ինձ համար անկարելի է մի շաբաթ անցկացնել ձեր տանը:

Ի՞նչ հրավերի մասին էր խոսում: Փակեցի լսափողի բերանը և հարցրի Նիկոլին, թե ես արդյոք Վանիեին հրավիրե՞լ եմ: Նա պատասխանեց առանց աչքերը բանալու.

– Այո՛, դու նրան հրավիրեցիր մեկ շաբաթով:

Բոլորովին չէի հիշում: Ի՞նչ կարող էի ասել նրան:

– Կգաք այս շաբաթվերջը անցկացնելու մեզ մոտ:

– Գուցե, – ասաց,– վստահ չեմ: Ներեցե՛ք...

Լսեցի նրա շնչառությունը:

– Պետք է իրար հետ եզակիով խոսենք, – ասաց: – Որոշեցինք, չէ՞:

– Այո՛, հենց որ նորից հանդիպենք միմյանց:

Ուզում էի լսափողը տեղը դնել, երբ Նիկոլն ասաց ինձ.

– Քաղաքավարություն չի լինի այդպես երեսի վրա թողնել նրան երեկ երեկոյան քո պնդումից հետո: Ասա՛, որ...ի՞նչ ենք անում այս երեկո: Գուցե ակումբ գնանք:

– Ալլո՞: Եկե՛ք մեզ միանալու ակումբում:

Երեկոյան երբ գնացինք ակումբ, Վանիեն արդեն այնտեղ էր: Նա սմոքինգ էր հագել, թեև ակումբում իրենից բացի ոչ ոք սմոքինգ չէր կրում: Նա շտապ ընդառաջ եկավ մեզ այնպիսի լավ տրամադրությամբ և անկեղծությամբ, որ ինձ համար նորություն էր:

– Սիրելի՛ բարեկամներս, որքան ուրախ եմ, որ կրկին տեսնում եմ ձեզ: Կարոտել էի...

Նա շտապ համբուրեց Նիկոլի ձեռքը և իմ թևը սեղմեց այնպիսի ուժով, որ ցավ զգացի:

– Եկե՛ք, եկե՛ք, մեզ համար առանձնացրել եմ սեղանը...այնտեղ, խորքում: Մենք հանգիստ կլինենք... եկե՛ք...

Նվագախումբը մի վալս էր նվագում: Բոլոր սեղանները գրավված էին: Մի քանի ծանոթ դեմքեր գլխով ողջունեցին մեզ: Քանի որ ավագ մատուցողը ուշանում էր գալ, Վանիեն գնաց նրան փնտրելու և վերադարձավ ճաշացուցակը ձեռքին:

– Ի՞նչ եք ուզում ուտել, Նիկո՛լ... Ներեցե՛ք, դեռ չեմ կարողանում եզակիով դիմել ձեզ:

Նա ծիծաղեց, մենակ: Խմա՞ծ էր արդյոք: Նրա հուզումն այնքան մեծ էր, որ կարծես նա տենդից բռնված լիներ: Նախադասություններն ու շարժումները մնում էին օդից կախված:

– Դե՛, վերսկսում եմ. ի՞նչ ես ուզում ուտել, Նիկո՛լ... Իսկ դո՞ւ , Պիեռ: Ո՛ւֆ, ինչքան դժվար է ձեզ հետ եզակիով խոսել:

– Ինձ դա բոլորովին չի նեղում, – ասաց Նիկոլը: – Ի՞նչ ես ուզում ուտել դու:

– Ես նախընտրում եմ տապակած հավի ճուտ, – սկսեցի խոսել...

– Ես քեզ չեմ դիմում, – ասաց Նիկոլը:

Ավագ մատուցողը եկավ և վերցրեց պատվերները: Վանիեն իրեն շատ լավ էր զգում այս պճնամոլ միջավայրում: Կատակում էր, ծիծաղում մենակ, պատմություններ պատմում, կարճ ասած՝ արտակարգորեն զվարթ էր: Ճաշի վերջում սիգարետներ բաժանեց, իսկ իր սիգարետը մտցրեց ոսկյա ծխամորճի մեջ:

Նա աչքով արեց ինձ և ասաց.

– Ինձ թվում է, որ վերապրում եմ: Ձե՛ր շնորհիվ... եթե, եթե...

– Պարո՞ւ մ եք, – հարցրեց Նիկոլը:

Ես վեր կացա Վանիեի հետ միաժամանակ և ամաչեցի:

– Պարե՛ք, – ասացի նրանց, – ես գնամ սեղմեմ իմ բարեկամներից մեկի ձեռքը:

Նրանք մի վայրկ պարեցին, և սեղան վերադառնալիս Վանիեն պատվիրեց մի շիշ շամպայն:

Մենք ակումբից դուրս եկանք գիշերվա ժամը մեկին մոտ: Եղանակը մեղմ էր: Օդում խոնավ հողի հոտ կար: Մի քանի զբոսաշրջիկներ ուշ ժամին ման էին գալիս լճի ափին: Վանիեն խոր շունչ քաշեց և հրաժեշտ տալով՝ ասաց.

– Բարի գիշեր, բարեկամներս... Հրաշալի մի երեկո անցկացրի:

Նիկոլը վերցրեց ղեկը: Ավտոմեքենայի ներսի հայելու մեջ անջատվեց Վանիեի ստվերը: Նա ձգում էր թևերը և երջանիկ էր, որ ապրում է:

* * *

Վանիեի սիգարետի ծայրը փայլեց մթան մեջ: Նախորդ օրերի պոռթկուն տրամադրությունից հետո նա նորից դարձել էր թախծոտ ու մռայլ: Հազիվ էր խոսում, ամբողջ օրը ծխում, մնում մտածմունքների մեջ, և երբ խոսում էի հետը, նա, անակնկալի եկած, խնդրում էր ինձ, որ կրկնեմ նախադասությունս:

– Նիկոլն այստեղ չէ՞:

Թողել էի նրանց պատշգամբում, որպեսզի գնամ պաղպաղակ բերեմ:

– Պետք է իր սենյակում լինի:

Նա սիգարետի ծուխը երկարորեն դուրս արձակեց բերանից և դեմքը մի տեսակ ծամածռելով՝ նայեց սիգարետի փոքրացած մնացորդին, որ արդեն իր մատներն էր այրում, և վառեց մի նոր սիգարետ՝ կարծես ափսոսալով:

– Շատ ես ծխում, – ասացի:

Նա ուղղվեց, նայեց աչքերիս մեջ և ասաց.

– Իրավացի ես: Ահա՛...

Եվ սիգարետը ճզմեց մոխրամանի մեջ: Մի պահ մնացինք լուռ: Լճի վրա սահում էին առագաստանավակները:

Սպիտակ առագաստների վրա ընկել էր լուսնի մի ճառագայթ: Ժամանակ առ ժամանակ ակորդեոնի հնչյունները թնդացնում էին օդը, ապա՝ մարում:

Վեր կացա, որ գնամ տեսնեմ Նիկոլին: Նա երկարել էր մահճակալի վրա:

– Ի՞նչ ես անում մթան մեջ:
– Ոչինչ, – ասաց:
– Քնե՞լ ես ուզում:
– Ո՛չ:
– Արի՛, կարոտել ենք քեզ:
– Մի բոպե մենա՛կ թող ինձ, խնդրում եմ:
Գնացի միացա Վանիային: Նա մի նոր սիգարետ էր վառել:
– Ուզում եմ վաճառել լուսանկարչատունս, – ասացի:– Եթե լսես, թե մի գնորդ կա...
Նա տեղից վեր ցատկեց, կարծես զսպանակի վրա նստած լիներ:
– Կերժ փողոցի քո լուսանկարչատո՞ւնը:
– Վաղուց է ոտք չեմ դրել այնտեղ: Ոչ մի բանի չի ծառայում: Ի՞նչ միտք ունի պահելը...
Նա ջղայնությամբ ձեռքերը մխրճեց իր մազերի մեջ:
– Ո՛չ, ո՛չ, պետք չէ...
Մի պահ լռեց, ապա ձայնը իջեցնելով՝ ասաց.
Եթե փողի կարիք ունես, կարող եմ քեզ տալ...
Մերժեցի:
– Առանձնատունն ընդարձակ է: Ունեմ այն ամենը, ինչ որ պետք է ինձ:
– Գիտեմ, գիտեմ, – կտրեց խոսքս,– բայց պետք չէ վաճառել լուսանկարչատունդ: Մի օր պետք կունենաս:
Նիկոլի ձայնը ընդմիջեց մեզ.
– Պառկում եմ, բարի՛ գիշեր:
Վանիան երկարեց իր սրունքները, նայեց աստղերին:
– Մենք մեզ ոչ մի հաճույքից չպետք է զրկենք,– ասաց նա, ասես ինքն իր հետ էր խոսում: – Նայում եմ աստղերին և ինքս ինձ ասում, որ տխմարի մեկն եմ: Հազարավոր ցրված աստղեր կան երկնքում, իսկ այստեղ՝ կորած մի

անկյունում, կա Վանիա անունով մի մարդ... որ պայքարում է, տարակուսում, ապրում հույսով: Եվ այս բոլոր աստղերը, և այս ամբողջ հրաշքը իմ փոքրիկ դանդի վերև...
Ներքին մի ծիծաղ ցնցեց նրան:
– Նայի՛ր այս աստղազարդ երկնքին և նայի՛ր ինձ:
Նա ավելի ուժգին ծիծաղեց, հետո վեր կացավ հանկարծ, կարծես մի լուրջ որոշում ընդունած լիներ:
– Կարո՞ղ ես ավտոմեքենադ փոխ տալ ինձ: Ուզում եմ վարել: Եթե ցանկանում ես ինձ ուղեկցել...
– Ինչո՞ւ չէ:
Նա տեղավորվեց ավտոմեքենայի մեջ, բաց արեց դազը, և ավտոմեքենան դանդաղ ճանապարհ ընկավ:
– Լապտերները մի՛ մոռացիր վառել:
– Ուզում եմ վարել առանց լապտերների,– ասաց նա:– Այդպես ավելի գրգռիչ է:
Եվ բռնեց քարաժայռի ճանապարհը, այնտեղ, ուր ես նրան առաջնորդել էի առաջին անգամ: Նա վարում էր ուշադիր, առանց լույսի: Ճանապարհը, ժայռերը, ծառերը, որոնց թեթևակի դիպել էր լուսնի ճառագայթը, հանկարծակի դուրս էին ժայթքում խավարից ուրվականների նման: Չէինք խոսում: Քաղաքի լույսերը փայլփլում էին մեր ներքևում: Լսում էի միայն անվադողերի հռնդյունը ճանապարհի դարձվածքներին: Հասնելով քարաժայռի գագաթին՝ նա մեղմորեն արգելակեց ավտոմեքենան, թևերը ծալեց և թաղվեց խոր մտածմունքների մեջ: Գնացի, նստեցի մի ժայռի վրա: Դա Ֆյուրկովի ժայռն էր: Իմ ներքևում դատարկություն էր և մահը: Հրաշալի տրամադրության մեջ էի: Այն միտքը, թե ոտքերիս տակ անդունդն է, իսկ ես նստած եմ այս ամուր ժայռի վրա, հարբեցնող զգացողությամբ էր համակում ինձ: Բոլոր մտածումներս ցնդում

անհետանում էին, և ես ինձ զգում էի փետուրի նման թեթև: Այլևս ոչ մի բան ինձ համար ծանրություն չուներ: Հանկարծ աղմկալի մի շնչառություն զգացի իմ հետևում, մի շնչառություն, որ այրում էր վիզս: Շրջվեցի: Վանիեի աչքերը ուղղված էին ինձ վրա: Դա խորունկ, օտարոտի մի հայացք էր, որ նրա մոտ երբեք չէի տեսել: Դա տևեց մի քանի վայրկյան: Ի՞նչ էր ուզում ինձանից:

– Սիգարետ ունե՞ս:

Նրա ձայնը պղտոր էր: Տվեցի մի սիգարետ: Դրեց շրթների արանքում և փորձեց վառել: Ձեռքերը դողում էին: Վերջապես ծխի մի քուլա դուրս ելավ նրա բերանից: Ինչո՞ւ այս խռովքը: Նրա մոտենալը չէի լսել... Արդյոք պատահաբար ցանկացե՞լ էր ինձ հրել: Չէի համարձակվում դրան հավատալ: Ինչո՞ւ պիտի հրեր ինձ: Ուղիղ կանգնած առջևս՝ շրջել էր հայացքը, բայց շնչառությունը չէր հանդարտվել: Հևում էր վիրավոր կենդանու նման:

– Ի՜նչ գեղեցիկ գիշեր է, – ասացի նրան:

– Այո՛, այո՛, – ասաց այնպիսի մի ձայնով, որն ուզում էր բնական դարձնել, բայց որը խեղդվեց իր կոկորդում:

– Գնանք պառկենք, – ասացի, – ժամանակը ուշ է: Ես ինքս կվարեմ ավտոմեքենան:

Երեխայի նման հնազանդվեց ինձ և գլուխը բարձին հենած՝ ուղիղ նայեց աստղերին:

* * *

– Ինչո՞ւ ես այդքան տխուր, Նիկո՛լ:

Նա իր շորերն էր դասավորում մի փոքրիկ ճամպրուկի մեջ: Ուզում էր մի քանի օրով գնալ իր մոր մոտ, որն ապրում էր այստեղից երեք հարյուր կիլոմետր հեռու: Նա պատասխանեց ինձ դժգույն մի ժպիտով :

– Տխուր չեմ: Դու ինչ – որ բաներ ես երևակայում:

Մի քանի օրից ի վեր նա հաճախ էր ինձ ասում այդ խոսքը՝ «Ինչ – որ բաներ ես երևակայում»: Այս ճանապարհորդությունը նրան պիտի կազդուրեր: Ուզում էր գնացքով մեկնել: Վանիեի հետ մենք նրան ուղեկցեցինք կայարան: Սիրտս անորոշ մի երկյուղով սեղմված՝ թողեցի, որ մեկնի:

– Պիտի կարոտենք նրան, – ասաց Վանիեն:

Նա տխուր էր ինձանից ավելի, և գորովանքի այդ արտահայտությունը հուզեց ինձ:

– Բան չկա, մի շաբաթից կվերադառնա:

– Այդքան երկա՞ր է բացակայելու:

Նա կարմրեց և փոխեց խոսակցությունը: Մենք երեկոն անցկացրինք ընթերցանությամբ:

* * *

– Դեռ չի՞ զանգահարել:

Վանիեն, ցայգազգեստը հագին, ինձ ցույց էր տալիս հեռախոսը: Նիկոլի մեկնումից անցել էր քսանչորս ժամ: Իրոք նա պետք է զանգահարած լիներ:

– Զգիտեմ, թե նրա մայրը հեռախոս ունի՞:

– Կարող էր փոստատնից զանգահարել:

Վանիեն ինձնից ավելի անհամբեր էր: Առանց Նիկոլի ամեն ինչ անիմաստ էր թվում: Ես կարիք ունեի նրան, նրա լռություններին, նրա քմահաճություններին:

– Գուցե զանգահարենք:

Հակառակվեցի՝ ասելով.

– Հանգիստ թողնենք նրան: Եթե մինչև վաղը չզանգահարի, ես նրան կկանչեմ:

Ամբողջ օրը, ցայգազգեստը վրան, Վանիեն պտտվեց հեռախոսի շուրջը:

* * *

– Նա՞ է:

– Վանիեն լողասենյակից լսել էր հեռախոսազանգը: Նա դուրս վազեց թրջված և մերկ:

– Տան սպասուհին է: Գալու է կեսօրից հետո:

Նա այնքան ընկճված էր թվում, որ ստիպված եղա մխիթարել նրան: Երեք օր է, ինչ Նիկոլը ոչ մի լուր չէր տալիս:

– Գուցե հիվանդ է,– ասաց Վանիեն,– հարկավոր է զանգահարել նրան:

– Համբերենք:

Վերջապես չորրորդ օրը Նիկոլը զանգահարեց: Վանիեն էր, որ վերցրեց լսափողը և նրա հետ երկու բառ փոխանակելուց հետո լսափողը փոխանցեց ինձ: Նիկոլը լավ էր զգում իրեն: Թե ինչո՞ւ չէր զանգահարել, չգիտեր: Երբ ես խոսում էի, Վանիեն հետաքրքրությամբ նայում էր ինձ և իմ դեմքի վրա հետևում մեր խոսակցությանը:

– Հիմա կփոխանցեմ քեզ, Վանիե՛: Նա քեզ էլ է կարոտել...

Նիկոլի ձայնը աշխուժացավ: Վանիեն նետվեց լսափողի վրա: Ձեռքերը դողում էին: Ասես ոսկորից զրկված շուն լիներ:

– Նիկո՛լ, Նիկո՛լ...

Ես նրան այսքան ուրախ երբեք չէի տեսել: Մտահոգ էի և անհանգիստ:

* * *

Նա այլևս չէր ածիլվում, չէր ուտում: Ցայգազգեստը հագին՝ ուրվականի նման թափառում էր առանձնատանը: Այլևս ինձ հետ չէր խոսում Նիկոլի մասին: Սպասում էր: Ինչի՞: Ինքն էլ չգիտեր: Երբեմն անակնկալի էի բերում

նրան, երբ գրում էր: Նայում էր ինձ և շարունակում գրել: Ժամերով մնում էր արձանի նման քարացած, հետո հանկարծ տրամադրությունը փոխվում էր և սկսում քթի տակից երգել թե՛ հոգևոր և թե՛ թեթևաբարո երգեր: Երբեմն գալիս շրջում էր իմ սենյակում, որը նաև Նիկոլի սենյակն էր: Նստում էր մահճակալի եզրին, թևերը ծալում, մռթմռթում մի քանի անհասկանալի բառեր, թևերը ձգում և ապա հեռանում: Ի՞նչ էր զգում Նիկոլի նկատմամբ: Սե՞ր: Գորովա՞նք: Բարեկամությո՞ւն: Թերևս այս երեք զգացումները միաժամանակ: Ոչինչ չէի կարող ասել: Դիտում էի նրան մի քիչ անհանգստությամբ: Նա զայրույթ չէր առաջացնում, այլ՝ խանդաղատանք, կարեկցանք:

* * *

Վանիեն քնել էր պատշգամբում դրված բազկաթոռի մեջ: Եղանակը զով էր: Թեթևակի ցնցեցի նրան՝ ասելով.

– Քիչ առաջ Նիկոլը զանգահարեց:

Բաց արեց աչքերը և շշմած նայեց ինձ:

Ավելացրի.

– Նա հղի է:

Վանիեն կրկնեց.

– Հղի՞:

Միանգամից ցատկեց վրաս, բռնեց կոկորդիցս և բացականչեց.

– Ո՛չ, ո՛չ, ո՛չ:

Հետո թուլացրեց ձեռքերի սեղմումը և փլվեց բազկաթոռի մեջ:

– Ինչո՞ւ, ինչո՞ւ, – ասաց նա:

Խլյակի էր վերածվել:

* * *

Հիմա հագում էր: Հավանաբար մրսել էր: Դա մի չոր հագ էր, որ ցնցում էր նրան՝ ցավ պատճառելով: Գիշերվա կեսին նա արթնացավ: Հագնվել էր և ածիլվել: Օծանելիքի հոտ էր գալիս վրայից:

– Գնում եմ նրան բերելու, – ասաց նա:

– Կարիք չկա անհանգստանալու: Առաջիկա շաբաթ կվերադառնա:

– Նա կտրուկ թափ տվեց գլուխը և ասաց.

– Գնում եմ նրան բերելու:

– Խելքի՛ եկ, Վանիե՛ ...

Փակեց ականջները և կտրելով խոսքս՝ վճռական շեշտով շարունակեց.

– Ոչինչ մի՛ ասա ինձ, ոչ մի հարց մի՛ տուր: Գնում եմ նրան բերելու:

– Բայց ինչպե՞ս, ի՞նչ միջոցով:

– Ավտոմեքենայով: Գնում եմ հենց հիմա: Տեղ կհասնեմ արշալույսին, իսկ կեսօրին վերադարձած կլինենք:

Վերցրեց բանալիները, իբրև թե խնդիրը շատ բնական մի բանի վերաբերեր, և կրկնեց.

– Մենք կվերադառնանք կեսօրին:

* * *

Հենց որ տեսա Նիկոլին ավտոմեքենայից իջնելիս Վանիեի հետ, հասկացա, որ կորցրել եմ նրան: Նա կարծես բացակա լիներ: Հազիվ բաց էր անում բերանը, ասես բառերը նրան ցավ պատճառեին: Վանիեն փութկոտությամբ և եռանդով պտտվում էր նրա շուրջը: Ճաշից հետո մենք քաշվեցինք մեր սենյակը: Վանիեն մնաց ճաշասենյակում:

Անշարժ կանգնած պատուհանի առջև՝ Նիկոլը թիկունքը դարձրել էր ինձ:

– Ի՞նչ է պատահել, Նիկո՛լ:

Չպատասխանեց:

– Ուրեմն վե՞րջ: Անկարելի է...

Նա դանդաղ դարձավ դեպի ինձ և մեղմ ձայնով ասաց.

– Ոչինչ անել չեմ կարող:

Թվում էր, թե նա անկեղծորեն վշտացած և հուսահատված է:

– Բայց չէ՞ որ մենք երեխա պիտի ունենանք, պիտի ամուսնանանք,– բացականչեցի:

Նա չկամությամբ շարժեց գլուխը և ասաց.

– Ես չեմ կարող քեզ հետ ամուսնանալ:

– Ինչո՞ւ:

Մի պահ մտածելուց հետո պատասխանեց.

– Չգիտեմ:

Ամբողջ մեկ տարի մենք խենթի պես սիրել էինք միմյանց: Ֆյուրկովի մահից հետո մի նոր մեղրալուսին էր վերսկսվում մեզ համար, իսկ հիմա ես գտնվում էի անտարբեր մի կնոջ դիմաց: Կրքոտ սերը հանգել էր նրա մեջ: Վանիեի՞ն էր սիրում: Ի՞նչ նշանակություն ունի: Նա այլևս ինձ չէր սիրում: Ո՞ր պահից էր դադարել ինձ սիրելուց: Զգացումի այս հանկարծակի փոփոխությունը ըմբոստացնում էր ինձ, բայց իմ հոգու խորքում համոզված էի, որ դա ընդունելի կարող էր լինել: Գիտակցում էի նաև, որ այս փոփոխությունը քմահաճույքի հարց չէր: Եվ դրանից ավելի էի տառապում: Սիրում ենք: Չենք սիրում այլևս: Ի՞նչ միտք ունի մանրամասնորեն վերլուծել այն սահմանագիծը, որ սերը բաժանում է անտարբերությունից: Ի՞նչ ենք գտնելու: Բացատրությունն՞ը: Իսկ հետո՞:

Ուրիշ մի հարց էր անհանգստացնում ինձ: Իսկ եթե Նիկոլը փոփոխամիտ, հեղհեղուկ մի կին էր պարզապես, հասարակ մի կին...Այս հավանականությունը նեղություն

պատճառեց ինձ: Ֆյուրկովը կարո՞ղ էր սիրած լինել անհոգի մի կնոջ, մի երեխա–կնոջ, որ մի քանի բառ է արտասանում օրվա ընթացքում, ձայնապնակներ լսում, պատկերազարդ ամսագրեր կարդում... Ո՛չ, ո՛չ, ես վանեցի այդ միտքը: Նայեցի Նիկոլին: Նրա անտարբերությունը նրան օժտում էր որոշ անհատականությամբ: Նա թվում էր ավելի հասունացած:

– Ուրեմն ի՞նչ ենք անում, – հարցրի:

– Ի՛նքդ որոշիր:

– Իսկ եթե որոշեմ մնա՞լ...

Նա մի պահ մտածեց, ապա ասաց.

– Ինչպես ուզում ես: Բայց...

Ձավարտեց իր միտքը:

* * *

Մեկ շաբաթից ի վեր այն տպավորությունն ունեի, որ ես անկոչ հյուր եմ: Զբաղեցրի առանձին մի սենյակ Վանիեի սենյակի կողքին: Չէի կարողանում վճռել ամեն ինչ թողնել ու հեռանալ: Երբեմն երբ տեսնում էի Նիկոլին, թե ինչպես է տարված լսում Վանիեին, կարծում էի, թե երազում եմ: Ոչ մեկ երկդիմի շարժում, ոչ մեկ կեղծապատիր վերաբերմունք նրանց միջև: Անսահման քնքշություն Վանիեի կողմից: Գիշերը յուրաքանչյուր ոք քաշվում էր իր սենյակը: Ես հետզհետե ավելի հաճախ էի գնում բարձրանում քարաժայռի վրա և անձնատուր լինում խոկումների: Մտածում էի Ֆյուրկովի մասին: Մի երեկո Վանիեն ինձ քաշեց տարավ զբոսայգի: Դեմքը լուրջ էր:

– Երկա՞ր ես մնալու մեզ հետ, – հարցրեց նա:

Պատասխանեցի շատ հանդարտ.

– Մոռանում ես, որ Նիկոլը երեխա է սպասում ինձնից:

– Գիտեմ, բայց քո ներկայությունը անհրաժեշտ չէ:

Ինչպե՜ս էր փոխվել: Որքան խոսում էր, ձայնն այնքան աղավաղվում եղծվում էր: Խոսակցության վերջում նա համարյա գայրացած էր:

– Մնում եմ, – ասացի:

Եվ ավելացրի.

– Մինչ այդ գնում եմ դեպի քարաժայռը:

Մեկնելիս նա նայեց ինձ՝ կկոցելով աչքերը, ասես ուզում էր կենտրոնանալ:

* * *

Այդ երեկոյան, երբ բռնել էի քարաժայռի ճանապարհը, այն տպավորությունն ունեցա, որ ինչ–որ մեկը հետևում է ինձ: Շարունակեցի հանգիստ ոտքով բարձրանալ: Այս զբոսապտույտը անհրաժեշտ էր դարձել ինձ համար: Ճանապարհի մի դարձվածքին կանգ առա և տեսա Վանիեին, որը իջնում էր վերևից որոշ ժամանակ ինձ հետևելուց հետո:

Մի՞թե ոչխարն արթնացել էր որպես դև:

Վանիեն, որ իր ամբողջ կյանքի ընթացքում մի ճանճի անգամ չէր վնասել... Վանիեն, որ օրինակելի կյանք էր վարում... Վանիեն, որին ատենակալ էին ընտրել...ի՞նչ մտքեր էր որոճում արդյոք:

Անսպասելի մի փոփոխություն էր կատարվել իմ մեջ:

Երջանիկ էի և հոգեպես խաղաղ: Նաև մի քիչ տխուր, երբ Նիկոլը անկողին էր մտնում: Զարմանքով նկատում էի, որ հաճախակի ժպտում եմ և խոսում ինքս ինձ հետ: Երբեմն արտասանում էի Ֆյուրկովի անունը և այն տպավորությունն էի ունենում, թե նա ինձ ներում է, որ գողացել եմ իր կնոջը:

* * *

Այս երեկո նա երկար ժամանակ հետևեց ինձ: Լսում էի նրա չոր հազի ձայնը: Ուզում էի նրան ասել, որ քայլի իմ կողքով, բայց ամեն անգամ, որ ետ էի դառնում, նա թաքնվում էր մի ծառի հետևում: Հասնելով դագաթին՝ իմ սովորության համաձայն նստեցի ժայռի վրա: Արդյոք այս երեկո՞ էր կատարվելու: Որոշ ժամանակ ոչ մի ուշադրություն չդարձրի նրա վրա: Երջանիկ էի և անջատված ամեն ինչից: Ուշ ժամին վերադարձա առանձնատուն: Նիկոլը քնած էր: Լսելով իմ վերադարձը՝ Վանիեն հանգցրեց լույսը:

* * *

Լուսինը կերպարանափոխում էր ժայռերը, որոնք ցցվում էին իմ ներքևում: Նա ձևավորում, կաղապարում էր դրանք: Ժայռերը նմանվում էին բարձերի: Զայրույթս անսահման օվկիանոսի վրա ծփացող մի բուռ փրփուրի պես էր: Հոգնած սպասում էի: Այն մարդիկ, որոնց սիրել էի, և այն իրադարձությունները, որ ապրել էի, մասնատվում, կազմալուծվում էին: Ես այլևս մաս չէի կազմում այս աշխարհին:

Զգում էի միայն անհուն մի հոգնածություն: Անհատակ հոգնածություն: Այնպիսի մի հոգնածություն, որ չէի փորձում նույնիսկ վերլուծել: Ամեն ինչ ինձ թվում էր պարզ և անօգուտ: Սերը, փողը, փառասիրությունը այնքան քիչ կարևորություն էին ներկայացնում, որքան այս ժայռը, այս ծառերը, այս լիճը: Ես դարձել էի սոսկ մի շունչ: Մի պարզ շնչառություն: Գոյություն էի ունեցել, և այլևս գոյություն չունեի: Փախչող ուսուպի հյուլեի նման մի շրջան էի կատարել պարզապես:

Հեռվից լսեցի Վանիեի չոր հազի ձայնը: Վերջապես թերևս այս երեկո էր կատարվելու: Ես ավելի մոտիկ պիտի լինեի Ֆյուրկովին: Հազի ձայները մոտեցան, հետո վերածվեցին խռպոտ մի հևոցի: Խեղճ Վանիե: Զգացի նրա երկու ճարպոտ և տաք ձեռքերը, որոնք ինձ հրում էին դեպի Ֆյուրկովը...

Վ ե ր ջ

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ - Բ

Վահե Քաչա

ԴԵՎԸ ԱՐԹՆԱՑԱՎ

Վեպ

Հրատարակչության
տնօրեն՝ Եզնիկ Արք. Պետրոսյան
Գեղ. խմբագիր՝ Ղևոնդ քահանա
Շապիկը՝ Ա. Գրիգորյանի
Էջադրումը՝ Լ. Սարգսյանի

Ս. Էջմիածին - 2008

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ